

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆԿԵՐԿԻՐ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

www.syuniacyerkir.am

Սյունյաց երկիր

50 տարի առաջ՝ 1970 թ. դեկտեմբերի 25-ին, շահագործման հանձնվեց Տաթևի հիդրոէլեկտրակայանի առաջին ագրեգատը, դեկտեմբերի 30-ին՝ մյուս երկու ագրեգատը, իսկ 2015 թ. մասնավորեցվեց Որոտանի հեկերի համալիրը

Տաթև հեկ-ը՝
հայկական
էներգահամակարգի
բաբախող սիրտը

Լուսանկարը՝ Արամ Արեղցյանի





2020թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՆ ԼՐԱՑԱԿ ՈՐՈՏԱՆ ՅԻՊՐՈՒԼԵԿԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐԻ ԱՌԱՋՆԵԿԻ՝ ՏԱԹԵՎ ՀԵԿ-Ի ԳՈՐԾԱՐԿՄԱՆ 50-ԱՄՅԱԿԸ:

ԱՐԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ. ««ԶոնթուրԳլուբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ն Հայաստանի հիդրոէներգետիկայի ոլորտի ամենամեծ արտադրողն է և լուրջ տեղ է զբաղեցնում համաշխարհային չափանիշներին համապատասխանող հիդրոկառույցների շարքում»

2020 թվականը «ԶոնթուրԳլուբալ Հիդրո Կասկադ» ընկերության համար նշանավոր էր նաև մեկ ուրիշ առումով՝ օգոստոսին լրացավ հինգ տարին այն ժամանակվանից, երբ «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» ՓԲԸ-ն անցավ նոր սեփականատիրոջ և վերածվեց նոր՝ «ԶոնթուրԳլուբալ Հիդրո Կասկադ» ՓԲ ընկերության:

Հոբեյանական և հիշարժան այդ տարեդարձների առիթով գրույց ունեցանք ընկերության գլխավոր տնօրեն Արա Հովսեփյանի հետ:

Արոն Հովսեփյան, նախ՝ շնորհավորում ենք Ձեզ և ի դեմս Ձեզ՝ «ԶոնթուրԳլուբալ Հիդրո Կասկադ» ՓԲ ընկերությանը, աշխատակազմին, վետերաններին՝ Տաթև հեկ-ի գործարկման 50-ամյակի եւ, իհարկե, Որոտանի հեկերի համալիրի մասնավորեցման 5-րդ տարեդարձի կապակցությամբ, մաղթում հաջողություններ:

– Շնորհակալություն շնորհավորանքի համար:

Շնորհակալ եմ նաև, որ մեր ընկերության հոբեյանը պատշաճ ուշադրության է արժանանում «Սյունյաց երկրի» կողմից:

– Հավանաբար Դուք այսօր՝ տարիների հեռվից, գնահատանքի և երախտագիտության խոսք ունեք՝ ուղղելու հեկ-ի եւ նախագծողներին, եւ հիդրոշինարարներին, եւ նախկին աշխատակիցներին, որոնց ջանքերի շնորհիվ ծնվեց Տաթև հեկ-ը և տասնամյակներ շարունակ ծանրակշիռ ներդրում ունեցավ մեր հանրապետության էներգետիկ համակարգում:

Շարունակությունը՝ էջ 12



Լուսանկարը՝ Արամ Արևիցյանի

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Տաթև հեկ. 20-րդ դարի գլխավոր կառույցը Սյունիքում, որը զգալիորեն փոխեց երկրամասի սոցիալ-տնտեսական նկարագիրը



ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
«Սյունյաց երկիր» թերթի գլխավոր խմբագիր, ՀՀ վաստակավոր լրագրող

«Սյունյաց երկիր» սույն համարը նվիրում ենք Տաթև հեկ-ի գործարկման 50-ամյակին և Որոտանի հեկ-երի համալիրի մասնավորեցման հիևագրորդ տարեդարձին:

Այդ հորեյանները նշելու ողջամիտ ժամկետը 2020-ի տարեվերջն էր, բայց Հայաստան աշխարհն այնպես էր այդ օրերին, ծնկաչոք վիճակում, համազգային սգի մեջ, ուստի և խոսք լինել էր կարող տոնական ինչ-ինչ միջոցառումների մասին:

Ու հիմա, թեև ուշացումով, պարտք ունենք անդրադառնալու ոչ միայն Սյունիքի, այլև ողջ Հայաստանի համար նշանակալից այդ իրադարձություններին:

Տաթև հեկ և Որոտանի հեկ-երի համալիր երևույթները մեզանում, խոստովանենք, յուրօրինակ ընկալումներ են ունեցել տասնամյակներ շարունակ և ունեն հիմա:

Նախ՝ համալիրի կառուցումը՝ սկսած Տաթև հեկ-ից, նախօրինակը չունեցող շինարարական երևույթ էր Սյունիքում, մեր ժողովրդի մտքի և ջանքի փայլատակման բացառիկ դրսևորում:

Կառույցում ընդգրկված էին հազարավոր շինարար բանվորներ, արհեստավորներ՝ բարագործ վարպետներ, որմնադիրներ, գործողներ, մեքենավարներ, նաև ճարտարագետներ և, իհարկե, նախագծողներ ոչ միայն Սյունիքից ու Հայաստանից, այլև Խորհրդային Միության ամենատարբեր անկյուններից, որոնք իրենց հետ բերել էին խորհրդային հիդրոէներգաշինության առաջավոր փորձը:

Գորիսի և Սիսիանի տարածաշրջաններում չկար մի բնակավայր, որտեղ եռուզեռ չլիներ՝ պայմանավորված այդ կառույցով: Չկար մի բնակավայր, որտեղից առնվազն մի քանի տասնյակ մարդ ընդգրկված չլիներ շինաշխատանքներում:

Տաթև հեկ-ի և համալիրի մյուս հեկ-երի կառուցմանը զուգահեռ երկրամասում ծնվեցին Շամբի, Որոտանի և Շինուհայրի բանավանները, որոնք, ի վերջո, վերածվեցին շեն ու բարեկարգ բնակավայրերի:

վայրերի:

Աշոտական, Տոլորս, Բորիսովկա (Ծղուկ) և Բազարչայ (Գորայք) գյուղերը, որոնց բուն տարածքը մնաց ջրամբարների տակ, տեղափոխվեցին մոտակա վայրեր և կառուցվեցին նորովի:

Մի քանի գյուղ դուրս եկան Որոտանի կիրճից և այլ դժվարամատչելի վայրերից ու կառուցվեցին նոր տեղերում (օրինակ՝ Խոտ, Շինուհայր):

Կառուցվեցին մի քանի տասնյակ կիլոմետր երկարության ավտոճանապարհներ, բազմաթիվ կամուրջներ, սոցիալ-տնտեսական և մշակութային նշանակության տասնյակ օբյեկտներ: Ճանապարհաշինության ուշագրավ օրինակ էր հատկապես Շինուհայր-Որոտան ավտոմայրուղին: Տարիների հեռվից, ճանապարհաշինական տեխնիկայի մեթոդային նվաճումների բարձունքից անգամ դժվար է պատկերացնել, թե ինչպես են մարդ արարածին այդպես հեզորեն հնազանդվել երկնաքեր ժայռերն ու անդնդախոր ձորերը:

Մանավանդ Գորիս և Սիսիան քաղաքներում թափ առավ պետական բնակարանային շինարարությունը, որն ուղեկցվում էր հանրային վայրերի կառուցապատմամբ:

Այդ ամենին համընթաց՝ երկրամաս էին մուտք գործում ճարտարապետական նոր ոճ ու արվեստ, որոնց հիմքում, բնականաբար, Սյունյաց աշխարհի ժողովրդական ճարտարապետության բազմադարյա հարուստ փորձն էր:

Շինարարության մեջ սկսեցին լայնորեն օգտագործել ժամանակաշրջանի ամենաառաջադիմական մեխանիզմներն ու շինարարական տեխնոլոգիաները՝ երկաթբետոնե կառուցվածքներ, քարի նորանոր տեսակներ և այլն:

Իր մասշտաբներով ապշեցնող էր թունելաշինությունը, ամբարտակների կառուցումը: Դրա ամենավառ օրինակը Շամբ-Խոտ թունելի շինարարությունն էր, որի միջով պետք է հոսեր Որոտան գետը. մոտ 19 կմ երկարությամբ թունելը շահագործման հանձնվեց 1969 թ. դեկտեմբերի

Շարունակությունը՝ էջ 47

”
Աշոտական, Տոլորս, Բորիսովկա (Ծղուկ) և Բազարչայ (Գորայք) գյուղերը, որոնց բուն տարածքը մնաց ջրամբարների տակ, տեղափոխվեցին մոտակա վայրեր և կառուցվեցին նորովի:

ԽՈՍՔ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԻ

«ՔոնթոլրԳլոբալ Յիդրո Կասկադ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն Արա Յովսեփյանին



ՄԵԼԻՔՍԵՐ ԴՈՂՈՍՅԱՆ
ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Յարգելի պարոն Յովսեփյան Տաթև հեկ-ի գործարկման 50-ամյակի կապակցությամբ շնորհավորանքս եմ հղում Ձեզ, ինչպես և «ՔոնթոլրԳլոբալ Յիդրո Կասկադ» ՓԲ ընկերության կոլեկտիվին, բոլոր վետերաններին, որոնց նվիրումի և ջանքի շնորհիվ կերտվել է եզակի այդ կառույցը, և տասնամյակների ընթացքում հյուսվել կասկադի բարի համբավը: Մաղթում եմ հետագա հաջողություններ ճայաստանի ճանապարհորդության էներգետիկ համակարգի կայունության ապահովման և, իհարկե, զարգացման գործում:

Տաթև հեկ-ի կառուցումը 20-րդ դարում մեր ավագ սերնդակիցների շինարարական ամենախոշոր և ամենավառ արարումներից էր Այունիքում:

1960-ականներին մեկնարկած շինարարական մեծածավալ աշխատանքները շարունակվեցին մոտ երեք տասնամյակ: Եվ Այունիքն ունեցավ Տաթևի, Շամբի ու Սպանդարյանի հիդրոէլեկտրակայանները, որոնք միասին դարձան Որոտանի հեկ-երի համալիր՝ ծանրակշիռ և վճռորոշ տեղ զբաղեցնելով ճայաստանի էներգետիկ համակարգում:

տեղ զբաղեցնելով ճայաստանի էներգետիկ համակարգում:

2015 թվականից հեկ-երի համալիրը՝ ի դեմս «ՔոնթոլրԳլոբալ Յիդրո Կասկադ» ՓԲ ընկերության, ունեցավ նոր սեփականատեր, որի ջանքերով էլ զարգացման նոր հանգրվան դուրս եկավ:

Յաճելի է տեսնել հիդրոսարքավորումների վերագինման-արդիականացման ուղղությամբ վերջին տարիներին իրականացված աշխատանքները. այդ նպատակով կատարվեց մոտ 70 մլն դոլարի ներդրում, ասել է թե՛ ընկերությունն ամենամեծ բիզնես ծրագիրն էր մերօրյա Այունիքում:

Գնահատելի է իրողությունը, որ ընկերությունը մարզի խոշորագույն գործատուներից է, իսկ մարդկային կապիտալը կասկադի ամենակարևոր արժեքն է:

Նկատելի են բնապահպանության ոլորտում ռիսկերի չեզոքացման ուղղությամբ տարվող աշխատանքները, ինչպես և ազդակիր բնակավայրերում իրականացվող սոցիալական ծրագրերը:

Չարգացման ներկայիս տեմպերը և որդեգրած արժեքներն ու սկզբունքները վստահություն են ներշնչում, որ «ՔոնթոլրԳլոբալ Յիդրո Կասկադ» ՓԲԸ-ն, իբրև միջազգային չափորոշիչներին համապատասխանող ընկերություն, այսուհետ ևս իր վճռորոշ ու առաջատար տեղը կունենա հանրապետության տնտեսության զարգացման գործում:

Միևնույն ժամանակ ակնկալում ենք, որ «ՔոնթոլրԳլոբալ Յիդրո Կասկադ» ՓԲ ընկերությունը հետայսու նույնպես Այունիքում ակտիվությամբ կիրականացնի սոցիալական, բնապահպանական և հոգևոր-մշակութային ծրագրեր՝ ուղղված մարզի առջև ծառայած խնդիրների լուծմանը:

” 1960-ականներին մեկնարկած շինարարական մեծածավալ աշխատանքները շարունակվեցին մոտ երեք տասնամյակ: Եվ Այունիքն ունեցավ Տաթևի, Շամբի ու Սպանդարյանի հիդրոէլեկտրակայանները, որոնք միասին դարձան Որոտանի հեկ-երի համալիր՝ ծանրակշիռ և վճռորոշ տեղ զբաղեցնելով ճայաստանի էներգետիկ համակարգում:

”

ԷՋԵՐ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ստորագրվել է «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» ընկերության գույքի առթուվաճառքի փոփոխված և լրամշակված պայմանագիրը



Վարչապետ Յուրայի Աբրահամյանի ներկայությամբ կառավարությունում 2015թ. հունիսի 8-ին ստորագրվել է «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» ընկերության գույքի առթուվաճառքի փոփոխված և լրամշակված պայմանագիր՝ Հայաստանի Հանրապետության, «Որոտան հիդրոէլեկտրակայանների համալիր», «Քոնթուր գլոբալ հիդրոկասկադ», «Քոնթուր գլոբալ տերրա հոլդինգս» և «Սի-Ջի սոլյուշնս գլոբալ հոլդինգս քամփնի» ընկերությունների միջև:

Փաստաթուղթն ստորագրել են ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարար Երվանդ Չախարյանը, «Քոնթուր գլոբալ հիդրոկասկադ» և «Քոնթուր գլոբալ տերրա հոլդինգս» ընկերությունների լիազորված անձ/ներկայացուցիչ, «Սի-Ջի սոլյուշնս գլոբալ հոլդինգս քամփնի» ընկերության գլխավոր գործադիր տնօրեն Ջոզեֆ Բրանդտը, «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» ընկերության գլխավոր տնօրեն Սատուն Խաչատրյանը:

Մինչ ստորագրման արարողությունը վարչապետ Յուրայի Աբրահամյանն ընդունել է «Սի-Ջի սոլյուշնս գլոբալ հոլդինգս քամփնի» ընկերության գլխավոր գործադիր տնօրեն Ջոզեֆ Բրանդտին: Կառավարության ղեկավարը ողջունել է

«Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» ընկերության գույքի առթուվաճառքի պայմանագրի ստորագրումը՝ որպես երկրորդ տնտեսական հարաբերությունների ամրապնդման ուղղությամբ կարևոր քայլ: Երկու երկրների տնտեսական կապերի ընդլայնման համատեքստում վարչապետը կարևորել է նաև մայիսին Վաշինգտոնում «Առևտրի և ներդրումների մասին շրջանակային համաձայնագրի» ստորագրումը, որը բարենպաստ պայմաններ է ստեղծում ներդրումների ներգրավման, ապրանքաշրջանառության և առևտրի խրախուսման համար:

Ջոզեֆ Բրանդտն անսխառեպ է համարել «Որոտան հիդրոէլեկտրակայանների համալիր» ընկերության գույքի առթուվաճառքի պայմանագրի ստորագրումը և ընդգծել, որ իրենք շահագրգռված են մեծածավալ ներդրումներ կատարել՝ Որոտան հիդրոէլեկտրակայանների համալիրի արդիականացման և լիարժեք գործարկման համար:

Կողմերը փոխադարձ շնորհակալություն են հայտնել արդյունավետ աշխատանքի համար և երկուստեք վերահաստատել կառուցողական ու թափանցիկ գործընկերությունը շարունակելու պատրաստակամությունը:

GOV.AM

«Քոնթուր-Գլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Արա Յուզեֆյանին



ՄԱՅԱԿԱՆ ՄԱՅԱԿԱՆՅԱՆ
«ԷԼԵԿՏՐՈԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՍՏԱԿԱՐԳԻ ՕՊԵՐԱՏՈՐ» ՓԲԸ ԳԼՆԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ

Տաթև հեկ-ը հանդիսանում է «Քոնթուր-Գլոբալ Հիդրո Կասկադ» երրորդ հեկ-ը, որը կազմում է Հայկական Էներգահամակարգի բաղկացուցիչ մասը: Կայանը ժամանակին հանդիսացել է Խորհրդային Միության ամենաբարձր ճշշումային կայանը: Թողարկումից հետո այն կարևոր տեղ է ունեցել Հայկական Էներգահամակարգի Էներգետիկ ռեժիմների կառավարման գործում:

Սկսած 1997 թվականից կայանն Իրանի և Հայաստանի միջև միջպետական 220 կՎ էլեկտրահաղորդման գծերով իրականացնում է փոխհոսքերի ավտոմատ կարգավորումը, ինչպես նաև Իրանի Էներգահամակարգից առանձնացված ռեժիմներում կարգավորում է Էներգահամակարգի հաճախակա- նությունը:

«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի ողջ անձնակազմի և անձամբ իմ անունից շնորհավորում ենք հիդրոկասկադի և առանձնահատուկ Տաթև հեկ-ի ողջ անձնակազմին՝ Տաթև հեկ-ի թողարկման 50-ամյակի կապակցությամբ: Ցանկանում ենք անվաթար և անխափան աշխատանք՝ ի բարօրություն հայ ժողովրդի և ի շահ Հայաստանի Հանրապետության:

//



Լուսանկարը՝ Արամ Արեխցյանի

«ԵՆԵՐԳԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒՄ» ԱՐԱՄ ԱՐԵՒՅԿՅԱՆ

Տաթև ԻԷԿ-ՈՒՄ նոր ժամանակներ են



ԱՐԱՄ ԱՐԵՒՅԿՅԱՆ

Մանագետները (և ոչ միայն) Տաթև ԻԷԿ-ը հայկական Էներգահամակարգի բաբախող սիրտն են համարում: Եվ դա պատահական չէ: Առանց այս կայանի դժվար է կարգավորել ռեժիմները հայկական Էներգահամակարգում: Հիդրոկայանը շահագործման է հանձնվել կես դար առաջ՝ 1970-ի դեկտեմբերին, բայց դրա Նախագծային աշխատանքները սկսվել էին 1954 թվականից, շինարարությունը մեկնարկել՝ 1961-ին: Այս Էներգաօբյեկտի պատմությունը ներկայացնելիս հավելյալ տեղեկու-

յուններ էինք ուզում քաղել ժամանակի մամուլից, բայց ոչ միշտ էինք հաջողության հասնում:

Նախ՝ Ազգային գրադարանի պահուցում փորձեցինք գտնել կառույցի բացման արարողության մասին որևէ հրապարակում հոդված, ռեպորտաժ կամ պարզապես լուր, որը մեզ չհաջողվեց: Կայանի ղեկավար Արամ Առուշանյանը բացատրում է, որ Տաթև ԻԷԿ-ի հանդիսավոր բացում (կարմիր ժապավեն կտրել, շամպայն բացել, վերամբարձ շնորհավորանքներ) չի եղել:

Կայանի գործարկման առաջին օրը հավանաբար եղել է դեկտեմբերի 22-ը,

» Կայանի շենքը տեղակայված է Որոտան գետի ձախ ափին, հաշվարկային ճնշումը 568,8 մետր է, ունի 3 ագրեգատ, 157,2 հազ. կՎտ ընդհանուր դրվածքային հզորություն:

Կառավարման վահանակի մոտ են Կամո Դավաթյանը և Սևադա Բաբախանյանը

երբ նախկին Խորհրդային Միությունում նշվում էր որպես էներգետիկ օր: Տաթև հեկ-ի տարածքում, ինչպես ներկայացնում են մեզ, նույնիսկ նորմալ բարեկարգում չի եղել, իսկ կայանի ղեկավարման սրահի ջեռուցումն ապահովվում էր փայտի վառարանով: «Այստեղ ոչ միայն լրագրող, այլև որևէ պաշտոնյա չի եղել, քանզի կայանը փորձարարական է եղել, իր տուրքինով և գեներատորով միակը տարածաշրջանում»:

Տաթև հեկ-ի մասնաշենքը Թասի ոլորանների ամենաբարձր կետից է աչքի գարնում, բայց դա, ինչպես ասում են, այսբերգի երևացող մասն է: Հեկ-ը համակարգի առաջնեկն է և ամենաբարձր ճնշումային էլեկտրակայանը համակարգում: Ճնշումային առումով կայանը առաջինն էր նաև նախկին ԽՍՀՄ-ում:

Կայանի հիմնական կառույցներն են՝

- Գլխամասային հանգույց
- Դերիվացիոն /թեքումային/ թունել
- ՕԿՋ և տուրբինային խողովակաշար
- Կայանային հանգույց:

Գլխամասային հանգույցի մեջ մտնում են պատվարը, Տաթև ջրամբարը, ջրընդունիչը և ջրթափ կառույցը:

Ջրամբարն ունի 13.6 մլն.մ³ տարողություն:

Ջրընդունիչը, որի հաշվարկային թողունակությունը կազմում է 25 մ³/վրկ:

Ջրթափ կառույցը բաղկացած է 6 թունելախորշերից և մարգարտածաղկի տեսք ունեցող ջրընդունիչից: Ընդհանուր բացթողունակությունը կազմում է 348 մ³/վրկ: Հիմնական ենթակառուցվածքները գետնի տակ են, մասնավորապես 18,4 կմ երկարությամբ ոչ ճնշումային թունելը, որով ջուրը հասնում է Խոտ գյուղի օրվա կարգավորման ջրավազան:

Փաստացի թողունակությունը 23 մ³ վրկ:


ՕԿՋ

Ջրավազանն ունի 85 հազ. մ³ տարողություն:

Ջրի բարձրագույն մակարդակը հասնում է 1306,54 մ: Ճնշումային ավազանը ունի 20 մ տրամագծով կլոր տեսք:

Այստեղից 1888 մետր ընդհանուր երկարությամբ ճնշումային խողովակաշարով ջուրը հասնում է կայան: Ներքին հորիզոնական տեղամասի վերջում խողովակաշարը բաժանվում է 3 մասի և յուրաքանչյուրը 11 մ³ /վրկ թողունակությամբ միանում է կայանի ագրեգատներին:

Հիդրոտուրբինը գործարկվում է շերտ-փավոր բանվորական անիվով, որը պայ-



Գավրուշա Աթայան, Տաթև հեկ-ի տնօրենի տեղակալ

հուստ՝ ռեգերվ, կարգավարի պահանջով տվյալ էներգիայի քանակությամբ կարողանում է ապահովել հանրապետության էներգահամակարգը: «Հայաստանի միակ կայանն է, որ վայրկյանների ընթացքում բեռը մինիմումից հասցնում է մաքսիմումի», – սա արդեն որպես հպարտություն է հնչում:

...Հիդրոկայանի տարածքում «Այոնյաց երկիր» լրագրողներին դիմավորում է Տաթև հեկ-ի տնօրենի տեղակալ Գավրուշա Աթայանը: Նրանից տեղեկանում ենք, որ հիդրոկայանի վերակառուցման վերազինման թիմում մեր այցելության օրը 21 հոգի է աշխատում, որից երկուսը՝ հերթափոխի օպերատոր: Հիմնական հաջողություններից մեկը կարելի է համարել այն, որ թիվ 3 Հ.Գ.-ի վերազինման աշխատանքները վստահվեց Տաթև հեկ-ի աշխատակիցներին, վերջիններս պատվով հանձնեցին աշխատանքը: Բնականաբար, մեզ հետաքրքրում է, թե վերազինումից հետո ինչ փոփոխություններ են լինելու հիդրոկայանում:

– Անվտանգությունն ու սարքավորումների հուսալիությունն է ավելանա-


մանավորված է ջրի բարձր ճնշմամբ:

Կայանի շենքը տեղակայված է Որոտան գետի ձախ ափին, հաշվարկային ճնշումը 568,8 մետր է, ունի 3 ագրեգատ 157,2 հազ.կվտ ընդհանուր դրվածքային հզորությամբ:

Օրվա յուրաքանչյուր ժամի Տաթև հեկ-ը հանդիսանում է էներգիայի պա-

CONTOURGLOBAL
Հիդրո կասկադ

ՏԱԹԵՎ ՀԷԿ	TATEV HPP
ՍՊՐՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՎՈՒՄ	1970
ՏԱՐԵՎՈՒՄԻ ԳՆԱԿ	157.2
ՍՊՐՈՒՄՆԱԿԱՆ ԳՆԱԿ	3
ՍՊՐՈՒՄՆԱԿԱՆ ԳՆԱԿ (մ)	552
ՏԱՐԵՎՈՒՄԻ ԳՆԱԿ (մ)	670000
ՏԱՐԵՎՈՒՄԻ ԳՆԱԿ (մ)	K461-B-186
ՏԱՐԵՎՈՒՄԻ ԳՆԱԿ (մ)	54.6
ՏԱՐԵՎՈՒՄԻ ԳՆԱԿ (մ)	11
ՏԱՐԵՎՈՒՄԻ ԳՆԱԿ (մ)	CB 375/195-12
ՏԱՐԵՎՈՒՄԻ ԳՆԱԿ (մ)	52.4
ՏԱՐԵՎՈՒՄԻ ԳՆԱԿ (մ)	500



Լուսավարձ՝ Արամ Արտեմյանի

Տաթև ԻԷԿ-ի մասնաշենքը Թասի ուղորանների ամենաբարձր կետից է աչքի զարնում, բայց դա ինչպես ասում են, այսբերդի երևացող մասն է: ՀԷԿ-ը համակարգի առաջնեկն է և ամենաբարձրագույն ճնշումային էլեկտրակայանը համակարգում: Ճնշումային առումով կայանն առաջինն էր ԽՍՀՄ-ում:



լու, ինչպես նաև էներգիայի արտադրման արդյունավետությունը նախատեսվում է բարձրացնել երեքից հինգ տոկոսով:

Այնուամենայնիվ, ընկերության տեխնիկական վերազինմանը մասնակցում են արտասահմանցիներ, բացի այդ Տաթև ԻԷԿ-ը ամերիկյան «Քոնյուրգուրբալ Հիդրոկասկադ» ընկերության սեփականությունն է, ձեռնարկության կարգավիճակի փոփոխությունը ոչ միայն թելադրում է նոր աշխատանք, կառավարման նոր ձևեր ու մոտեցումներ, այլև ենթադրում է տիրապետում անգլերենին: «Լեզվական խոչընդոտ կար, մեր հին աշխատողները դժվարանում էին անգլերենին տիրապետման առումով, երիտասարդների շրջանում այդ խնդիրն անհամեմատ արագ է լուծվում: Ինչ խոսք, հնարավոր չէ, որ ընկերության ամբողջ կազմը տիրապետի անգլերենին, ուստի խնդրել ենք ներկայացնել գրությունների ռուսերեն տարբերակը: Բայց դա չի նշանակում, որ ավարտել ենք ուսումնական պրոցեսը, սովորեցնում ենք երիտասարդներին, ավելի ենք կատարելագործում թիմը», – ներկայացնում է կայանի տնօրեն Արամ Առուշանյանը:



Արամ Առուշանյան, կայանի տնօրեն

Հիդրոկայան մտնողին առաջինը դիմավորում է «Նպատակը՝ դժբախտ պատահարների գրոյական ցուցանիշ» վերտառությամբ ցուցանակը, որից տեղեկանում ենք, որ 192 օր աշխատել են առանց պատահարի, վերջինս էլ տեղի է ունեցել Սպանդարյան ԻԷԿ-ում: Մեկ այլ ցուցանակից կարելի է իմանալ, թե տվյալ օրն ինչ աշխատանքներ են կատարվում, ով է հակահրդեհային անվտանգության պատասխանատուն, թե տվյալ պահին, որ մեխանիզմներն են գտնվում աշխատանքի մեջ, որպեսզի այցելուները

շրջանցեն տվյալ հատվածները և խուսափեն վտանգներից:

Կառավարման սրահում վահանակի մոտ հերթապահում են կայանի ամենափորձառու աշխատակիցները՝ Կամո Դալաթյանը (31 տարվա աշխատանքային կենսագրությամբ) և Սևադա Բաբախանյանը (27 տարվա աշխատանքային կենսագրությամբ): «Այստեղ հնարավոր չէ պատահական մարդ նստած լինի», – բացատրում են մեզ ուղեկցողները և հավելում, որ համակարգի մկնիկի օգնությամբ հնարավոր է գնետատորը մտցնել ցանց:

Շրջայցի ընթացքում վերազինման թիմի կողմից՝ մեքենայական սրահում երրորդ հիդրոգնետատորի առանցքակալի յուղի մակարդակաչափն էր տեղադրվում: «Որպեսզի սարքավորման աշխատանքի ընթացքում հեռավար եղանակով կարողանանք տեսնել, թե յուղի մակարդակն ինչպես է փոխվում», – մանրամասնում է Գավրուշա Աթայանը:

Ի դեպ, այս սրահում պատին ամրացված է վեց տոննա քաշ ունեցող բանվորական անիվը, որի շերտի մի հատված օտար մարմին վնասել է: Փոքրիկ տեղեկատվությունից իմանում ենք, որ բանվորական անիվն արտադրվել էր 1972 թվականին, ապամոնտաժվել՝ 1975-ին:

Վերազինման աշխատանքներն ավարտման փուլում են, ինչպես տեղեկացրին, մեկուկես, առավելագույնը՝ երկու տարում կայանն ամբողջովին կլինի նորացած:

Իսկ ամենավերջում կայանի տնօրենից հետաքրքրվեցինք սերնդափոխության մասին.

– Սերունդների հերթափոխությունը մեր հիմնասյուրներից մեկն է, – այսպիսի համեմատություն արեց մեր զրուցակիցը և շարունակեց, – քանի որ արդիական սարքավորումներ են արդեն տեղադրվել կայանում, իսկ միջին տարիքի և ավելի տարեց մարդկանց համար մի քիչ դժվար է յուրացնել նոր տեխնոլոգիան: Ուստի «Քոնյուրգուրբալ» խնդիր է դրել հնարավորինս արագ և սահուն իրականացնել սերնդափոխությունը, ինչը, անկասկած, նպաստելու է ընկերության արդյունավետ աշխատանքին: Ես էլ մի քանի անգամ առաջարկել եմ մեզ փոխարինող կարգեր պատրաստել, քանի որ հաղորդակցման խնդիր կա, ինչին էլ բախվեցինք կայանի տեխնիկական վերազինման ժամանակ: Եվ այդ հաղորդակցությունը, երբ չի ստացվում, կարող է հանգեցնել խնդրի սխալ լուծման, բացի այդ՝ մարդ վատ է զգում, երբ ուզում է միտքն արտահայտել և չի կարողանում:

Մի խոսքով՝ Տաթև ԻԷԿ-ում նոր ժամանակներ են...

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ



Դրվագներ Տաթև ԻԷԿ-ի Նախագծման պատմությունից

ՉՐՈՒՅՑԸ՝ «ՀԱՅԻՊՈՒՆԵՐԳԱՆԱԽԱԳԻԾ» ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏՆՕՐԵՆ ՀԱՍՄԻԿ ՓԱՆԱՆՉՅԱՆԻ ՀԵՏ



- Տիկին Փալանջյան, 50 տարի առաջ՝ 1970 թվականի դեկտեմբերին, շահագործման հանձնվեց Տաթև ԻԷԿ-ը: Մեզ հետաքրքրում են ԻԷԿ-ի կառուցման նախապատմությունը, նաև նախագծմանն առնչվող որոշ հարցեր: Բայց մինչ այդ կուզենայինք համառոտ պատկերացում կազմել «Հայհիպոնեերգանախագիծ» ինստիտուտի մասին, որը նախագծել է Տաթևի ԻԷԿ-ը:

– Նախ նշեմ՝ Այուլյաց աշխարհն իր գեղեցկությամբ բացարձակապես ֆանտաստիկ վայր է և առավել տպավորիչ է կիրճով հոսող Որոտան գետի վրա կառուցված՝ միմյանց հաջորդող

երեք հիպոնեերգետիկական կառույցով՝ Սպանդարյանի, Շամբի, Տաթևի հիպոնեերգետիկականների վիթխարի համալիրով:

...Հայաստանը գործնականում չունի Եներգետիկ հանածոներ. Էլեկտրաէներգիայի միակ աղբյուրը, չհաշված ոչ ավանդական աղբյուրները, ջրային Եներգապաշարներն էին:

Առավելագույն Եներգետիկ ներուժով օժտված են Հրազդան, Արաքս, Որոտան, Դեբեդ գետերը:

1930-ական թվականներին՝ Հայաստանի արդյունաբերությանը և գյուղատնտեսությանն Էլեկտրաէներգիայով ապահովելու համար անհրաժեշտություն էր առաջացել նախագծել և կառուցել

հզոր էներգետիկ օբյեկտներ՝ ջրի ռացիոնալ օգտագործմամբ: Խնդիր էր դրվել օգտագործել Հրազդան և Որոտան գետերի ջրային էներգիան...

Հայաստանի հիդրոէներգետիկայի կազմավորման և զարգացման պատմությունն անմիջականորեն կապված է «Հայիդրոէներգանախագիծ» ինստիտուտի պատմության հետ: Կազմակերպության առաքելությունը եղել և մնում է Հայաստանի հիդրոպաշարների յուրացումը՝ էներգետիկ, ոռոգման և բնապահպանական նպատակներով:

Առաջին հերթին սկսվեցին աշխատանքները Հրազդան գետի ավազանից: 1932 թ. Սևան-Հրազդան հիդրոէլեկտրակայանների համալիրի նախագծման համար Հայաստանում ստեղծվեց առաջին նախագծային կազմակերպությունը՝ «Հիդրոէներգանախագիծ»-ը՝ Ս.Ժուկի անվան «Հիդրոնախագիծ» համամիութենական ինստիտուտի հայկական բաժանմունքը, որը կոչված էր իրականացնելու հանրապետության հիդրոէլեկտրակայանների, բարձր լարման էլեկտրահաղորդման կառույցների նախագծման աշխատանքները: Բաժանմունքի գլխավոր ինժեների պաշտոնը ստանձնեց ակադեմիկոս հիդրոէներգետիկ Յ.Ա. Տեր-Աստվածատրյանը:

1961-1962թթ. «Հիդրոէներգանախագիծ» ինստիտուտի կողմից սկսվեց «Արփա-Սևան» բացառիկ հիդրոտեխնիկական համալիրի նախագծումը. նախատեսվում էր Արփա գետի ջրհոսքի մի մասի տեղափոխումը Սևանա լիճ (Սևանա լճի ջրային պաշարի վերադարձ): Նախագծի գլխավոր ճարտարագետն էր Յ.Ս. Սարգսյանը: Նախագծման աշխատանքում մեծ ավանդ ունի գլխավոր մասնագետ Կ.Ս. Գևորյանը. նա մինչև 2020թ. աշխատել է ինստիտուտում: «Հիդրոէներգանախագիծ» ինստիտուտը 1993թ. վերանվանվել է ՀՀ էներգետիկայի նախարարության նախագծահետախուզական և գիտահետազոտական «Հայիդրոէներգանախագիծ» ինստիտուտ, իսկ 2005 թվականին դուրս է եկել ՀՀ էներգետիկայի նախարարության ենթակայությունից և ներկայումս մասնավոր ՓԲ ընկերություն է:

– Ե՛րբ է ծագել Որոտան գետի վրա հիդրոէլեկտրակայան կառուցելու հարցը:

– Սյունիքի շրջանների արդյունաբերական զարգացման համար, որի կենտրոնում գտնվում են Կապանի պղնձի հանքավայրերը, անհրաժեշտություն էր առաջացել ստեղծել էլեկտրաէներգիայի այլ աղբյուրներ՝ ներմուծվող վառելիքի փոխարեն: Խոսքը Որոտան գետի վրա հիդրոէլեկտրակայաններ կառուցելու մասին էր, քանի որ Սևան-Հրազդան համակար-

գից այս տարածաշրջանի մատակարարումը ռացիոնալ չէր՝ էլեկտրահաղորդման գծի մեծ երկարության պատճառով: Մասնավորապես որ տարածաշրջանում առկա էին հիդրոէներգետիկ ռեսուրսների զգալի պաշարներ, որոնք էին Որոտան և Ողջի գետերի հնարավորությունները:

Որոտան գետը Հայաստանի բարձր լեռնային խոշոր գետ է. ավազանը գտնվում է Հայաստանի Հանրապետության հարավ-արևելյան մասում, հանդիսանում է Արաքս գետի ամենամեծ ձախակողմյան վտակներից մեկը: Ուստի և «Հիդրոէներգանախագիծ» կազմակերպության բաժանմունքի կողմից նախաձեռնվել էին Որոտան գետի ինժեներահետախուզական՝ հիդրոլոգիական, տեղագրական, երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները՝ գետի էներգետիկական հնարավորությունները բացահայտելու համար:

– Հետաքրքիր է, ինչո՞ւ հենց սկզբից հեկ-ը կոչվեց Տաթև հեկ, թեև Տաթևից բավական հեռու է և, կարելի է ասել, Տաթևի հետ կապ չունի...

– ՀԷԿ-ի անվանումը՝ Տաթև հեկ, կապված է Սյունիքի մարզի պատմամշակութային և հոգևոր գլխավոր կենտրոնի՝ Տաթևի վանքին առնչվող լեգենդներից մեկին՝ «տա-թև»: Տաթև հեկ կառույցը նույնպես շրջապատված է անդուղներով, կարծես՝ ճախրում է Որոտանի կիրճի վրա... Նման անվանում տալով, կարծում եմ, ընդգծվել է կառույցի եզակիությունը:

– Ովքե՞ր էին զբաղվում Տաթև հեկ-ի նախագծմամբ. կարծում եմք՝ արժե հիշել նրանց անուն առ անուն, և տարիների հեռվից հարգանք ընծայել:

– 1955թ. «Հիդրոէներգանախագիծ» ինստիտուտը ձեռնամուխ եղավ կազմելու Որոտան գետի հոսքի վրա կառուցվելիք համալիրի՝ էներգետիկայի և ոռոգման, օգտագործման, հիդրոէլեկտրակայանների՝ Տաթև, Շամբ, Սպանդարյան սիսեման:

1955թ. սիսեմայի համաձայն կազմվել է կասկադի առաջնեկի՝ Տաթև հեկ-ի նախագծային առաջադրանքը, իսկ 1956 թվականից, համաձայն հաստատված սիսեմայի, կազմվեցին Շամբ, Սպանդարյան հիդրոէլեկտրակայանների տեխնիկական նախագծերը: Սպանդարյան հեկ-ի նախագծի գլխավոր ճարտարագետն էր Թ.Կ. Յաղչյանը, Շամբ հեկ-ինը՝ Բ.Ս.Չոլոյանը:

1961 թվականին Տաթև հեկ-ի նախագծային աշխատանքները հասցվեցին ավարտին: Տաթև հեկ-ի նախագծի գլխավոր ճարտարագետներն էին Ա.Ս. Սարգսյանը, Գ.Ս. Ղազարյանը և Գ.Ռ. Գասպարյանը՝ մինչև հեկ-ի շահագործման հանձնելը:

– Ի՞նչ ասել է Տաթև հեկ. բուն հեկ, ջրամբար, թունելներ, ոռոգման համակարգ, բանավաններ, ճանապարհներ, սոցիալական այլ և բազում ենթակառուցվածքներ: Ճի՞շտ եմք ենթադրում:

– Որոտանի հիդրոէլեկտրակայանների համակարգը բաղկացած է երեք էլեկտրակայանից, որոնք տեղաբաշխված են Որոտան գետի վրա՝ Սյունիքի մարզի (Սիսիանի և Գորիսի շրջաններ) տարածքում և օգտագործվում են ինչպես գետի, այնպես էլ վտակների ջրերը:

Տաթևի հիդրոէլեկտրակայանը եզակի կառույց է: Այն Որոտանի հիդրոէլեկտրակայանների համակարգի առաջնեկն է՝ ամենաբարձր ճնշումային էլեկտրակայանն է և համակարգի 3-րդ աստիճանը: Ճնշումային առումով՝ ջրի մակարդակների տարբերությունը՝

1961 թվականին Տաթև հեկ-ի նախագծային աշխատանքները հասցվեցին ավարտին: Տաթև հեկ-ի նախագծի գլխավոր ճարտարագետներն էին Ա.Ս. Սարգսյանը, Գ.Ս. Ղազարյանը և Գ.Ռ. Գասպարյանը՝ մինչև ՀԷԿ-ի շահագործման հանձնելը:



600մ, կայանն առաջինն էր նախկին ԽՍՀՄ-ում: Բնութագրիչ առանձնահատկությունն այս կայանի շերտփավոր տիպի տուրբինն էր, որը առաջինն էր տեղադրվել նախկին ԽՍՀՄ տարածքում:

Տաթևի հեկ-ի կազմի մեջ են մտնում Տաթևի (Շամբի) ջրամբարը՝ 1.8 մլն մ³ օգտակար ծավալով, 13.6 մլն մ³ լրիվ ծավալով ստեղծված՝ Շամբի հեկ-ից ներքև Որոտան գետի վրա 41.0մ բարձրության հողային պատվարով և Լորաձոր գետի հոսքի՝ դեպի Տաթևի ջրամբար տեղափոխման կառույցներով:

Որոտան գետի տարեկան հոսքը՝ հաշվի առած նաև Լորաձոր գետի ջուրը, կազմում է 608 մլն մ³, որից 450 մլն մ³ օգտագործվում է Էներգետիկ և 79 մլն մ³ ոռոգման կարիքների համար:

Տաթևի հիդրոէլեկտրակայանի հիմնական կառույցներն են.

- գլխամասային հանգույց՝ պատվար, Տաթևի ջրամբարը, ջրընդունիչ,
- խրամուղային ջրահեռ «Մարգարիտկա» տիպի,
- դերիվացիոն անճնշում թունել,
- կայանային հանգույց՝ օրական կարգավորման ջրավազան (ՕԿՁ),
- տուրբինային ջրատար,
- հեկ-ի շենք:

– Եթե կարելի է, մի փոքր մանրամասնեք:

– Տաթևի հեկ-ի գլխամասային հանգույցը տեղակայված է Շամբ ավանի մոտ՝ 1.75 կմ ներքև Շամբ հեկ-ի շենքից: Ջրընդունիչ՝ երկաթբետոնե, երկու 2.5x2.5մ բացվածքի անցքերով՝ հաշվարկված 25 մ³/վրկ թողունակությամբ:

Ցրանետ կառույց.

- գլխամասը «Մարգարիտկա» - մարգարտածաղկի տեսք ունեցող հազվագյուտ ջրթափ կառույցով՝ հաշվարկված 216 մ³/վրկ մեծության վարարումների ելքի հեռացման համար,
- խրամուղային ջրահեռ՝ ուղղաձիգ խրամուղի 5.2 մ տրամագծի պլանում կցորդվում է 5.2 մ տրամագծի շինարարական թունելին:

Դերիվացիա՝ Տաթևի ջրամբարի ջրընդունիչից ոչ ճնշումային թունելով՝ 3.3x3.3մ կտրվածքի, 18.4 կմ երկարության, հաշվարկային 25 մ³/վրկ էլքը հասնում է օրվա կարգավորման ջրավազան (ՕԿՁ), որտեղից էլ տուրբինային խողովակաշարով՝ Տաթև հեկ:

Կայանային հանգույց. մոտեցնող ջրանցք, օրական կարգավորման ջրավազան (ՕԿՁ), տուրբինային ջրատար, ՅԷԿ-ի շենք:

Մոտեցնող ջրանցքը՝ 139մ երկարության, կապում է դերիվացիոն թունելին ՕԿՁ-ի ճնշումային ավազանի հետ, հաշվարկային թողունակությունը՝ 25 մ³/վրկ: Մոտեցնող ջրանցքի պատին նախատեսված է ոռոգման ջրթող դեպի ոռոգման ջրանցք:

Օրական կարգավորման ջրավազանը՝ 100 հազ.մ³ ծավալով երկաթբետոնե կառույց է, հարում է ճնշումային ավազանին: Այն 20.0մ տրամագծով, 14.6մ խորության աշտարակ է, որը հարում է տուրբինային ջրատարի խորքային ջրընդունիչին, սիֆոնային ջրթափին և վազիչին:

Տուրբինային ջրատար՝ 1885 մ ընդհանուր երկարության, 2.9-2.3մ տրամագծով, կազմված երկու հատվածամասից.

- 1185 մ երկարության վերգետնյա,
- 700 մ երկարության ստորգետնյա:

Տուրբինային ջրատարը վերջնամասում ճյուղավորվում է երեք մասի՝ ելնելով ագրեգատների քանակից: Տուրբինային ջրատարի մաքսիմալ հաշվարկա-

Տաթևի հիդրոէլեկտրակայանը եզակի կառույց է: Այն Որոտանի հիդրոէլեկտրակայանների համակարգի առաջնեկն է՝ ամենաբարձր ճնշումային էլեկտրակայանն է և համակարգի 3-րդ աստիճանը: ճնշումային առումով՝ ջրի մակարդակների տարբերությունը՝ 600մ, կայանն առաջինն էր ԽՍՀՄ-ում: Բնութագրիչ առանձնահատկությունն այս կայանի շերտփավոր տիպի տուրբինն էր, որը առաջինն էր տեղադրվել ԽՍՀՄ տարածքում:



յին էլքը կազմում է 33.0մ³/վրկ՝ ելնելով ՕԿՁ-ում էլքի դոտացիայից: ՅԷԿ-ի շենք. տեղակայված են երեք շերտփավոր տիպի ագրեգատ՝ յուրաքանչյուրը 54.6 հազ. կՎտ հզորության:

– Կուզենայինք իմանալ նաև Տաթևի հիդրոէլեկտրակայանի հիմնական (նախագծային) ցուցանիշների մասին:

– Հաշվարկային հզորություն՝ 157 ՄՎտ, հաշվարկային ճնշում՝ 552 մ, հաշվարկային էլք՝ 33.0 մ³/վրկ, էլեկտրաէներգիայի տարեկան արտադրանքը՝ 670 մլն. կՎտժ:

– Հետագայում փոփոխություններ, սրբազրումներ կատարվեցին՞ արդեն իսկ ընդունված հաստատված նախագծերում, թե՞ մինչև հիմա հեկ-ը գործում է նախագծային նույն լուծումների հիման վրա:

– 1993 թվականից սկսած՝ տարիներ շարունակ, «Հայիհիդրոէներգանախագիծ» ինստիտուտի կողմից իրականացվել են Որոտանի հեկ-երի համալիրի, այդ թվում՝ Տաթև հեկ-ի հիդրոտեխնիկական կառուցվածքների վերանորոգման-վերականգնման բանվորական նախագծերը. դերեվացիոն թունելի, դերեվացիոն ջրանցքի, հորանային ջրթափի, Տոլորսի հանգույցի գլխամասային հանգույցի՝ պատվար, ջրընդունիչ, խրամուղային ջրահեռ, վերգետնյա տուրբինային խողովակաշարի, տուրբինային ջրատարի ստորգետնյա հատվածամասի, օրական կարգավորման ջրավազանի:

– Ե՞րբ ավարտվեցին Տաթև հեկ-ի նախագծման աշխատանքները, որից հետո էլ, ենթադրում ենք, մեկնարկեց շինարարությունը:

– Տաթև հեկ-ի շինարարության սկիզբը 1962 թվականն էր, իսկ շահագործման հանձնվեց 1970 թվականին:

– Համառոտ բնութագրեք նաև Որոտանի հիդրոէլեկտրակայանի համակարգը:

– Բաղկացած է երեք էլեկտրակայանից (Սպանդարյան, Շամբ, Տաթև), որոնք տեղակայված են Որոտան գետի վրա՝ Գորիսի և Սիսիանի շրջանների տարածքում, որոնք օգտագործում են ինչպես գետի, այնպես էլ վտակների ջրերը: Հիդրոէլեկտրակայանների համակարգի գումարային տեղակայված հզորությունը կազմում է 404.2 ՄՎտ, տարեկան միջին նախագծային արտադրանքը՝ 1.16 մլրդ կՎտ ժամ:

– Շնորհակալություն գրույցի համար:

**ՀՐՈՒՅՑԸ՝
ՏԻԳՐԱՆՈՒՅԻ ԲԱՂԱՆԱՆԻ**

ԱՆՑԱԾ ՅԻՆԳ ՏԱՐՈՒՄ. ՅԵՏԱԴԱՐԶ ՀԱՅԱՑՔ

ԱՐԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ. ««ՔոնյութուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ն Հայաստանի հիդրոէներգետիկայի ոլորտի ամենամեծ արտադրողն է և լուրջ տեղ է զբաղեցնում համաշխարհային չափանիշներին համապատասխանող հիդրոկառույցների շարքում»



– *Պատերազմն այնպիսի երևույթ է, որ հանրապետության բոլոր ոլորտների վրա ազդեցություն է ունենում: Իսկ թե ինչ ազդեցություն կունենա էլէներգիայի սակագների վրա, չեմ կարող ասել: Իրոք, չեմ տիրապետում այդ դաշտի ամբողջական իրավիճակին: Մի բան է ստույգ՝ ինչքան տնտեսությունը թույլ լինի, էլէներգիայի սպառումն այնքան նվազ կլինի:*



Սկիզբը՝ էջ 2

– Ավելի քան 50 տարի է, ինչ շահագործվում է Տաթև հեկ-ը, որը Որոտանի կասկադի առանցքային հիդրոկայանն է, որովհետև Տաթև հեկ-ը ունի ոչ միայն էլեկտրաէներգիա արտադրելու գործառույթ, այլև հանրապետության էլեկտրամատակարարման համակարգի մեջ հաճախականության կարգավորման գործընթաց է իրականացնում, ինչը, ըստ էության, թույլ է տալիս շատ արագ արձագանքել օպերատորի պահանջներին, հեկ-ը շահագործման մեջ դնել շատ կարճ ժամանակամիջոցում և կարգաբերել ամբողջ հաճախականությունը համակարգում: Նախկին Խորհրդային Միության ժամանակներում հեկ-ը համարվել է էներգետիկական ոլորտի ադամանդներից մեկը, և այդ առումով շատ նշանակալի տարեդարձ է: Ափսոս, որ անցյալ տարի հասկանալի պատճառներով չկարողացանք ըստ արժանիքի նշել 50-ամյա հոբելյանը: Բայց փույթ չէ, ինչ-որ մի ժամանակ կնշանավորենք այդ տարեդարձը:

Իսկ մինչ այդ սրտանց շնորհավորում եմ ընկերության աշխատակիցներին, Տաթև հեկ-ի և ընդհանրապես Որոտանի հեկ-երի համակարգի վետերաններին՝ Տաթև հեկ-ի գործարկման 50-ամյակի, ինչպես և ընկերության մասնավորեցման 5-րդ տարեդարձի կապակցությամբ:

– **Պարոն Հովսեփյան, անցած տարիներին «ՔոնյութուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲ ընկերության և «Սյունյաց երկրի» միջև պահպանվել է համագործակցության սերտ մթնոլորտ, քանիցս լուսաբանել ենք ընկերության գործունեությունը:**

Սակայն կան հարցեր, որոնց պատասխանը ցանկալի է լսել նախևառաջ ձեզանից, ինչի համար և կարևորեցինք սույն հարցազրույցը:

Թեև նախկինում էլ առիթ է եղել ներկայացնելու «Որոտանի հեկ-երի համալիրի» ներկայիս սեփականատիրոջը, բայց հարկ ենք համարում կրկին լսել Ձեր խոսքը:

– Սեփականատեր ընկերությունը ոչ

թե անհատ է, այլ «ՔոնյութուրԳլոբալ» միջազգային ընկերությունը, որ հիմնադրվել է Ամերիկայի Միացյալ Նահանգներում, բայց 2016 թ. վերջից գրանցված է Լոնդոնի արժեթղթերի հիմնադրամում, որպես բաց բաժնետիրական ընկերություն,

Մինչև «ՔոնյութուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ գլխավոր տնօրենի պաշտոնը ստանձնելն Արա Հովսեփյանը մասնակցել է «Քոնյութուր Գլոբալ»-ի անունից ՀՀ կառավարության հետ բանակցություններին՝ Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիրի ձեռքբերման նպատակով:

Աշխատանքային գործունեությունը սկսել է ՀՀ արտաքին գործերի նախարարությունում՝ 1995 թվականից, որտեղից հեռացել է 2000 թվականին՝ դառնալով Միացյալ Թագավորության դեսպանատան Միջազգային զարգացման նախարարության (DFID) հայաս-

այսինքն՝ հիմնադրվել է մի տեղ (ԱՄՆ), գրանցված է մեկ այլ տեղ (Լոնդոն), և այսպես ասած՝ նաև անգլիական կապիտալի ներկայացուցիչ է: Ընկերությունը համեմատաբար երիտասարդ է, հիմնադրվել է 2004 թվականին, դեռ 20 տարին չի լրացել, բայց բավականին արագ տեմպերով առաջադիմում է, այժմ ունի մոտ հինգ հազար մեգավատտ ընդհանուր դրվածքային հզորություն, մոտավորապես 30 երկրում՝ չորս մայրցամաքում գործունեություն է ծավալում, ներդրումներ է կատարել և վերականգնողական էներգետիկայի, և ավանդական, և ֆորմալ էներգետիկայի ոլորտում:

– Փորձենք համառոտ ամփոփել «ՔոնթրոլԳլոբալ Յիդդո Կասկադ» ՓԲ ընկերության անցած հինգ տարվա գործունեությունը, գլխավոր արդյունքները:

Ձեզ հետ ունեցած նախորդ գործընկերից մեկում Դուք ընդհանուր գծերով նշել եք նոր սեփականատիրոջ մտադրությունները, ծրագրերը: Ինչպե՞ս է այդ ծրագրերը, նախանշումները որքանով կարողացաք կյանքի կոչել:

– Նախ՝ անխափան կարողացել ենք ապահովել Որոտան հիդրոկասկադի շարունակական աշխատանքը՝ ամենօրյա ռեժիմով, և երբևէ խափանում չի եղել էներգիայի արտադրության ու Հայաստանի էլեկտրացանցերին (ՀԵՑ) մատակարարման գործում, չնայած կայանների սարքավորումները հնացած են եղել, երբ ձեռք են բերել համակարգը: Ու հիմնական մեր առաքելությունը, երբ մասնավորեցման գործարքն արդեն կատարվել էր, ներդրումներ կատարելն էր, որ ողջ համալիրի սարքավորումներն արդիականացվեն:

Վերջին հինգ տարվա ընթացքում կարողացանք և՛ ընկերության անխափան աշխատանքը կազմակերպել, և՛ մեր ստանձնած պարտավորությունները կյանքի կոչել, այն է՝ ներդրումներ կատարել: 2017 թ. սեպտեմբերից սկսեցինք

ի կատարած էլեկտրամեխանիկական վերազինման ծրագիրը, որի արժեքը մոտ 51 միլիոն եվրո է, ֆինանսական աղբյուրը գերմանական KFW բանկն է, որը պետական, ֆինանսական հաստատություն է, և գումարը մեզ հատկացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության միջոցով: Այդ ծրագիրն այս տարվա հունիսի 30-ի դրությամբ հիմնականում ավարտված է:

Առ այսօր ինչ նպատակ դրել ենք մեր առջև՝ պատշաճ կատարել ենք: Իհարկե, անցյալ տարվա ֆորսմաժորային իրավիճակները՝ COVID և պատերազմ, ազդեցություն ունեցան մեր ծրագրի իրականացման ժամկետների վրա, այն պետք է ավարտելիք 2020 թ. նոյեմբերի 25-ին, բայց նշածս երկու հանգամանքի պատճառով հետաձգվեց: Այդուհանդերձ՝ ծավալների վրա այդ ամենը չազդեց, մի քիչ խախտվեց սարքավորումների ներդրման ժամանակացույցը: Ամեն դեպքում սարքավորումները ներդրվեցին և իրենց գործառնությունները կատարում են, շուտով կհասնենք լիակատար շահագործման:

Վերազինման ծրագիրը կարողացել ենք կատարել անընդհատ, անխափան աշխատանքային ռեժիմով: Դա բավականին բարդ գործընթաց էր:

– Վերջին տարիներին Հայաստանում այսպիսի մի մշակույթ է ձևավորվել, երբ խոսքը վերաբերում է հատկապես երբեմնի պետական ձեռնարկությունների մասնավորեցմանը. կատարված աշխատանքը չափել-նժարել նախևառաջ նոր սեփականատիրոջ ներդրումներով և ընդհանրապես ներդրումային քաղաքականությամբ: Ուստի և՛ որքան ներդրում է կատարվել ընկերությունում վերջին հինգ տարում ու հատկապես ո՞ր ոլորտներում, մասնավորապես որ ի սկզբանե ընկերության մասնավորեցումը ներդրումների ներգրավման բարենպաստ պայմանների ստեղծումով էր պայմանավորել Հայաստանի կառավարությունը:

րությունը:

– Վերը նշվածը միակ խոշոր ներդրումային ծրագիրն է: Բայց ընթացքում ամեն տարի՝ միջինը 5-7 մլն դոլարի չափով ներդրումներ ենք կատարել, ինչի շնորհիվ բարելավվում, արդիականացվում է արտադրությունը: Ընդհանուր առմամբ՝ այս պահի դրությամբ մոտ 70 մլն դոլարի ներդրում ենք կատարել՝ կասկադի մոդեռնիզացման, վերականգնման ուղղությամբ: Դա պայմանավորված է եղել հանրապետության կառավարության հետ ժամանակին ձեռք բերված համաձայնությամբ՝ գործարքի շրջանակում: Երբ 2015 թ. հուլիսի 8-ին ստորագրում էինք առաջ ու վաճառքի գործարքը՝ «Որոտանի հեկ-երի համակարգ» ՓԲ ընկերության ձեռք բերման մասին, մեր ստանձնած պարտավորությունն այն էր, որ 70 մլն դոլարի չափով ներդրում կատարենք: Եվ դա ոչ միայն կատարել ենք, այլ՝ գերակատարել...

– Վերոնշյալ երկու տարեդարձը հաճելի առիթ են անդրադառնալու հարցին՝ ի՞նչ է իրենից այսօր ներկայացնում «ՔոնթրոլԳլոբալ Յիդդո Կասկադ» ընկերությունն իր երեք հեկ-ով:

– «ՔոնթրոլԳլոբալ Յիդդո Կասկադը» խոշոր էներգետիկական կառույցի սեփականատեր է, որն արդեն հինգ տարում իր ձեռք բերած կառույցը հասցրել է միջազգային չափանիշներին՝ որոշեցրած էլեկտրական և մեխանիկական վերազինման շնորհիվ: Առաջիկա տարիներին նախանշված ներդրումները կհանգեցնեն նրան, որ ամբողջությամբ կկայանա՝ և՛ իր էլեկտրական-մեխանիկական սարքավորումներով, և՛ իր պատվարային ու ջրային կառույցներով, ինչպես նաև կայանները շահագործող անձնակազմով ու բարեկարգված այլ տարածքներով: Եվ լուրջ տեղ կզբաղեցնի համաշխարհային չափանիշներին համապատասխանող հիդրոկառույցների շարքում: Դա որպես նպատակ դրել ենք մեր առջև և հաստատուն քայլերով գնում ենք դրա իրականացմանը:

– Ձեր գլխավորած ընկերության երեք հեկ-ի կշիռը Հայաստանի Հանրապետության էներգետիկ հաշվեկշռում:

– Մոտավորապես 12-15 տոկոս է կազմում Հայաստանի ընդհանուր էներգետիկական հաշվեկշռում: Հիդրոէներգետիկայի արտադրությամբ ամենախոշորն ենք, տարեկան կտրվածքով երկու անգամ ավելի էլեներգիա ենք արտադրում, բան, ստեղծ, «Սևան» հիդրոկասկադը: Իսկ Հայաստանի հիդրոէներգետիկայի ոլորտում արտադրում ենք հանրապետության հիդրոէներգետիկայի մոտ 1/3-ը: Մի խոսքով՝ ոլորտի ամենամեծ արտադրողն ենք:

– Վերազինման, հիդրոսարքավոր

տանյան ներկայացուցչության առաջին տեղական ղեկավարը: Այնուհետև՝ 2006-2011թթ., եղել է ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավերներ» (ՀՄԿ) ծրագրի գլխավոր գործադիր տնօրենը:

2012 թ. տեղափոխվել է ղեկավարելու Ասիական զարգացման բանկի և ՀՀ կառավարության կողմից ֆինանսավորվող «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի կառուցման» ներդրումային ծրագիրը: 2013թ. մայիսին իր ցանկությամբ ևս հեռացավ այդ պաշտոնից՝ միանալով 1990 թվականից Հայաստանում ԱՄՆ ամենախոշոր մասնավոր ներդրումային գործարքի բանակցություններին՝ որպես

«ՔոնթրոլԳլոբալ» ընկերության գլխավոր ներկայացուցիչ:

Արա Գովսեփյանն ունի Վ. Բրյուսովի անվան Երևանի լեզվագիտական համալսարանի անգլերեն լեզվի և պատմության ֆակուլտետի բակալավրի դիպլոմ (1995թ.), Հայաստանում Ամերիկյան համալսարանի քաղաքագիտության և միջազգային հարաբերությունների մագիստրոսի դիպլոմ (1997թ.), ինչպես նաև Օքսֆորդի համալսարանի միջազգային հարաբերությունների և դիվանագիտության հետբուհական ասպիրանտական դիպլոմ (Oxford University, Exeter College, 1999):

րումների արդիականացման շնորհիվ, կարծում ենք, փոփոխություններ են կատարվել կամ կկատարվեն արտադրվող էլեկտրոնային ինքնարժեքում. եթե առևտրային գաղտնիք չէ՝ կուզենայինք իմանալ այդ մասին:

– Հիդրոսարքավորումների վերագինման-վերակառուցման նպատակն արտադրության հուսալիության բարձրացումն է, անխափան աշխատանքի ապահովումը, այսինքն՝ մենք փոխել ենք այն սարքավորումները, որ կայանների հիմնարման առաջին օրվանից գործում են և չեն փոխարինվել, միջինը՝ 40-50 տարվա վաղեմություն ունեն: Մեր ձեռնարկած տեխնիկական վերագինման նպատակը հենց սարքավորումների հուսալիության բարձրացումն է, այսինքն՝ տուրբոգեներատորային տնտեսությունը և տրանսֆորմատորները ևս 40-50 տարի հուսալիորեն կաշխատեն: Իսկ այդ ամենը դժվար թե ֆինանսատնտեսական հետևանքներ ունենա էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխության առումով, որովհետև վերագինման իմաստը և նպատակը դա չի եղել: Ի դեպ, մեր արտադրած էլեկտրաէներգիայի սակագինը մնում է ամենաեժաներից մեկը հանրապետությունում:

– Արցախյան երրորդ պատերազմի հետևանքով փաստորեն եականորեն կրճատվեցին ոչ միայն Արցախի Հանրապետության, այլև Հայաստանի Հանրապետության էներգետիկ հնարավորությունները: Ավելին՝ Հայաստանի որոշ կայաններ առաջիկայում ժամանակավոր դադար կառնեն՝ վերանորոգման պատճառով: Ասել է թե՛ մեզանում կառաջանա (և արդեն իսկ առաջացել է) էներգետիկ ռեսուրսների խնդիր:

Նման պայմաններում, բնականաբար, ավելի կմեծանա «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲ ընկերության դերը: Արդյո՞ք ստեղծված վիճակն անդադարձ կունենա Ձեր ընկերության սակագնային քաղաքականության վրա:

– Պատերազմն այնպիսի երևույթ է, որ հանրապետության բոլոր ոլորտների վրա ազդեցություն է ունենում: Իսկ թե ինչ ազդեցություն կունենա էլեկտրոնային սակագների վրա՝ չեմ կարող ասել: Իրոք, չեմ տիրապետում այդ դաշտի ամբողջական իրավիճակին: Մի բան է ստույգ՝ ինչքան տնտեսությունը թույլ լինի, էլեկտրոնային սպառումն այնքան նվազ կլինի: Եթե երկրի տնտեսությունը վերելք ապրի, ապա էլեկտրաէներգիայի սպառումն էլ կաճի, ինչը մեզ ձեռնտու է: Այդ դեպքում արդեն կարող ենք խոսել եւ առողջ տնտեսության, եւ էներգետիկ համակարգի զարգացման մասին:

– Որոտան գյուղի մերձակայքում, ավելի ճիշտ Գորիս-Կապան ավտո-

մայրուղու Գորիս-Որոտան հատվածում անվտանգային նոր իրավիճակ է 2020թ. նոյեմբերի 9-ից, ավելի ստույգ 2020թ. դեկտեմբերի 18-ից հետո, երբ հայկական մարտական դիրքերը նահանջելու հրաման ստացան, որի հետևանքով Որոտան գյուղը հայտնվեց սահմանային գյուղի կարգավիճակում, իսկ Գորիս-Որոտան մայրուղու մոտ 4 կմ հատվածը՝ Կուբաթլուի շրջանի Էյվազլար գյուղի վարչական տարածքում:

Նախ՝ ընկերության աշխատակիցներն ամեն օր անցնում են այդ ճանապարհով, մյուս կողմից՝ Տաթև հեկ-ը հայ-ադրբեջանական սահմանից մի քանի հարյուր մետր հեռավորության վրա է գտնվում: Եթե կարելի է, ի՞նչ նոր գործելակերպ էք որդեգրել անվտանգային այդ խնդիրները կարգավորելու համար:

– Մենք բացառել ենք գիշերային երթևեկությունը Տաթև հեկ-ից Գորիս և հակառակը: Այնպես ենք կազմակերպել, որ աշխատակիցները երթևեկեն միևնույն ժամանակում: Եվ, իհարկե, հնարավորության դեպքում քիչ լինի երթևեկությունը: Ճանապարհի, ինչպես և Տաթև հեկ-ի անվտանգությունն ապահովում են պետական համապատասխան մարմինները, կարծում եմ այդ խնդրում որևէ բան չի փոխվել:

– Կուզենայինք իմանալ, թե սեփականատերն ուրիշ ի՞նչ ծրագրեր է իրականացնում Հայաստանում և մասնավորապես Սյունիքի մարզում:

– Միայն նշված ուշագրավ ծրագրերը չէ, որ իրականացնում ենք: Սոցիալական ծրագրեր էլ ունենք՝ յուրաքանչյուր տարվա համար, որ իրականացնում ենք՝ մոտ 80-100 հազար դոլարի սահմաններում, նաև զանազան այլ ծրագրեր ենք իրականացնում տարբեր բնակավայրերում, հիմնականում նրանցում, որոնք մեր գործունեության շառավիղում են գտնվում: Ամենահետաքրքիրներից մեկն այն է, որ շուտով Գորիսում կբացվի Ամերիկյան համալսարանի կրթական կենտրոնը, որտեղ առաջին փուլում կմատուցվեն Ամերիկյան համալսարանի կարճաժամկետ նեղ մասնագիտական դասընթացներ, որը լավ սկիզբ կհանդիսանա Գորիսում և Սյունիքում Ամերիկյան համալսարանի հիմնավոր ներկայությունն ապահովելու համար: Իսկ ծրագրեր, իհարկե, իրականացվում են Գորիսի և Սիսիանի տարածաշրջաններում՝ հիմնականում սոցիալական բնույթի:

– Եվ, այդ բոլորով հանդերձ, կուզենայինք իմանալ ընկերությունում առկա խնդիրների, Ձեր հիմնական մտահոգությունների և, իհարկե, առկա մարտահրավերների ու ապագային միտված ծրագրերի մասին:

– Ինչ վերաբերում է առաջիկա անե-

լիքներին, ցանկանում ենք ծրագրեր իրականացնել արևից և բամուջ էներգիա ստանալու ոլորտներում: Գաղափարներ կան, որ ուզում ենք իրականացնել՝ երկրում ներդրումային իրավիճակից ելնելով... Շատ կարևոր է կառավարության հետ համագործակցությունը, և հույս ունենք, որ մոտ ժամանակներս կկարողանանք համաձայնության եզրեր գտնել, թե ինչպես առաջ շարժվել: Ամեն դեպքում մեր կողմից այդ հետաքրքրությունը կա: Որոշ ծրագրերի մասին չեմ ուզում այս պահին բարձրաձայնել:

– Վերջին տարում Հայաստանում հերթական անգամ գրանցված երկրաշարժերը վերստին հիշեցրին ոչ միայն մեր շինությունների, բնակչության, այլև (Նախևառաջ) հիդրոկառույցների անվտանգության ապահովման հույժ կարևորության մասին:

Հետևապես հետաքրքիր է ջրամբարների, թունելների սեյսմակայունությունը և առհասարակ պաշտպանվածությունը:

Ի դեպ, Գորիսում և Սիսիանում չեն մոռացել Շամբի ջրամբարի պատվարի վթարը՝ 1970-ին, Սպանդարյանի և Տուրոսի ջրամբարների վթարները՝ 1980-ականներին: Թեև դրանք այլ պատճառներ ունեին, բայց, միևնույն է, մարդիկ տեսան, թե որքան անդառնալի վնասներ բերեցին այդ վթարները Որոտանի կիրճին:

Հետաքրքիր է իմանալ ջրամբարների, կարգավորիչ ջրավազանի և թունելների անվտանգության ապահովման ուղղությամբ Ձեր գլխավորած ընկերության կատարած աշխատանքների և անելիքների մասին:

– Ընկերությունը կատարել է բոլոր պատվարների ուսումնասիրություն, նաև օրվա կարգավորման ջրամբարում, և պարզվել է՝ բոլորը սեյսմակայուն են: Սակայն, դրանով հանդերձ, նպատակ ունենք, ինչպես էլեկտրամեքենայական սարքավորումները, այնպես էլ պատվարային տնտեսությունն ու ջրամբարը համապատասխանեցնել միջազգային ստանդարտներին: Դա որոշ միջոցառումներ է ենթադրում այսինքն՝ պատվարի վիճակի մոնիթորինգային համակարգի արդիականացում և ավտոմատացում: Ասեմ նաև, որ նշված կառույցները սեյսմակայուն են, ուղղակի միջազգային ստանդարտներին համապատասխանեցնելը նույնպես որոշ ներդրումներ է պահանջում:

– Շնորհակալություն հարցազրույցի համար:

ՀԱՐՑԱԸՈՐՈՒՅՑԸ՝
ՏԻԳՐԱՆՈՒՅԻ ԲԱՂԱՆՅԱՆԻ ԵՎ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ

ԱՆՑԱԾ ՀԻՆԳ ՏԱՐՈՒՄ. ՀԵՏԱԴԱՐՁ ՀԱՅԱՑՔ

ԱՐԱՄ ՅՈԼՅԱՆ. «Հանրապետության Էներգետիկայում մեր ընկերությունը ծանրակշիռ դեր ունի»



**ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ «ՔՈՆ-
ԹՈՒՐԳԼՈՐԱԼ ՀԻՂՐՈ
ԿԱՍԿԱԴ» ՓԲ ԸՆԿԵ-
ՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹ-
ՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱՄ
ՅՈԼՅԱՆԻ ՀԵՏ**

«ՔոնթուրԳլոբալ Հիլդրո Կասկադ» ՓԲ ընկերությունը՝ տեղակայված հզորություններով, տարեկան միջին Նախագծային արտադրանքով, առաջնային տեղ է զբաղեցնում հանրապետության Էներգահամակարգում:
Հետադարձ հայացք ձգելով ընկերության հնգամյա գործունեությանը՝ ակնհայտ են դառնում ՓԲ-ում կատարված կառուցվածքային փոփոխությունները, ներդրված նոր աշխատատեղերը, որդեգրված նոր արժեքները, վարքագիծն ու սկզբունքները: Մեզ հետաքրքրող այդ և նման այլ հարցերի շուրջ է գրույցը ընկերության արտադրության ղեկավար

Արամ Յոլյանի հետ:

- Պարոն Յոլյան, Նախ՝ կուզենայինք ներկայացնեի՞ք Ձեր ընկերությունը:

– «ՔոնթուրԳլոբալ Հիլդրո Կասկադը» երիտասարդ, արագ զարգացող միջազգային «ՔոնթուրԳլոբալ» կազմակերպության մաս է կազմում, որը գործում է աշխարհի շուրջ երկու տասնյակ երկրներում՝ ձեռք բերելով և կառուցելով նոր բիզնեսներ վերականգնողական և ջերմային էներգետիկայի ոլորտներում:
Հայաստանում «ՔԳՀԿ»-ն մուտք է գործել 2015 թվականին՝ գնելով «Որոտան» կասկադը՝ հանձնառելով 60-ականների

հիմնված համայնքի արդիականացնել և մոտեցնել միջազգային չափանիշներին՝ ապահովելով տեխնիկական գոյությունն ու հուսալիությունը:

– Խնդրում ենք նկարագրել հիդրոկասկադի կառուցվածքը:

– Հիդրոկասկադը բաղկացած է երեք հիդրոկայանից՝ «Սպանդարյան», «Շամբ» և «Տաթև», 4 ջրամբարից՝ Սպանդարյան, Տաթև, Տոլորս, Անգեղակոթ և մեկ օրվա կարգավորման ջրավազանից: Հիդրոկասկադը տեղակայված է Հայաստանի հարավ-արևելքում, Որոտան գետի վրա և գետի ջուրն օգտագործվում է երեք կայանում հաջորդաբար՝ Էներգիայի արտադրության համար:

Արտադրության անձնակազմը հիմնականում բաղկացած է երեք կայանի շահագործման և սպասարկման թիմերից, որոնց օժանդակում են կենտրոնացված ինժեներական և վարչատեխնիկական բաժինները:

– Ընկերության տեխնիկական հնարավորությունների մասին ամբողջական պատկերացում կազմելու համար խնդրում ենք առանձին-առանձին ներկայացնել ընկերության հիդրոկառույցները:

– Կասկադը սկիզբ է առնում Սպանդարյան ջրամբարից, որը բազմամյա օգտագործման ջրամբար է և ունի 257 մլն խմ ծավալ: Սպանդարյան ջրամբարից ճշումային խողովակաշարով ջուրը հասնում է Սպանդարյան հեկ և աշխատեցնում հիդրոտուրբինները: Հաջորդը՝ 3.4 մլն խմ ծավալով Անգեղակոթի ջրամբարն է, որը ոչ ճշումային թունելով կուտակված ջուրն ուղղորդում է Տոլորսի ջրամբար, որի ծավալը կազմում է 96 մլն խմ:

Տոլորսի ջրամբարից ճշումային թունելով և խողովակաշարով ջուրն ուղղվում է դեպի Շամբ հեկ, որտեղ էլեկտրաէներգիա արտադրելով՝ լցվում է Տաթևի ջրամբար, որի ծավալն է 13.6 մլն խմ:

Տաթևից ոչ ճշումային թունելով ջուրը տեղափոխվում է Տաթև հեկ-ի օրվա կարգավորման ջրավազան, որի տարողություն է 85 հազ.խմ: Օրվա կարգավորման ջրավազանից ճշումային խողովակաշարով ջուրն ուղղվում է դեպի Տաթև հեկ, որտեղ էլեկտրաէներգիա արտադրելով՝ ջուրն առանց որակական և քանակական լուրջ փոփոխություններ կրելու՝ վերադարձվում է Որոտան գետ:

– Հիդրոկասկադի դերը Հայաստանի Էներգահամակարգում:

– Որոտանի կասկադը նշանակալի դեր ունի հայկական Էներգահամակարգում, 404 մվտ դրվածքային հզորությամբ և տարեկան 1,16 մլրդ կվտ.ժ նախագծային արտադրության հնարավորությամբ հիդրոկասկադը մասնակցում է ինչպես բազիսային, այնպես էլ պիկային էլեկտրաէներգիա արտադրելու գործընթացին:

Հիդրոկասկադի ազդեցությունների կառուցվածքը թույլ է տալիս մասնակցել էլեկտրահամակարգի կայունության ապահովման գործընթացին: Այն կատարում է համակարգի հաճախականության և Իրան-Հայաստան փոխհոսքի կարգավորման գործառնություններ:

– Մենք տեղյակ ենք, որ հիդրոկասկադում իրականացվում են վերագինման աշխատանքներ, ինչ կասե՞իք այդ մասին:

– Մեծ ուրախությամբ կուզենայի ներկայացնել, որ «ԲԳՀԿ»-ի կողմից ստանձնած պարտավորությունը՝ վերագինելու հիդրոկասկադի էլեկտրամեխանիկական սարքավորումները, հիմնականում ավարտին է հասցվել: Եվ հիմա ունենք ժամանակակից, հուսալի, արդյունավետ և անվտանգ համայնք: Արդեն մեկնարկել են հիդրոկառույցների անվտանգության բարձրացման և արդիականացման ծրագրերը:

– Ակնհայտ է, որ ընկերությունում մեծ նշանակություն և առաջնահերթություն է տրվում տեխնիկական անվտանգության հարցերին: Կունկրետ ի՞նչ միջոցառումներ են իրականացվել և իրականացվում այդ ուղղությամբ:

– Տեխնիկական գոյությունը և մարդկանց առողջությունը մեզ համար անչափ կարևոր են: Ունենք մեկ նպատակ, որ մեր ձևակերպմամբ կոչվում է գրոյական թիրախ, այն է՝ արտադրության ընթացքում ունենալ զրո աշխատաժամանակի կորստով պատահար:

Անվտանգ աշխատանքային միջավայրի ապահովումը մեր առաջնային նպատակն է, որի համար մեծածավալ կազմակերպչական և տեխնիկական միջոցառումներ են իրականացվում, մասնավորապես. իրազեկվածության բարձրացում դասընթացների, վարժանքների, քննությունների միջոցով: Նաև զգալի միջոցներ են ներդրվում աշխատանքա-

յին տեղամասերը և սարքավորումներն անվտանգ դարձնելու ու աշխատակիցներին ժամանակակից պաշտպանիչ միջոցներով ապահովելու համար:

– Վերջին տարիներին առերևույթ նկատվում են եղանակային փոփոխություններ մեր տարածաշրջանում նույնպես՝ մթնոլորտային տեղումների նվազման միտումով: Հետաքրքիր է էլեկտրիկայի արտադրման ծավալը կախված է դրանից, եական առաքելություն կա՞ ջրառատ և սակավաջուր տարիներին արտադրված էլեկտրիկայի քանակությունների միջև:

– Մեր հիմնական ռեսուրսը՝ ջուրը, ջրամբարներում կուտակվում է ձնհալքի և անձրևների արդյունքում, ուստի՝ այդ, կլիման մեծ ազդեցություն ունի հիդրոէլեկտրաէներգիայի արտադրության վրա: Երկար տարիների դիտարկումները ցույց են տվել, որ ջրառատ և սակավաջուր տարիները մեզ մոտ կրկնվում են ցիկլային տեսքով, որի ժամանակ արտադրության ծավալները համապատասխանաբար փոփոխվում են:

– Ակնհայտ է, որ «ՔոնյուրԳլոբալ Գրուպ» ՓԲ ընկերությունը Հայաստանի Էներգետիկ համակարգի առաջատարներից է: Ենթադրում ենք, որ (այդուհանդերձ) Ձեզ հետաքրքրում է ճյուղի առաջավոր փորձը ոչ միայն հանրապետությունում, այլև աշխարհի տարբեր երկրներում: Հաջողվո՞ւմ է համագործակցել ոլորտի առաջատար ընկերությունների հետ՝ աշխարհի մասշտաբով:

– Ինչպես նշեցինք, «ՔոնյուրԳլոբալ» միջազգային ընկերություն է և ունի էլեկտրակայաններ երեք տասնյակ երկրներում, որոնց հետ մշտապես սերտորեն համագործակցում ենք:

– Ի՞նչ կավելացնե՞իք ասվածին, որպես մեր գրույցի վերջաբան և ավարտ:

– «ՔոնյուրԳլոբալ Հիդրո Կասկադի» մուտքով Հայաստան՝ հանրապետության Էներգետիկայի բնագավառում բավականին լուրջ մշակույթ է ներդրվել, նշանակալի փոփոխություններ կան ոչ միայն աշխատանքային միջավայրի, աշխատապայմանները բարելավելու առումով, այլև աշխատանքի նկատմամբ մոտեցումներն են փոխվել: Նոր մշակույթ է ներդրվել: Օրինակ, երբ կորոնավիրուսի վարակը սկսվեց, շատ ընկերություններ հանկարծակիի եկան, որովհետև զինված չէին տեխնիկապես, իսկ «Քոնյուր Գլոբալում»՝ հեռավար աղորդակցության այդ մշակույթը ներդրվել էր շատ ավելի վաղ, որը մեզ հնարավորություն տվեց առանց ցնցումների հեռավար աշխատանք կազմակերպել:

**ՀԱՐՑԱԸՈՒՅՑԸ՝
ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆԻ**

Անվտանգ աշխատանքային միջավայրի ապահովումը մեր առաջնային նպատակն է, որի համար մեծածավալ կազմակերպչական և տեխնիկական միջոցառումներ են իրականացվում...



ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ, ՎԵՐԱԶԻՆՈՒՄ, ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ

Համակարգի վերազինում և արդիականացում. ահա ընկերության գլխավոր առաջնահերթություններից մեկը

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ «ԶՈՆԹՈՒՐԳԼՈՒՄ ԶԻՂՐՈՎ ԿԱՍԿԱԴ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԶԻՆՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՆՏԵՆՏԻՎՆԵՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԾՈՎ ԴԵԿԱՎԱՐ ԳԱԳԻԿ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՀԵՏ



«**Ք**ոնթուրգլում Զիղրոկ Կասկադ» ՓԲ ընկերության գլխավոր առաջնահերթություններից մեկը համակարգի արդիականացումն ու վերազինումն է, որը, աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելուց զատ, էական անդրադարձ է ունենում և կունենա աշխատանքի պաշտպանությանն ու անվտանգությանը, ինչպես և բնապահպանությանն ու շրջակա միջավայրի անադարտության ապահովմանը: Վերակառուցման, վերազինման ու արդիականացման ուղղությամբ կատարվող և կատարվելիք աշխատանքների մասին է զրույցը «Զոնթուրգլում Զիղրոկ Կասկադ» ՓԲ ընկերության վերազինման ծրագրի ինժեներատեխնիկական գծով ղեկավար Գագիկ Մկրտչյանի հետ:

– **Պարոն Մկրտչյան, վերակառուցման, վերազինման և ընդհանրապես համակարգի արդիականացման գործընթացն ընկերությունում սկսել է, որքանով տեղյակ եմք, 2017**

ՍՄՈՒՐՄԱՆ

Գագիկ Մկրտչյանի Մկրտչյան, ծնվել է 1952թ. Գորիս քաղաքում, ծառայողի ընտանիքում: Կրթությունը ստացել է Նախ՝ Գորիսի թիվ 1 միջնակարգ դպրոցում, հետո շարունակել Երևանի ֆիզմաթ. դպրոցում և ավարտել 1970-ին: Նույն տարում ընդունվել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի էլեկտրամեխանիկական բաժինը և ավարտել 1975 թվականին՝ ստանալով ինժեներ-էլեկտրիկի որակավորում: Աշխատանքային կենսագրությունը սկսել է «Չանգեզուրի էլեկտրական ցանցեր» ձեռնարկությունում՝ ռելեական պաշտպանության ավագ ինժեներ Շինուհայրի ենթակայանում: Երկու տարի աշխատելուց հետո տեղափոխվել է «Որոտանի հեկ-երի համակարգ»՝ սկզբում ավագ ինժեներ, իսկ հետո՝ վերանորոգման-պրոֆիլակտիկ բաժնի պետ: 1982-1991 թթ. աշխատել է Գորիսի «Գամմա» գործարանում, սկզբում՝ գլխավոր Էներգետիկ-մեխանիկ, իսկ 1985 թվականից՝ գլխավոր ինժեներ: 1992թ. աշխատել է «Որոտանի հեկ-երի համակարգ»-ում՝ գլխավոր ինժեների տեղակալ: 1997-2000 թթ. աշխատել է Գորիսի նորաբաց «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ում՝ գլխավոր ինժեներ: 2000թ. մայիս ամսից մինչև 2018 թվականն աշխատել է «Որոտանի հեկ-երի համակարգ» ՓԲԸ-ում՝ գլխավոր ինժեներ, իսկ մինչև այժմ «Զոնթուրգլում Զիղրոկ Կասկադ» ՓԲԸ-ում՝ վերազինման ծրագրի ինժեներատեխնիկական գծով ղեկավար: ԱԳԴ-ի վաստակավոր Էներգետիկ է, 2003 թ. պարգևատրվել է «Սևանիա Շիրակացի» մեդալով: Ամուսնացած է, ունի երեք զավակ:

թվականից՝ կապալառու երկու ընկերության հետ պայմանագիր կնքելուց ու նախապատրաստական աշխատանքների մեկնարկը տալուց:

Փորձենք ընդհանուր գծերով ամփոփել մինչև հիմա կատարված աշխատանքները:

– Վերագինման և վերակառուցման աշխատանքների սկիզբը կարելի է համարել 1994-1996 թթ., երբ ընկերության Տարև և Շամբ հեկ-երի հիմնական էլեկտրամեխանիկական սարքավորումների շահագործման ժամկետը սպառվում էր: Այդ ժամանակ կատարվեց առաջին արտաքին հետազոտությունը, և առաջարկների հիման վրա կազմվեց վերականգնման միջոցառումների պլանը: Հետազոտությունը կատարվել էր «Lahmeyer International» ընկերության կողմից և ընդհանուր ծախսերը գնահատվել 27,0 մլ ԱՄՆ դոլար: Ֆինանսական միջոցների բացակայության պատճառով ծրագիրը հետաձգվեց և հետագայում՝ 1999 թ. «Hagler Bailly» ընկերության կողմից շարունակվեց՝ հիմք ընդունելով նախորդ գնահատումը, լրամշակելով աշխատանքների ծավալը՝ ներառելով բնապահպանական պահանջները: KfW Գերմանական բանկի պատվերով «Fichtner» ինժեներական ընկերությունը 2007 թ. սկսում է երեք հեկ-ի էլեկտրամեխանիկական սարքավորումների վերականգնման աշխատանքների հետազոտումը և գնահատումը, որը կազմել է 51.0 մլ եվրո: Հետազոտությունները և նախնական նախագծերի ու մրցույթի ամբողջ փաթեթի պատրաստման աշխատանքներն ավարտվում են 2012թ-ին: 2015թ. տեղի է ունենում ընկերության վաճառք, որի պատճառով վերականգնման աշխատանքների մրցույթը տեղի է ունենում 2017թ.: Բացի նշված ընկերություններից՝ աշխատանքների խորհրդատվությունը և հսկողությունն իրականացնում է «Fichtner» ինժեներական ընկերությունը:

– Կարո՞ղ ենք արձանագրել, որ վերագինման ու վերակառուցման քաղաքականությունը, որ առաջնահերթություն էր հռչակվել ընկերության մասնավորեցման ժամանակ, շարունակում է մնալ իբրև առաջնահերթություն:

– «ՔոնյորոԳրբալ Հիդրո Կասկադ» ընկերությունում վերականգնման և վերագինման աշխատանքները նախատեսվում են ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ ծրագրերով: Հիմնական ուղղությունները աշխատանքի պաշտպանությունն է, բնապահպանությունը, անվտանգությունը, սարքավորումների հուսալի և անխափան շահագործումը: Ուշադրության կենտրոնում են հիմնական հիդրոէներգետիկական կառույցները և սարքավորումները, նրանց անվտանգությունը և շահագործման հու-

սալիությունը:

– Արդիականացումը, ժամանակի հետ համահունչ բայելը, գիտության և տեխնիկայի նվաճումներին հարողակից լինելը, անշուշտ, կարևոր պահանջ են տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում: Բայց հիդրոէներգետիկայի բնագավառում, կարծեք, որոշակի առանձնահատկություններ կան: Ուստի և կուզենայինք իմանալ՝ ի՞նչ կոնկրետ նպատակներ է հետապնդում վերագինումն ու վերականգնումն ընկերությունում:

– Հիդրոէներգետիկայի բնագավառում արդիականացումն ունի իր առանձնահատկությունն այն տեսակետից, որ հիմնական կառույցների, շենքերի և հիդրոտուրբինների տեղակայումը փոփոխման ենթակա չէ, կամ դա ենթադրում է հսկայական կապիտալ ներդրումներ: Մեր դեպքում նպատակ էր դրվել փոխարինել ծառայության ժամկետը սպառած բոլոր էլեկտրամեխանիկական սարքերն ու սարքավորումները, վերացնել շահագործման ընթացքում ի հայտ եկած նախագծային սխալներն ու թերությունները: Օգտագործելով արդիական նոր տեխնոլոգիաները և սարքավորումները՝ կապահովենք կասկադի հեկ-երի հուսալի, ավելի արդյունավետ և անխափան աշխատանքը տասնյակ տարիներ:

– Զիչ առաջ համառոտ ամփոփեցինք կատարվածը: Որպեսզի դա առավել հասկանալի լինի, կուզենայինք անդրադարձ կատարել կատարված աշխատանքներին՝ ըստ հեկ-երի:

– Կատարված աշխատանքներն ըստ հեկ-երի հետևյալ պատկերն ունեն.

Տարև և հեկ.

- փոխարինվել են երեք գեներատորի ստատորի ակտիվ մետաղը և փաթույթները, ռոտորի բևեռի փաթույթները, գրգռման համակարգը, առանցքակալների և գեներատորի հովացուցիչները, ռելեական պաշտպանության և ղեկավարման համակարգերը, գեներատորային անջատիչները, սեփական կարիքների ուժային և չափման տրանսֆորմատորները, 0,4 կՎտ սնուցման բոլոր վահանները,
- փոխարինվել են տուրբինային ծայրափողակները, յուղաճնշման պոմպերը, առանցքակալի հովացուցիչները:
- փոխարինվել են հաստատուն հոսանքի սնման համակարգը, ընդհանուր հովացման սխեման, տեղադրվել 250 կՎտ հզորության դիզել-գեներատոր և ընդհանուր կայանային սնման-տրանսֆորմատոր ավտոմատ փոխարինման վահանով,
- ամբողջությամբ փոխարինվել են 110 կՎտ ԲԲՍ-ի նախկին սարքավորում-

ները, տեղադրվել են նոր 110 կՎտ երեք անջատիչ, հոսանքի և լարման տրանսֆորմատորներ, օդային գծերի և ուժային տրանսֆորմատորների ղեկավարման ու ռելեական պաշտպանության համակարգեր,

- փոխարինվել է գնդային փականների ղեկավարման համակարգը,
- վերանորոգվել է Տարևի ջրամբարի ջրընդունիչի վերամբարձ կոռնկը՝ փոխարինելով չորս փականները նորով:

Շամբ հեկ

- փոխարինվել են երկու գեներատորների ստատորի ակտիվ մետաղը և փաթույթները, ռոտորի բևեռները, գրգռման համակարգը, առանցքակալների և գեներատորի հովացուցիչները, ռելեական պաշտպանության և ղեկավարման համակարգերը, գեներատորային անջատիչները, սեփական կարիքների ուժային տրանսֆորմատորների 0,4 կՎտ սնուցման բոլոր վահանները, հոսանքի և լարման չափիչ տրանսֆորմատորները,
- փոխարինվել են տուրբինի ուղղորդ սարքն ամբողջությամբ, բանվորական անիվները, թիվ 1 ազդեցատի տուրբինի լիտեռը, ջրթող կոնը, առանցքակալների հովացման համակարգը, յուղաճնշման պոմպերը,
- փոխարինվել են երկու տուրբինի արագության կարգավորիչներ,
- տեղադրվել է 40 մթն. ճնշման օդի նոր համակարգ՝ երկու օդի կոմպրեսորով,
- փոխարինվել են հաստատուն հոսանքի սնման համակարգը և մարտկոցները,
- տեղադրվել են 250 կՎտ հզորության դիզել-գեներատոր և ընդհանուր կայանային սնման ավտոմատ փոխարինման վահան,
- տեղադրվել է դրենաժային ջրերի պոմպերի համակարգ, փոխարինվել է գնդային փականների ղեկավարման համակարգը,
- վերանորոգվել են տուրբինի ջրազրկման ամբարձիչը և փականները,
- ամբողջությամբ փոխարինվել են 220 կՎտ ԲԲՍ-ի բոլոր էլեկտրական սարքավորումները՝ չորս հատ անջատիչ, չորս հատ լարման և հոսանքի տրանսֆորմատոր, տասնչորս հատ բաժանիչ, մալուխները, նորոգվել են մալուխային խրամատներն ու սարքավորումների տեղադրման հիմքերը,
- փոխարինվել են ուժային տրանսֆորմատորների և օդային գծերի ղեկավարման և ռելեական պաշտպանության սարքերը, հիդրոագրեզատների ղեկավարման համակար-

զը:

Սպանդարյանի հեղ

- փոխարինվել են երկու տուրքինի արագության կարգավորիչներ, փոխարինվել են յուղաճնշման սարքի պոմպերը, տեղադրվել է տուրքինի ղեկավարման համակարգ,
- տեղադրվել են հիդրոագրեգատի և ուժային տրանսֆորմատորի ղեկավարման և ռելեային պաշտպանության սարքեր,
- փոխարինվել են 220 կՎտ օդային գծերի ռելեական պաշտպանության սարքերը,
- փոխարինվել են ԲԲՄ-220 կՎտ բոլոր սարքերը, այդ թվում՝ երեք անջատիչ, չորս լարման սահմանափակիչ, տասներկու բաժանիչ, երկու լարման և երեք հոսանքի տրանսֆորմատոր: Տեղադրվել է նոր հիբրիդային չորրորդ անջատիչ:

– Անշուշտ, ընկերության երեք հեկ-ում կատարվող աշխատանքները թանկ հաճույք են: Եվ օրինաչափ հարց է առաջանում՝ ֆինանսական ի՞նչ միջոցներով ու հնարավորություններով են կյանքի կոչվում այդ ծրագրերը:

– «Ձեռնարկվող Չիդրո Կասկադ» ընկերության էլեկտրամեխանիկական սարքավորումների վերականգման ծրագիրն ամբողջությամբ ֆինանսավորվում է գերմանական KFW բանկի վարկային միջոցներով, որը տրամադրվել է 2012թ.: Այդ ֆինանսավորմամբ իրականացվել է մրցույթի նախապատրաստման, իրականացման աշխատանքների կատարումը՝ ներառելով խորհրդատվական ծախսերը: Ինչպես արդեն նշել եմ՝ վարկի չափը կազմել է 51 մլ եվրո: Ընկերությունը երկարատև շահագործման ընթացքում կուտակել էր նույնչափ ֆինանսական միջոցներ, որն օգտագործվում էր նախարարության կողմից և ուղղվում այլ ընկերությունների կարիքների ուղղությամբ:

– Արդիականացում, վերագինում, վերականգնում... Դրանք շատ տարրողունակ հասկացություններ են, և կարծում եմ՝ այդ աշխատանքները ծրագրելուց ու ի կատար ածելուց առաջ պետք է քաջածանոթ լինել ոլորտի նվաճումներին, առաջավոր տեխնոլոգիաներին աշխարհի մասշտաբով: Որքանով է դա ձեզ հաջողվում, հատկապես ո՞ր երկրների սարքավորումներին եք նախապատվություն տալիս: Արդյո՞ք ռուսական տեխնոլոգիաները դիմանում են մրցակցությանը. նկատի ունե՞նք, որ երեք հեկ-ն էլ ժամանակին գլխավորապես կառուցվել են խորհրդային կոչվող ռուսական տեխնոլոգիաներով:

– Վերագինման, արդիականացման

և վերականգման աշխատանքների իրագործումն ընդհանուր առմամբ բարդ ու ժամանակատար պրոցես է և այն ինքնակատակ չի կատարվում: Նմանատիպ աշխատանքային ծրագրերի համար հիմք են հանդիսանում այդ նպատակով իրագործված հետազոտություններն ու շահագործման արդյունքում ստացված տեխնիկատնտեսական տվյալների ուսումնասիրությունը: Նման կարգի խնդիրների առկայության դեպքում միջազգային մրցույթով ընտրվում է ինժեներական ընկերություն, որը տիրապետելով արդիական տեխնոլոգիաներին և նվաճումներին՝ տրամադրում է ծրագրի փաթեթ՝ նշելով աշխատանքների ծավալը, ժամանակացույցը և ֆինանսավորման չափը: Ծրագրերի մրցույթի կազմակերպիչները նախօրոք հղում չեն անում սարքավորումներն արտադրող երկրին, այլ նշում են անհրաժեշտ տեխնիկական պայմանները, որոնք դեպքում չի բացառվում ռուսական սարքավորումների ներգրավումը:

– Արդիականացում, վերագինում... Մենք խոսեցինք ընկերությունում այդ ուղղությամբ իրականացվող քաղաքականության, նպատակների, կատարված աշխատանքների մասին: Միզուցե և վաղ է անդրադառնալ նոր տեխնոլոգիաների արդյունավետությանը, քանի դեռ ծրագրերն ավարտին չեն հասցվել ամբողջապես: Բայց և չենք կարող չհարցնել՝ նոր տեխնոլոգիաներն արդյունավետությամբ արդարացնո՞ւմ են իրենց, ավելի կոնկրետ՝ արդարացվո՞ւմ են ձեր սպասելիքները, թե՞...

– Էլեկտրամեխանիկական սարքավորումների վերականգնման ծրագրի նախնական փուլում նոր սարքավորումների տեխնիկական տվյալները եղել են պահանջված և ներկայացված նախագծերում հաստատված: Այսօր արդեն ունենք ավարտված աշխատանքներ, որոնք հիմք են տալիս ասելու՝ սպասված արդյունքները համապատասխանում են նախագծային տվյալներին: Ամբողջական արդյունքների ամփոփումը կկատարվի այս տարվա մայիս-հունիս ամիսներին: Նշանակալի արդյունք ենք արձանագրել հատկապես Շամբ հեկ-ի թիվ մեկ հիդրոտուրբինի թողարկումից հետո:

– Որքանով հայտնի է՝ վերագինման-վերականգնման ընթացքում, կամա-ակամա, ի հայտ են գալիս լրացուցիչ խնդիրներ, հավելյալ հարցեր: Նախ՝ ի՞նչ ծավալ ունեն այդ խնդիրները և, արդյո՞ք դրանք անդրադարձել և անդրադառնում են նախապես ծրագրավորվածին, ժամանակացույցին և մյուս հարցերին:

– Նման ծրագրերի ընթացքում հնարավոր չէ բացահայտել ամբողջական աշխատանքների լրիվ ծավալը, և միշտ էլ լի-

նում են չնախատեսված աշխատանքներ, որոնք հայտնաբերվում են ընթացքում: Դրանք հիմնականում հին դետալների մետաղների հոգնածության պատճառով են կամ չափերի չհամապատասխանությամբ: Այս բոլորը հայտնաբերվում են գնման և հետազոտությունների արդյունքում: Նմանատիպ աշխատանքներից կարող եմ նշել, օրինակ, գեներատորների ռոտորի սկավառակների և բևեռների միացման հանգույցում մետաղների ճաքերի առկայությունը, որոնք վտանգում էին հիդրոգեներատորի հուսալի աշխատանքը թափառքի ժամանակ: Ծրագրի ընթացքում փոխարինվել են՝

■ Շամբ հեկ-ում՝ գեներատորների նշված հանգույցները, իսկ Տաթև հեկ-ի համար նախատեսվել է իրականացնել 2021-2022 թթ.:

Նմանատիպ աշխատանքների կատարման համար ծրագրով նախատեսված էր միջոցներ և դրանք հիմնականում ուղղվել են այդ ուղղությամբ, Տաթև հեկ-ի ռոտորի վերականգնման աշխատանքները կֆինանսավորվեն սեփական միջոցներից:

Լրացուցիչ աշխատանքները հիմնականում չեն ազդել ծրագրի ժամանակացույցի վրա, այս տեսակետից խոչընդոտ են եղել կորոնավիրուսը և պատերազմական դրությունը:

– Նոր տեխնոլոգիաների հեռանկարայնությունը. ենթադրում եմ, որ արդիականացման պատճառներից մեկը 40-50 տարի առաջ ներդրված սարքավորումների ֆիզիկական և բարոյական մաշվածությունն է, օգտագործման ժամկետի լրանալը, որ սովորաբար սահմանվում է ի սկզբանե: Ասել է թե՞ որքանով են հեռանկարային (ուսու. ժամկետի, երկարակյանության, հուսալիության առումով) նոր տեխնոլոգիաները, արդյո՞ք ոչ հեռու ապագայում տեխնիկական նոր սերնդափոխության խնդիր չի ծառանա ընկերության առջև:

– Նոր տեխնոլոգիաների ներդրումը միշտ էլ արդիական է, բայց հիդրոէներգետիկայում նրանց ինտեգրան մեծ է: Այս ծրագիրը նախատեսում է փոխարինված սարքավորումների 25-30 տարվա հուսալի և անխափան աշխատանք: Այդ ընթացքում չեն բացառվում մասնակի փոփոխություններ՝ կապված ղեկավարման և պաշտպանական համակարգերի արդիականացման հետ:

– Ներկայումս ի՞նչ աշխատանքներ են կատարվում քննարկվող ոլորտում և ընդհանրապես՝ կատարվելիք աշխատանքների մասին կուզենայինք իմանալ:

– Ծրագրով նախատեսված աշխատանքներից այս պահին կատարվում են Շամբ հեկ-ի թիվ 2 հիդրոագրեգատի հա-

վաքման, ԲԲՍ-220 կՎտ սարքավորումների մոնտաժման, թիվ 2 ուժային տրանսֆորմատորի նորոգման, Տաթև հեկ-ի թիվ 3 հիդրոագրեգատի հավաքման և թողարկման աշխատանքները:

– **Ենթադրում ենք, որ վերազինման-վերականգնման աշխատանքներն իրականացվում են տվյալ տեխնոլոգիաներն արտադրող տարբեր երկրների կազմակերպությունների հետ, նրանց մասնագետների միջոցով: Մի քանի խոսք այդ մասին...**

– Ծրագրով նախատեսված աշխատանքները հիմնականում իրականացվում են ավստրիական «VOIT» և պորտուգալական «Efacec» ընկերությունների միջոցով: Նրանք մեր համաձայնությամբ ներգրավել են այլ ենթակապալառու ընկերություններ, որոնք կատարում են շինմոնտաժային աշխատանքներ: Այդ ընկերություններից կարող են նշել հայկական «Էլեկտրասևկավմոնտաժ» ՍՊԸ և սերբական «OTRAKS»-ը:

Էլեկտրական սարքավորումներն ամբողջությամբ պատրաստվել են եվրոպական երկրներում և տեղում կարգաբերվել նրանց մասնագետների միջոցով: Մեխանիկական սարքերն ու մասերը պատրաստվել են Ավստրիայում և Իտալիայում:

– **Մենք չխոսեցինք թունելների, ջրամբարների, հիդրոտեխնիկական այլ կառույցների անվտանգության համակարգի հուսալիության բարձրացման մասին՝ պայմանավորված են բնական խնդիրներով (երկրաշարժ, ստորգետնյա այլ ցնցումներ), են դրանց մաշվածության, կառույցների թուլացման բնական պրոցեսներով: Ի՞նչ կասեք դրանց վերազինման ուղղությամբ կատարվող աշխատանքների մասին:**

– Այս փուլում կատարվում են ընկերության չորս ջրամբարի պատվարների և շինությունների հետազոտման, վտանգների գնահատման, արտակարգ իրավիճակների կառավարման համար անհրաժեշտ աշխատանքներ: Աշխատանքների ավարտից հետո ի հայտ եկած ռիսկերի ղեկավարման անհրաժեշտ միջոցառումները կայանավորվեն և կկատարվեն:

– **Ե՞րբ է նախատեսվում վերականգնման-վերազինման աշխատանքների ավարտը:**

– Ծրագրի ժամանակացույցով աշխատանքների ավարտը նախատեսված է 2021 թ. հուլիսին: Այս պահի դրությամբ այդ ժամանակահատվածն իրատեսական է, և հուսով եմ, որ այլ խոչընդոտների բացակայության դեպքում այն կիրագործվի:

**ՀԱՐՑԱԶՈՐՈՒՅՑԸ՝ ՎԱՀՐԱՍ
ՕՐԲԵՆՅԱՆԻ, ՍԱՄՎԵԼ
ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ**



ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«ՔոնթուրԳլոբալ Յիդրո Կասկադ» ՓԲ ընկերության սոցիալական պատասխանատվության քաղաքականությունը

«ՔոնթուրԳլոբալ Յիդրո Կասկադ» ընկերությունն իր կորպորատիվ ռազմավարությանը համահունչ որդեգրել է սոցիալական պատասխանատվության քաղաքականություն, որի շրջանակներում ամեն տարի իրականացվում են ներդրումային ծրագրեր՝ որոշակի բյուջեի շրջանակներում: Թե ի՞նչ է իրենից ներկայացնում «ՔոնթուրԳլոբալ Յիդրո Կասկադ» ՓԲ ընկերության սոցիալական քաղաքականությունը և ի՞նչ կոնկրետ դրսևորումներ ունի այն, փորձեցինք ճշտել ընկերության բնապահպանության և սոցիալական պատասխանատվության բաժնի ղեկավար Զարուհի Խաչատրյանի հետ զրոյցում:

ՉԱՐՈՒՅԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՅՅԵՔԱՐՏ

Շնվել է 1988թ. Գորիս քաղաքում: Միջնակարգ կրթությունը ստացել է Ալ. Բակունցի անվան միջնակարգ դպրոցում: Բարձրագույն կրթությունը՝ Երևանի պետական համալսարանի քիմիայի ֆակուլտետի «Էկոլոգիական քիմիա» բաժնում: Ունի Էկոլոգ-քիմիկոսի մագիստրոսի աստիճան: Լրացուցիչ սերտիֆիկացումներ՝ ԱՊՏԱՄԿ-անվտանգ դեկավարման սերտիֆիկացում (IOSH-managing safely certification):

Աշխատանքային փորձ՝ ՉԻՆՉ ինժեներա-խորհրդատվական ընկերություն Էկոլոգ-քիմիկոսի պաշտոնում: Մասնակցել է 33-ում 3անաշխարհային բանկի, Ասիական զարգացման բանկի ֆինանսավորմամբ իրականացվող մի շարք ծրագրերի՝ որպես ԲՄՊ մասնագետ: «ԶԳԿ» ընկերության թիմին միացել է 2017-ից՝ որպես ընկերության ԲՄՊ մասնագետ:

S Իկին Չարուհի, որպես զրույցի նախաբան, ներկայացրեք խնդրե՞մ ի՞նչ ասել է կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն:

– Եթե խոսենք կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն (ԿՄՊ) ընդհանուր հասկացության մասին, ապա այն բազմաթիվ սահմանումներ ունի: Ընդհանուր առմամբ ԿՄՊ-ն ընկալվում է որպես բիզնես գործառույթ, որը վերաբերում է ընկերությանն առջևվող տնտեսական, սոցիալական և բնապահպանական խնդիրներին: ԿՄՊ-ի նպատակն է գտնել նման խնդիրների լուծումներ, որոնք շահավետ կլինեն և՛ ընկերության, և՛ հասարակության, և՛ պետության համար:

Կարելի է համարել, որ ԿՄՊ-ն կազմված է հետևյալ 2 բաղադրիչից.

- տվյալ ընկերության գործունեությունից բխող բնապահպանական և սոցիալ-տնտեսական խնդիրների նվազեցում, ընդհուպ՝ դրանց վերացում,
- փոխշահավետ լուծումների մշակում և կիրառում հասարակության մեջ կամ շրջակա միջավայրում առկա այն խնդիրների համար, որոնք տվյալ ընկերության գործունեությանն են առնչվում:

Առաջին կետն անմիջականորեն վերաբերում է ընկերության գործունեության արդյունքում առաջացած խնդիրներին, իսկ երկրորդը՝ արդեն իսկ առկա տնտեսական, սոցիալական կամ բնապահպանական խնդիրներին, որոնց առաջացման պատճառը տվյալ ընկերության գործունեությունը չէ, սակայն վերջիններս անմիջականորեն ազդում են

ընկերության գործունեության վրա:

Ընդհանուր առմամբ ԿՄՊ-ն հիմնված է ընկերության երկարաժամկետ նպատակների և տեսլականի վրա և բոլոր կողմերի համար (ընկերություն, հասարակություն, պետություն) շահավետ լուծումների իրագործումը ԿՄՊ-ի համար անխախտելի սկզբունք է:

– Սոցիալական պատասխանատվության քաղաքականության գերադեցրած տեղն ընկերության գործունեության մեջ և այդ քաղաքականության կառավարման համակարգը:

– «ՔոնթրոլԳրբայ» ընկերությունը, որպես միջազգային ընկերություն, որն աշխատում է տարբեր կառավարությունների, զարգացման բանկերի և բազմազգ սպառողների հետ, իր կողմից իրականացվող բոլոր ծրագրերի համար որդեգրել է «սպառողն առաջնային է» սկզբունքը և դրանից ելնելով՝ իրականացնում է ենթադիայի արտադրության ծրագրեր՝ վերջնական սպառողների համար ապահովելով հուսալի և հասանելի էլեկտրաէներգիա, որն արդյունքում նպաստում է նաև տնտեսական աճին ու սոցիալական բարեկեցությանը:

Ընկերության գործունեության արդյունքում վերջնական սպառողի կյանքի որակի բարելավման ամենակարևոր բաղադրիչներից մեկն էլ հենց իրականացվող նախագծերի սոցիալական և բնապահպանական կայունությունն է: Իր կողմից իրականացվող բոլոր նախագծերում «ՔոնթրոլԳրբայ» ընկերությունը հանձն է առել՝ խուսափել աշխատակիցների, համայնքների և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություններից, իսկ եթե բացասական ազդեցությունից լիովին խուսափել անհնարին է, ապա նվազագույնի հասցնել, մեղմացնել այն կամ համապատասխան կոմպենսացիա ապահովել: Ընկերությունը վստահ է, որ իր կողմից որդեգրված սոցիալական և բնապահպանական քաղաքականությանն ուղղված սկզբունքներն արդյունքում զգալի օգուտների են բերում թե՛ ընկերության արտադրանքի վերջնական սպառողների, թե՛ ընկերության գործընկերների և թե՛ այն համայնքների համար, որտեղ մենք աշխատում ենք:

– Ովքե՞ր են ընկերության ԿՄՊ իրականացման շահակիցները:

– Ընդհանուր առմամբ ցանկացած ԿՄՊ գործառույթի շահակիցները դրանք այն անձիք են կամ կողմերը, որոնք ազդում են տվյալ ընկերության գործունեության վրա կամ ենթարկվում են տվյալ ընկերության գործունեության ազդեցությանը: ԶԳԿ-ի դեպքում ընկերության շահակիցներն առաջին հերթին ընկերության աշխատակիցներն են, արտադրանքի վերջնական սպառողները, ինչպես նաև մատակարարները, ընկե-

րության կառույցների տեղաբաշխման գծի երկայնքով Որոտան գետի գետավազանի ջրային ռեսուրսները ոռոգման նպատակով օգտագործող բոլոր համայնքները և ջրօգտագործողների ընկերությունները, ինչպես նաև այն տնտեսվարողները, որոնք համապատասխան ջրօգտագործման թույլտվություններով գործունեություն են ծավալում վերոնշյալ տարածքում:

Ընկերության անմիջական շահակից են հանդիսանում նաև ընկերության գործունեության ազդակիր համայնքներն ու իրենց բնակիչները, որոնք նաև հանդիսանում են ընկերության կողմից ԿՄՊ շրջանակում իրականացվող սոցիալական ներդրումային ծրագրերի անմիջական շահառուները:

– Կարծում ե՞նք՝ արժե՞ր ներկայացնել ընկերության ազդակիր բնակավայրերի ցանկը: Եվ հետաքրքիր է՞ շահառուների, ազդակիր համայնքների ցանկը հաստատո՞ւն է, թե՛ կարող է փոփոխության ենթարկվել այս կամ այն ծրագրի առանձնահատկություններից ելնելով:

– ԶԳԿ ընկերության ազդակիր համայնքները (բնակավայրերը, որոնք ենթարկվում են ընկերության գործունեության հնարավոր ազդեցությանը) 33 Սյունիքի մարզի Գորիսյե, Գորիս, Սիսիան և Տաթև խոշորացված համայնքների՝ ընդհանուր առմամբ 15 բնակավայր են: Ազդակիր համայնքների ցանկում ներառված են հիմնականում այն բնակավայրերը, որոնց հարակից տարածքներում են տեղակայված ընկերության կառույցները՝ հեկ-եր, ջրամբարներ, տեխնիկական կառուցվածքներ:

– Նախորդ հարցին պատասխանելիս նշեցիք նաև ընկերության կողմից իրականացվող սոցիալական ներդրումային ծրագրերի մասին: Ընթացողի և միգուցե ընկերության հետագա ԿՄՊ ծրագրերի շահառուի համար հատկանշական է իմանալ՝ ի՞նչ մեխանիզմով կամ աստիճանակությամբ են հաստատվում իրականացվելիք ներդրումային ծրագրերը, և ինչպիսի՞ ծրագրերի է ընկերությունը նախապատվություն տալիս:

– Սոցիալական ներդրումային ծրագրերի հետ կապված ընկերությունն ունի հստակ մշակված սոցիալական ռազմավարություն, որի շրջանակներում էլ իրականացվում են վերոնշյալ ծրագրերը: Ընկերության կողմից իրականացվող բոլոր ծրագրերը նախ և առաջ պետք է համահունչ լինեն «ՔոնթրոլԳրբայ» ընկերության հիմնական չորս սկզբունքին, այն է՝

- գործել անվտանգ և արդյունավետ ու նվազագույնի հասցնել շրջակա միջավայրի վրա ազդեցությունները,
- բիզնեսի լավ աճ,

■ կառավարել բիզնեսը պատասխանատու ձևով, և բարելավել մեր շահագործման միջավայրը:

Վերոնշյալ սկզբունքների հետ համատեղ, ընկերության կողմից իրականացվող ներդրումային ծրագրերը նաև համահունչ են Կայուն զարգացման տասնյոթ նպատակներին:

Ընդհանուր առմամբ ծրագրերի իրականացման ողջ գործընթացը հիմնական չորս փուլից է բաղկացած՝ յուրաքանչյուր տարվա առաջին և երկրորդ եռամսյակներում իրականացվում են հնարավոր ներդրումային ծրագրերի առաջարկների հավաքման գործընթացը, որին հաջորդում է ԶԳՅԿ ընկերության ԿՍՊ կոմիտեի կողմից ծրագրերի քննարկումն ու նախնական ընտրությունը: ԶԳՅԿ ներքին ԿՍՊ կոմիտեի կողմից արդեն իսկ ընտրված ծրագրերը երրորդ փուլում ներկայացվում են ԶԳ Կորպորատիվ Սոցիալական Կոմիտեի վերջնական հաստատմանը և միայն կորպորատիվ կոմիտեի հաստատումից հետո մեկնարկում է ծրագրի իրականացման գործընթացը (վերջին՝ 4-րդ փուլ):

– Զիմա փորձեք համառոտ անդրադառնալ սոցիալական ծրագրերին, որոնք իրականացվել են ընկերության կողմից 2016-20 թվականներին: Եվ, եթե կարելի է, որքան է կազմում բոլոր այդ ծրագրերի գումարային արտահայտությունը:

– ԶԳՅԿ ընկերության կողմից 2016-2020թթ. ընթացքում ընդհանուր առմամբ իրականացվել են կրթական, բնապահպանական, աշխատանքի պաշտպանության և տեխնիկական անվտանգության, մարդու իրավունքների պաշտպանության և գենդերային հավասարության ուղղված 40 սոցիալական ներդրումային ծրագիր: Իրականացված ծրագրերի ընդհանուր քաղցր են կազմել է ավելի քան 350,000 ԱՄՆ դոլար: Վերջին չորս տարվա ընթացքում ներդրումային

ծրագրերն իրականացվել են ԶԳՅԿ ընկերության ազդակիր գրեթե բոլոր բնակավայրերում: Իրականացված ծրագրերի շահառուների թիվն ավելի քան 70,000 է:

– Ներկայումս ի՞նչ ծրագրեր են գործողության մեջ և, առհասարակ, ի՞նչ եք մտադիր անել 2021-22 թվականներին, եթե, հիարկե, արդեն սահմանված ընթացակարգով հաստատվել են դրանք:

– Ներկայումս ավարտին են հասցվում դեռևս 2019 թ. հաստատված և Որոտանի հիդրոհամալիրի վերազինման ծրագրի շրջանակում Գորիս քաղաքում իրականացվող երկու ներդրումային ծրագիր՝

- Հայաստանի Ամերիկյան Համալսարանի բաց կրթական կենտրոնի ստեղծում Գորիսում,
- Գորիսի պոլիլինիկայի ընդունարանի և սանհանգույցների վերանորոգում:

Վերոնշյալ ծրագրերի ավարտը զգալի դրական ազդեցությունը կունենա Գորիս համայնքի զարգացման վրա:

Ինչ վերաբերում է 2021-22թթ. իրականացվելիք ներդրումային ծրագրերին, ընկերությունը դեռևս հստակ հաստատված ծրագրեր չունի այդ ժամանակահատվածի համար: Ներկայումս համապատասխան համայնքների, համայնքային առանձին կառույցների հետ համագործակցության և ազդակիր բնակավայրերում ուսումնասիրությունների արդյունքում հավաքագրվում են հնարավոր ներդրումային ծրագրերի առաջարկներ՝ դրանք հետագա մշակման և հաստատման համար:

– Մեկ տարի առաջ մենք բախվեցինք Covid-19 համավարակին, հաջորդ ամիսներին համաճարակը, կարելի է ասել, կաթվածահար արեց պետության տնտեսական կյանքը:

Նախ՝ հաջողվե՞ց ապահովել ընկերության շարունակական գործունեությունը: Ի՞նչ ծրագրեր կամ միջոցառումներ իրականացրիք ընկերության ներսում և ընկերությունից դուրս՝ ազդակիր համայնքներում:

– Կորոնավիրուսի համավարակը մարտահրավեր էր և շարունակում է լինել այդպիսին ողջ մարդկության ու հատկապես բիզնեսի համար: Ընկերությունը շատ արագ և հստակ ձևով արձագանքեց համավարակին՝ ապահովելով թե՛ իր աշխատակիցների անվտանգությունը, թե՛ բիզնեսի շարունակականությունն ու անվտանգ շահագործումը:

Ընկերությունում մշակվեց և ներդրվեց համավարակին արձագանքման պլան, ինչպես նաև համապատասխան քաղաքականություն: Հեռավար աշխատանքային ռեժիմում սկսեցին աշխատել գրասենյակների աշխատակիցները, իսկ հեկ-երը գրեթե վեց ամիս տևողությամբ

աշխատեցին իզոլացված ռեժիմում:

Այսօր՝ համավարակից առնվազն մեկ տարի անց, հստակ կարող ենք արձանագրել, որ ընկերությունը հաջողվել է ապահովել բիզնեսի անխափան և շարունակական շահագործումն ու միաժամանակ հոգ տանել իր իսկ աշխատակիցների աշխատանքի պաշտպանության և տեխնիկական անվտանգության մասին:

Ինչ վերաբերում է ազդակիր համայնքներում իրականացված միջոցառումներին՝ ընկերությունը 2020-ի սկզբին որոշում կայացրեց տվյալ տարվա համար նախատեսված իր ողջ սոցիալական ներդրումային ծրագրերի քյուլջեն ուղղել Covid-19 համավարակի մեղմացմանը և համայնքներին համապատասխան աջակցության ցուցաբերմանը: 2020թ. ընդհանուր առմամբ ԶԳՅԿ ընկերության կողմից իրականացվեցին ավելի քան 72000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ ընդհանուր քյուլջենով 7 ծրագիր: Իրականացված ծրագրերը ներառում են սոցիալական աջակցություն հաշմանդամություն ունեցող անձանց, բժշկական սարքավորումների ձեռք բերում և նվիրաբերում համայնքային բժշկական կենտրոններին, ինչպես նաև ուսումնական հաստատություններում անվտանգ ուսումնական գործընթացի կազմակերպման աջակցության միջոցառումներ:

– Արցախյան երրորդ պատերազմը, որին բախվեցինք 2020-ի աշնանը, մեծ դժբախտություններ բերեց հայ ժողովրդին, այդ թվում՝ այն համայնքներին, որտեղ ընկերությունը գործունեություն է ծավալում: Արդյո՞ք ընկերության կողմից իրականացվել են աջակցության ծրագրեր պատերազմի հետևանքով տուժած ընտանիքներին:

– Կորոնավիրուսի համավարակից գաղտնի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին տեղի ունեցած պատերազմը ևս շատ լուրջ մարտահրավեր էր բոլորիս համար:

Ընկերությունը, իհարկե, ԿՍՊ գործառույթի շրջանակում իր աջակցությունն է ցուցաբերել պատերազմի արդյունքում Արցախից տարահանված բնակիչներին: «ՍՕՍ մանկական գյուղեր» Հայկական Բարեգործական Հիմնադրամի հետ համագործակցության արդյունքում ընկերությունը 2020-ի դեկտեմբերին իրականացրեց սոցիալական աջակցության ծրագիր ավելի քան 13,5 մլն ՀՀ դրամ արժեքով: Ծրագրի արդյունքում սոցիալական աջակցության 250 փաթեթ (ներառյալ սնունդ և հիգիենայի պարագաներ), 80 ձմեռային վերարկու և 50 թաբլետ բաշխվեցին Արցախից տեղահանված և ՀՀ-ում ապաստանած ընտանիքներին:

ՀԱՐՑԱԸՈՒԹՅԱՆ՝ ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵՆՅԱՆԻ, ՍԱՄՎԵԼ ԱՆԵՍՏԱՆՆԻ

Ընկերության անմիջական շահակից են հանդիսանում նաև ընկերության գործունեության ազդակիր համայնքներն ու իրենց բնակիչները, որոնք նաև հանդիսանում են ընկերության կողմից ԿՍՊ շրջանակում իրականացվող սոցիալական ներդրումային ծրագրերի անմիջական շահառուները:



ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻՆՆԵՐ «ՁՐՈՅԱԿԱՆ ՎՆԱՍ»

«ՔոնթրոլԳլոբալ Յիդրո Կասկադ» ՓԲ ընկերությունում բնապահպանությունը՝ գործունեության կարևոր սկզբունք



«Ձրոյական վնաս» շրջակա միջավայրի համար կարգախոսը, կարծեք, սկզբից ևեթ դրվել է աշխատանքների հիմքում: Ավելին՝ հոգ է տարվում տեղական համայնքների բնական ռեսուրսների նկատմամբ: Ու շրջակա միջավայրի հանդեպ սեփականատիրոջ ստանձնած պարտավորությունները ներառված են ընկերության ամենօրյա կառավարման մեջ:

Բազմակողմանի և բազմաբովանդակ այդ ոլորտում ընկերությունում կատարվող աշխատանքների մասին ամբողջական պատկերացում կազմելու համար կարևորեցինք զրոյցը ՓԲ ընկերության բնապահպանության և սոցիալական պատասխանատվության բաժնի ղեկավար Զարուհի Խաչատրյանի հետ:

- Տիկին Խաչատրյան, նախ կուզենայինք իմանալ, թե իՆչ տեղ է գրավում բնապահպանական քաղաքականությունը «ՔոնթրոլԳլոբալ Յիդրո Կասկադ» ՓԲ ընկերության որդեգրած գործունեության մեջ, և որո՞նք են ուղեկցող սկզբունքները:

- Շնորհակալ եմ հարցազրույցի համար: Արդյունավետ բնապահպանական կառավարումը բիզնեսի իրագործման մեջ հանդիսանում է «ԲԳԿ» ընկերության

հիմնական սկզբունքներից մեկը: «ՔոնթրոլԳլոբալ» կորպորատիվ մակարդակով իր համար ընդունել է բնապահպանական սկզբունքների համապարփակ խումբ՝ երաշխավորելու, որ ընկերության կողմից իրականացվող կամ իրականացվելիք նախագծերն արտացոլում են հուսալի բնապահպանական կառավարման նորմեր:

Ընկերությունն «Աշխատանքի պաշտպանության, տեխնիկական անվտանգության և շրջակա միջավայրի պահպանության» (ԱԴՏԱ և ՇՄԴ) քաղաքականության» ընդունմամբ հանձն է առել տրամադրել և պահպանել անվտանգ ու առողջ աշխատանքային միջավայր ընկերության աշխատակիցների, կապալուռների և այցելուների համար, հոգ տանել շրջակա միջավայրի, այդ թվում՝ տեղական համայնքների և դրանց բնական ռեսուրսների մասին:

Աշխատանքի պաշտպանության, տեխնիկական անվտանգության և շրջակա միջավայրի պահպանության գերազանցության այս հանձնառությամբ ընկերությունը հաստատում է շահակիցներին, այդ թվում՝ մեր աշխատակիցներին, հաճախորդներին, բաժնետերերին և համայնքներին, որ մեր բիզնեսը կվարենք հարգանքով և հոգատարությամբ:

Ընկերության կողմից ԱԴՏԱ և ՇՄԴ հանդեպ ստանձնած պարտավորությունները ներառված են բիզնեսի ամենօրյա

Յամաշխարհային մաքրության օր (World cleanup day) միջոցառում Գորիսի համայնքապետարանի և ԱԿ. Բակունցի անվան դպրոցի աշակերտների հետ

կառավարման մեջ և ընկերության աշխատակիցներից յուրաքանչյուրը հանդես է գալիս որպես դեսպան մարդկանց ու շրջակա միջավայրի համար «Ձրոյական վնաս» ծրագրի համար և հանձնառու է ընկերության բնապահպանական ազդեցությունների գիտակցաբար կառավարման համար:

- ԻՆչ համակարգ է ներդրված ընկերության բնապահպանական գործունեության կառավարման համար:

- Ընկերությունում բնապահպանական կառավարման պատշաճ իրականացման համար ներդրվել է համապատասխան բնապահպանական կառավարման համակարգ: Այն իրենից ներկայացնում է մի շարք փաստաթղթերի (առանձին շահագործման ընթացակարգեր և հրահանգներ) համալիր, որոնք մշակված են՝ հաշվի առնելով ընկերության գործունեության հետ առնչվող բնապահպանական ասպեկտները և միտված են կանխարգելելու կամ նվազեցնելու մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները՝ կանխելով կամ նվազագույնի հասցնելով ընկերության գործունեության

յունից առաջացող աղտոտումը և ապահովելով կլիմայի փոփոխություններին նպաստող արտանետումների նվազեցումը: Կառավարման համակարգը ֆիքսված փաստաթղթերի համալիր չէ և պարբերաբար վերանայվում է՝ ընկերության կողմից շահագործման ընթացքում առաջացող բնապահպանական խնդիրների առավել արդյունավետ կառավարման հասնելու նպատակով:

– Որպեսզի հասկանալի լինի բնապահպանական բաղաբաղանության կարևորությունը, ցանկալի է իմանալ՝ ընդհանրապես բնապահպանական ի՞նչ ռիսկեր է պարունակում «ՔոնթրոլԳլոբալ Յիդրո Կասկար» ՓԲ ընկերության գործունեությունը:

– Ընկերության շահագործման հետ կապված բնապահպանական ռիսկերը հիմնականում կապված են շահագործման մեջ կիրառվող քիմիական նյութերով և դրանց հետ կապված հնարավոր բնապահպանական պատահարներով:

Ընկերությունը, ինչպես արդեն նշեցի, իր բնապահպանական բաղաբաղանությամբ հանձն է առել գործել «Չրոյական վնաս» սկզբունքին համապատասխան և, հետևաբար, իր շահագործման գործընթացը կազմակերպում և իրականացնում է այդ սկզբունքին համահունչ:

– Մենք տեղյակ ենք, որ ընկերությունում հսկայածավալ ծրագրեր են իրականացվում սարքավորումների արդիականացման ուղղությամբ:

Տեխնոլոգիական նոր ներդրումներն ու վերագինումները որքանով են համապատասխանում բնապահպանական չափանիշներին, որքանով են դրանք նվազեցնում շրջակա միջավայրին հասցվող վնասները, արդյո՞ք դրանք նոր ռիսկեր չեն առաջացնում:

– 2015թ. «ՔոնթրոլԳլոբալ» ընկերության կողմից Որոտանի հիդրոհամալիրի ձեռք բերումից հետո ընկերությունը նախաձեռնեց համալիրի բաղադրիչ կազմող 3 հեկ-երի լայնամասշտաբ վերագինման աշխատանքներ՝ հիդրոկոմպլեքսի հետագա առավել արդյունավետ շահագործումն ապահովելու համար: Ծրագրի հնարավոր բնապահպանական ազդեցությունների մեղմման կամ նվազեցման նպատակով նախքան վերագինման ծրագրի մեկնարկը, գերմանական Ֆիխտներ ընկերության կողմից իրականացվեց ծրագրի՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում (ՇՄԱԳ): Ծրագրի հնարավոր բնապահպանական ազդեցությունների ուսումնասիրությունների արդյունքում էլ մշակվեց համապատասխան գործողությունների պլան, որը մինչ այսօր հաջողությամբ իրականացվում է ընկերության կողմից:



«Ընդդեմ պլաստիկի» թեմայով բնապահպանական դասընթաց դպրոցականների համար

Չնայած վերագինման ծրագրի ՇՄԱԳ հաշվետվությունը ենթակա չէր բնապահպանական փորձաքննության (ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ պատկան մարմնի համապատասխան ծանուցման հիման վրա), սակայն «ՔԳԿ» ընկերությունը հաշվետու ձևով բիզնեսի վարման իր սկզբունքին համահունչ իրականացրեց ՇՄԱԳ հաշվետվության վերաբերյալ հանրային քննարկումներ՝ շահակիցներին ներկայացնելով թե՛ վերագինման ծրագիրը, թե՛ ծրագրի արդյունքում հնարավոր բնապահպանական ազդեցությունները:

Ինչ վերաբերում է վերագինման ծրագրի իրականացման արդյունքում բնապահպանական նոր ռիսկերի առաջացմանը, հստակ կարող ենք ասել, որ նոր բնապահպանական ռիսկեր այն չի առաջացնում՝ բանզի չի ներառում նոր հիդրոկառուցների շինարարություն, այլ միտված է արդեն գործող կառուցվածքների արդիականացմանը, ինչը, ընդհակառակը, արդյունքում կերթի բիզնեսի ընդհանուր բնապահպանական ոտնահետքի նվազեցման:

– Բնապահպանական բաղաբաղանության կարևոր ուղղություններից մեկը, անշուշտ, անվտանգ և առողջ աշխատանքային միջավայրի ապահովումն է աշխատակիցների համար. ի՞նչ կանոնակարգեր են գործում ընկերությունում, որքանով են դրանք արդյունավետ:

– Ինչպես արդեն նշեցի, անվտանգ ու առողջ աշխատանքային միջավայրի տրամադրումն ու պահպանումն ընկերության աշխատակիցների, կապալառուների և այցելուների համար «ՔԳԿ» ընկերության հիմնարար սկզբունքներից է և սահմանված է ընկերության «Աշխա-

տանքի պաշտպանության, տեխնիկական անվտանգության և շրջակա միջավայրի պահպանության» (ԱՊՏԱ և ՇՄՊ) բաղաբաղանության մեջ:

ՇՄՊ կառավարման համակարգին զուգահեռ ընկերությունում գործում է ԱՊՏԱ կառավարման համակարգը, որն իր մեջ ներառում է համապատասխան օպերատիվ ընթացակարգեր և հրահանգներ, որոնք միտված են շահագործման գործընթացն առավել անվտանգ դարձնելուն: Այս դեպքում ևս ընկերությունը գործում է նույն «Չրոյական վնաս» թիրախին հասնելուն համահունչ, որին հասնելու համար սահմանվում են նպատակներ, որոնք գերակա են ընկերության արտադրական և տնտեսական նպատակներից:

– Դուք արդեն նշեցիք, թե ինչ ռիսկեր է պարունակում ընկերությունը բնապահպանական առումով: Ու, որքանով հայտնի է, ընկերության գործունեության հետևանքով առաջանում են վտանգավոր թափոններ, որոնց անձնագրերը հաստատված են ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից: Ի՞նչ է արվում դրանք չեզոքացնելու համար, և հատկապես ո՞ր թափոններն են վտանգավոր:

– Թափոնների կառավարման գործընթացը, որն ընկերության բնապահպանական կառավարման համակարգի բաղադրիչներից մեկն է, ընկերությունը սկսել է իրականացնել Որոտանի հիդրոհամալիրի ձեռքբերումից ի վեր: Նախ՝ նույնականացվել են հնարավոր բոլոր վտանգավոր թափոնները, որոնք կարող են առաջանալ համալիրի շահագործման արդյունքում, որից հետո վերջիններս, օրենքով սահմանված կարգով, անձնագ-



Ծառատունկ Գորիս քաղաքի Հայրենական մեծ պատերազմի և Արցախյան պատերազմի զոհերի հիշատակին կառուցված հուշարձանի հարակից այգում

րավորվել են և հաստատվել Շրջակա միջավայրի նախարարության կողմից: Թափոնների անձնագրավորման գործընթացին հաջորդեց «ԲԳՀԿ» կառույցներում վտանգավոր թափոնների պատշաճ պահեստավորման տարածքների կառուցումը: Պահեստավորման տարածքների համապատասխան պատկան մարմինների կողմից ենթարկվեցին ԱՊՏԱ և շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության, և արդյունքում ունեցանք համապատասխան դրական եզրակացություններ:

Օրենքով սահմանված նորմերին համապատասխան պահեստավորման տարածքների կառուցմանը հաջորդեց վտանգավոր թափոնների գործածության լիցենզիայի ձեռքբերման գործընթացը: Արդյունքում՝ 2019 թ. դեկտեմբերին «ԲԳՀԿ» չորս կառույցի համար՝ Գորիսի գրասենյակ և Տաթև, Շամբ, Սպանդարյան հեկ-եր, ձեռք բերվեց շրջակա միջավայրի նախարարի կողմից հաստատված՝ ՀՀ-ում վտանգավոր թափոնների գործածության լիցենզիաները, որով սահմանվում է «ԲԳՀԿ» գործունեության արդյունքում առաջացած վտանգավոր թափոնների պահպանումը կառույցներում:

Ընդհանուր առմամբ՝ «ԲԳՀԿ» գործունեության արդյունքում առաջանում են առաջինից չորրորդ դասի վտանգավորության 12 տեսակի թափոններ: Առաջին դասի վտանգավորության թափոն հանդիսանում են սնդիկ պարունակող լյուսիները, որոնք արդեն «ԲԳՀԿ» բոլոր կառույցներում փոխարինվել են, իսկ վտանգավոր թափոնը պահեստավորվել է համապատասխան պահեստավորման տարաներում՝ վտանգավոր թափոնի համար հատկացված

հատուկ տարածքում: Ցավոք, ՀՀ-ում դեռևս չկա համապատասխան լիցենզավորված ընկերություն, որը նման թափոնի վերամշակման գործունեություն է ծավալում: Մյուս վտանգավոր թափոնների դեպքում, ինչպիսիք են օրհնակ երրորդ դասի վտանգավորության թափոն հանդիսացող յուղոտված հողերն ու յուղոտված լաթերը, հանձնվում են համապատասխան վերամշակման լիցենզիա ունեցող ընկերությունների՝ թափոնի պատշաճ հետագա վերամշակման և չեզոքացման նպատակով:

– Ինչպես հայտնի է՝ «Քոնյուրգ-լոբալ Հիդրո Կասկադ» ՓԲ ընկերությունը համագործակցում է ջրօտագործողների ընկերությունների հետ և նրանց պայմանագրերի համաձայն՝ համապատասխան քանակությամբ ջուր է մատակարարվում՝ ոռոգման նպատակով:

Դա շատ կարևոր հարց է, քանզի տարածաշրջանը նախևառաջ գյուղատնտեսական ուղղվածություն ունի, իսկ ոռոգման համակարգն առանցքային նշանակություն ունի այդ առումով:

Ներկայացրեք, ինչո՞րք է, այդ համագործակցությունը, ինչպես և առկա հարցերը, որոնք կարող են մտահոգել կամ մտահոգում են գյուղացուն:

– «ԲԳՀԿ» գործունեության բացասական ազդեցությունը գյուղատնտեսության վրա բացառելու համար ընկերությունը սերտ համագործակցում է իր գործունեության տարածքում ոռոգման ջրամատակարարում իրականացնող ընկերությունների հետ: Մասնավորապես «ԲԳՀԿ» Ընկերության և «Սյունիք» ջրօգտագործողների ընկերության, ինչպես նաև ՀՀ

Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Շահատ բնակավայրի հետ երկկողմ կնքված պայմանագրերին համապատասխան՝ «ԲԳՀԿ» ընկերությունն իրականացնում է ըստ պահանջի ոռոգման ջրի ապահովում համապատասխան հիդրոկառույցներից: Համագործակցությունն իրականացվում է 2015-ից ի վեր և մշտական բնույթ է կրում:

– Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները կանխելու կամ նվազեցնելու համար ոչ պակաս կարևոր է «Էկոլոգիական թողքի» խնդիրը, որը հաճախ տարաբնույթ քննարկումների տեղիք է տալիս: Կուզենայինք փոքր-ինչ մասնամասնել այդ հարցի դրվածքը:

– «ԲԳՀԿ» ընկերությունը Որոտանի հիդրոհամալիրի շահագործումն իրականացնում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից տրված 3 ջրօգտագործման թույլտվությունների հիման վրա, համապատասխանաբար՝ Տաթև, Շամբ և Սպանդարյան հեկ-երի համար: Ջրօգտագործման թույլտվությունները ձեռք էին բերվել ի սկզբանե՝ 2015թ-ին, 3 տարի ժամկետով: 2018թ. ընկերությունը համապատասխան փաստաթղթերի փաթեթներով դիմել էր ՋԹ-ների երկարաձգման համար: Արդյունքում՝ վերջիններս երկարաձգվել են նույն պայմաններով՝ ընկերությանը հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիայի ժամկետով:

Հենց վերոնշյալ ՋԹ-ներով էլ սահմանվում են ջրամբարներից յուրաքանչյուրի համար Էկոլոգիական թողքի այն մեծությունները, որոնք պետք է ապահովվեն ջրամբարներից հետո՝ Որոտան գետի հոսանքով ներքև, տարվա բոլոր եղանակներին ջրային ռեսուրսի և դրան հարակից տարածքների, ինչպես նաև ջրային ռեսուրսում ու դրան հարակից տարածքներում առկա բուսական և կենդանական տեսակների բնակատեղիները սահմանափակելու նպատակով՝ պահպանելով գետում Էկոլոգիական հավասարակշռությունը և դրա ինքնավերականգնումը: Ընկերությունը հաջողությամբ իրականացնում է ՋԹ-ներով սահմանված իր պարտավորությունները՝ ապահովելով սահմանված Էկոլոգիական թողքերը ողջ տարվա ընթացքում:

– Մեր ունեցած տեղեկություններով՝ վերջին շրջանում ընկերության գործունեության տարածքում իրականացվել է Էկոհամակարգային ուսումնասիրություն՝ նպատակ ունենալով նաև պարզել ընկերության գործունեության ազդեցությունը կենսաբազմազանության վրա: Ի՞նչ պատկեր կամ իրավիճակ ունենք

այդ առումով, և ի՞նչ է արվում ռիսկերի նվազեցման ուղղությամբ:

– Ընկերությունը, վերագինման աշխատանքների ՇՄԱԳ հաշվետվության հիման վրա, կազմել էր ձկնապաշտպան միջոցառումների ցանկ, որը համաձայնեցվել և հաստատվել էր KfW կողմից և հաջողությամբ իրականացվում է 2018-ից ի վեր: Որպես վերոնշյալ գործողությունների պլանի մաս, ընկերությունը 2019-ի երկրորդ եռամսյակում սկսեց ընկերության գործունեության տարածքում Էկոհամակարգային ուսումնասիրությունների իրականացումը: Ուսումնասիրություններն իրականացվել են «Բիոտոմ» ՓԲԸ և «Ակվասկոպ» ՓԲԸ (Biotope LLC & Aquascope LLC (France)) կոնսորցիումի կողմից 2019 թ. հունիս-2020 նոյեմբեր ընկած ժամանակահատվածում:

Ուսումնասիրությունների իրականացման հիմնական նպատակն էր ստանալ «ԶԳՅԿ» ընկերության գործունեության տարածքում ջրային ռեսուրսների վերաբերյալ բազային տեղեկատվություն՝ առավել կենտրոնանալով ընկերության կողմից շահագործվող ջրամբարների և հիդրոհանգույցի երկայնքով՝ Որոտան գետի ջրային կենսամիջավայրի և Էկոլոգիայի վրա՝ ուսումնասիրություններն իրականացնելով միջազգային ստանդարտներին համապատասխան և լավագույն փորձի կիրառմամբ: Բացի այդ, ուսումնասիրությունը նպատակ ուներ բացահայտելու հիդրոէներգետիկ կոմպլեքսի ազդեցությունը ջրային միջավայրի, մասնավորապես ձկների պոպուլյացիայի վրա, ինչպես նաև մշակելու համապատասխան մեղմացնող միջոցառումների ցանկ, որոնց հետագա իրականացումը կբերի ջրային Էկոհամակարգի վրա ընկերության ազդեցության նվազեցման:

Ուսումնասիրությունները հաջողությամբ ավարտվել և «Բիոտոպ» ՓԲ և «Ակվասկոպ» ՓԲ ընկերությունների կողմից 2020-ի նոյեմբերին ներկայացվել է վերջնական հաշվետվությունը, որը, ինչպես նշեցի, ներառում է նաև ընկերության ջրային Էկոհամակարգի վրա ազդեցության մեղմացնող միջոցառումներն ու մոնիտորինգային աշխատանքները: Վերջիններս արդեն իսկ բնակարկվել և հաստատվել են KfW կողմից և ներկայումս գտնվում են պլանավորման փուլում:

– **Երկու-երեք տարի առաջ գերմանական ինժեներական ընկերություններից մեկի կողմից կատարված եզրակացությունն էր արվել՝ նշելով նաև մաքրման կայանների, ջրամբարներում ձկնապաշտպան կառույցների, բիոսան հանգույցների տեղադրման կարևորությունը: Զասկանում ենք՝ որանք մեծ ներդրումներ և տևական ժամանակի հետ են կապված, բայց և հետաքրքիր է՝ ի՞նչ**



Կայուն զարգացման 17 նպատակները

Է հաջողվել կատարել այդ ուղղությամբ:

– Այո, ճիշտ էք, խոսքը գերմանական ֆիլիտներ ընկերության կողմից իրականացված՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին է, որին, որպես արդյունք, հաջորդել էր ընկերության գործունեության բնապահպանական ազդեցությունների մեղմման ուղղված գործողությունների պլանի մշակումն ու հաջողական իրագործումը: Կարող եմ վստահ նշել, որ ընկերությունն արդեն հաջողությամբ իրականացրել և շարունակում է իրականացնել վերոնշյալ պլանում ներառված գործողությունները: Մասնավորապես աերոբիկա բիոհանգույցներ են նախագծվել և կառուցվել «ԶԳՅԿ» 5 ջրամբարում (Սպանդարյան, Անգեղակոթ, Տաթև, Տուրոսի ջրամբարներ և օրվա կարգավորման ջրամբար) ու արդեն գործում են 3 տարի շարունակ:

Ջրային Էկոհամակարգի պահպանման և ջրօգտագործման թույլտվություններով սահմանված աղտոտիչների ջրային Էկոհամակարգ արտանետման թույլատրելի չափաբաժինների ապահովման նպատակով ընկերությունը 2017-ին իրականացրեց «ԶԳՅԿ» 3 հեկ-երի համար կոմպակտ մաքրման կայանների նախագծման և տեղադրման աշխատանքները: Կառույցներում օգտագործվել են TOPAS տեսակի կոմպակտ մաքրման կայաններ, որոնք արդյունավետ կերպով իրականացնում են հեկ-երում առաջացած կենցաղային կեղտաջրի մաքրում և արդյունքում կանխում հեկ-ի հոսքով ներքև գետային Էկոհամակարգի աղտոտումը կենցաղային կեղտաջրերով:

Ինչ վերաբերում է ձկնապաշտպան կառուցվածքներին, ինչպես արդեն նշեցի, 2019-2020 թթ. ընկած ժամանակահատվածում ընկերության նախաձեռնությամբ իրականացվել է Որոտանի հիդրոհամայնի ողջ երկայնքով՝ Որոտան գետի Էկոհամակարգային ուսումնասիրություններ: Արդյունքում՝ առաջարկվել

են մի շարք մեղմացման միջոցառումներ, որոնց իրականացումը ներկայումս պլանավորման փուլում է:

– **Երբ մենք խոսում ենք շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելման և նվազեցման, ազդակիր բնակավայրերում առկա բնապահպանական խնդիրների մասին, ակամա հանգում ենք եզրակացության, որ կարևոր է խնդրո առարկայի վերաբերյալ բնակչության գրագիտությունն ու իրազեկվածությունը: Ուստի և՛ ի՞նչ բնապահպանական, կրթական ու նմանատիպ այլ ծրագրեր է իրականացնում ընկերությունը:**

– «ԶԳՅԿ» ընկերության հիմնական սկզբունքներից մեկը հետևյալն է՝ բարելավել այն միջավայրը, որտեղ մենք գործում ենք: վերջինիս իրագործումը ենթադրում է նաև ընկերության կողմից ազդակիր համայնքներում բնապահպանական ծրագրերի իրականացում ու ազդակիր համայնքների բնակիչների բնապահպանական իրազեկվածության մակարդակի բարձրացում: Այս շրջանակում ընկերությունը պարբերաբար իրականացնում է թե՛ ներդրումային ծրագրեր, ինչպիսին, օրինակ, Գորիս քաղաքում համայնքային այգու ծառատունկի իրականացումը, և թե՛ կամավորական ծրագրեր՝ բնապահպանական դասընթացների կազմակերպում դպրոցների աշակերտների համար, համայնքային այգու մաքրման աշխատանքների իրականացում երիտասարդների հետ, «Ընդդեմ պլաստիկ թափոնի» իրազեկման արշավի կազմակերպում:

– **Որպեսզի լիարժեք լինի մեր պատկերացումը խնդրո առարկայի վերաբերյալ, ցանկալի է, որ լույս սփռեք նաև հարցին, թե ի՞նչ ասել է Միջազգային կայուն զարգացման 17 նպատակը և որքանով է ընկերության գործունեությունը համահունչ այդ նպատակներին:**

– Կայուն զարգացման նպատակները (ԿՁԼ) կամ, ինչպես նաև ասում են, գլոբալ նպատակներն իրենցից ներկայացնում են միմյանց հետ փոխկապակցված 17 նպատակ, որոնք կոչված են լինելու համայն մարդկության համար ավելի լավ և առավել կայուն ապագային հասնելու բայեր:

ԿՁԼ հաստատվել են 2015-ին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից և պիտի իրականացվեն մինչև 2030թ.: Նրանք ներառված են ՄԱԿ-ի 2030-ի Օրակարգ ռեզոլյուցիայում: Կայուն զարգացման նպատակները հիմնվում են հազարամյակի զարգացման նպատակների (ՅՁԼ) արձանագրած հաջողությունների վրա և նպատակաուղղված են վերացնելու աղքատությունն իր բոլոր ձևերով ու դրսևորումներով: Թեև կայուն զարգացման նպատակներն իրավաբանորեն պարտադիր չեն, կառավարություններից ակնկալվում է ստանձնել հանձնառություններ և մշակել ազգային ծրագրեր այդ 17 նպատակին հասնելու համար:

– **Տիկին Խաչատրյան, Դուք մեծամասամբ բավարարեցի՞ք մեր հարցասիրությունը: Եվ, այդուհանդերձ, որպես ընկերության բնապահպանական բաղաբանության պատասխանատու պաշտոնյա, ի՞նչն է Ձեզ առավելապես ու նախևառաջ հուզում-մտահոգում, որ կուզենալիք ընկերության ջանքերն ուղղել առաջին հերթին այդ ուղղությամբ:**

– Շրջակա միջավայրի հանդեպ 20-րդ դարի հասարակության սպառողական վերաբերմունքը, գլոբալ էկոլոգիական հիմնախնդիրների, ինչպիսիք են, օրինակ, կլիմայի փոփոխությունն ու անապատացումը, ջրային ռեսուրսների, մթնոլորտային օդի աղտոտումը, ընդերքի անխնայ շահագործումը, վերաբերյալ մակերեսային ընկալումը հետևանք են էկոլոգիական գիտելիքների և մշակույթի ցածր մակարդակի կամ բացակայության: Դեռևս բարձր առկա բնապահպանական խնդիրների լուծման, բնապահպանական բացասական ազդեցության մեղմացման և նոր բնապահպանական խնդիրների առաջացման կանխարգելումն անհնար է պատկերացնել առանց բնության հետ համահունչ զարգացման վրա հիմնված նոր էկոլոգիական մտածելակերպի ձևավորման, հետևաբար նաև՝ համընդհանուր էկոլոգիական կրթության ու դաստիարակության:

Ուստի՝ առողջ և կայուն շրջակա միջավայրում ապրելու համար բոլորիս ուժերը պիտի կենտրոնացվեն էկոլոգիական տեսանկյունից դաստիարակված սերունդ և գրագետ հասարակություն ունենալուն:

ՀԱՐՏԱՆՈՒՅՑԸ՝ ՎԱՅՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆԻ, ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ

ՍԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԸ՝ ԱՄԵՆԿԱՐԵՎՈՐ ԱՐԺԵՔ

Հարցազրույց «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲ ընկերության մարդկային ռեսուրսների ղեկավարի Մարինա Մեյմարյանի հետ

«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ ամենակարևոր արժեքն ընկերության աշխատուժն է: Իսկ աշխատող-ղեկավարությունն առողջ փոփոխաբերությունն ընկերության կայունության հիմնական բաղադրիչն է: Այդ ամենի դրվածքին և իրականացվող բաղաբանական ծանոթանալու նպատակով գրուցեցինք ընկերության աշխատուժի (մարդկային ռեսուրսների) ղեկավար Մարինա Մեյմարյանի հետ:

«**Ք**ոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ընկերության մասին խոսելիս նախևառաջ կենտրոնանում ենք արտադրվող էլեկտրոգիայի, տեխնիկական ցուցանիշների և խնդիրների վրա: Անշուշտ, դրանք կարևոր հանգամանքներ են, բայց իրականում ընկերությունը Գորիսի և Սիսիանի տարածաշրջանների ամենախոշոր գործատուն է, ինչը չափազանց ուշագրավ հանգամանք է: Որքան մարդ է ընդգրկված ընկերությունում: Անցած հինգ տարում նոր աշխատատեղեր ստեղծվել են, թե՛ ոչ:

– Անշուշտ, մարդկային կապիտալը, որպես աշխատակցի գիտելիքների, փորձի և հմտությունների ամբողջություն, ընկերության կարևորագույն բաղկացուցիչ մասն է կազմում: Պետք է ասեմ, որ «ՔոնթուրԳլոբալ» ոչ միայն Սյունիքի մարզում է խոշորագույն գործատու, այլ նաև կարևորագույն դեր է խաղում Հայաստանի Հանրապետության համար առաջատար:



Ըբ՝ որ այն ամենամեծ բիզնես ներդրումն է ՀՀ-ում: Սա իր հերթին մեծ պատասխանատվություն է դնում մեր թիմի յուրաքանչյուր աշխատակցի գործունեության վրա, այն է՝ մեր ամենօրյա աշխատանքում համապատասխանել ընկերության որոշեցրած ընթացակարգերին և չափանիշներին, ինչը, հուսամ, կարող եմ փոքրիկ մանրակրկիտ ներկայացնել:

Մեր հայաստանյան թիմը կազմված է մոտ 130 աշխատակցից՝ բաշխված համապատասխանաբար ըստ գրասենյակների և կայանների: ԸԳ-ում աշխատելու բազմաթիվ առավելություններից մեկն

այն է, որ շփումը չի սահմանափակվում 33 սահմաններով և մեր հայկական թիմով: Ընկերությունը գործունեություն է ծավալում 18 երկրում: Այսպիսով՝ մեր ամենօրյա աշխատանքում նաև սերտ համագործակցում ենք արտերկրյա գործընկերների հետ՝ իրենցից փոխառելով աննկարագրելի միջազգային փորձ, ինչպես ասում են՝ «բառակուսուց դուրս» մտածելակերպ և նորարական ոճով, կարծրատիպերից դուրս լուծումների կիրառում: Պատահական չէ, որ ԶԳ առանցքային արժեքներից մեկն է՝ *Աշխատել առանց սահմանափակումների՝ որպես բազմազգ, ինտեգրված թիմ:*

Անցած հինգ տարվա ընթացքում, անշուշտ, ստեղծվել են նոր աշխատատեղեր: Դրան նպաստել է նաև վերագինման ծրագիրը, որն իր ավարտին կհասցնենք այս տարի: Որպես մարդկային ռեսուրսների կառավարման ղեկավար, այստեղ կուզենայի լշել, որ անգամ այն պաշտոնները, հաստիքները, որոնք նույնն են մնացել, անցել են հսկայական էվոլյուցիոն ճանապարհ՝ կրելով գործառնությունների, որակների, հմտությունների հսկայական փոփոխություններ: Այսպիսով՝ կուզենամ հավաստել, որ մարդիկ, որոնց հետ անցել ենք այս ուղին, նույնպես մեծ մասնագիտական աճ են գրանցել՝ շատերը դառնալով միջազգային ցուցանիշներով իրենց գործի վարպետները:

– Կադրերի և հատկապես մասնագետների ընտրությունը, սերնդափոխությունն անընդհատ գործընթաց են: Զետաբրքիր է՝ իՆՆ սկզբունքով եք առաջնորդվում կադրեր ընտրելիս, որո՞նք են կադրերի ընտրության հիմնական չափորոշիչներն ընկերությունում: Արդյո՞ք օտար լեզուների իմացությունը պարտադիր է մասնագետների համար:

– Սկսեմ վերջին հարցից. վստահեցնում եմ, որ ժամանակակից աշխարհում անվերելի իմացությունն այլևս պարտադիր կամ գոնե կարևորագույն պայման է: Մենք ապրում ենք թվայնացված, տեխնոլոգիական հեղափոխության դարաշրջանում, և գոնե երիտասարդ սերունդն անվերելի բավարար իմացություն պիտի ունենա: Ավելորդ եմ համարում լշել, որ ԶԳ-ը ամերիկյան ընկերություն է, և, բնականաբար, մեծ նախընտրություն է տրվում անվերելի իմացությանը, առավել ևս՝ ղեկավար պաշտոնների համար, որտեղ ուղղակի անհնար է աշխատել առանց անվերելի գործածության:

Սերնդափոխության մասին. ԶԳ-ն արագ տեմպերով զարգացող և սրընթաց փոփոխվող միջավայրով ընկերություն է: Այո, դա նշանակում է, որ սերնդափոխությունը մեր ռազմավարական մոտեցումներից պիտի լինի: Ամեն ամիս ներդրվում են նոր ամպային տեխնոլոգիաներ,

հաղորդակցման նոր միջոցներ, արտադրական նոր տեխնոլոգիաներ, որոնք այլ որակներ են պահանջում: Մենք բոլորս, որպես մեկ կուռ թիմ, ամեն օր կանգնում ենք նոր մարտահրավերների առջև և միասին լուծում դրանք՝ հաճախ ընթացքում շատ բան սովորելով և սերտելով: Ովքեր չունեն մասնագիտական համապատասխան պատրաստվածություն, ճկուն մտածելակերպ և նորն արագ սերտելու ունակություն, ցանկություն, կարծում եմ, չեն կարող ԶԳ մշակույթի կրողը լինել: Կորպորատիվ մշակույթի մասին նույնպես կխոսեմ ստորև՝ ավելի մակրամասն: Բայց մի բան հստակ է՝ առաջնային նախապատվությունն աշխատանքի ընդունվելիս տրվում է այն թեկնածուներին, ովքեր ԶԳ արժեքների և բարոյականության դեպքում կամ կրողը կլինեն: Բնականաբար, արհեստավարժ հմտությունները ոչ ոք չի չեղարկել, մենք նույնպես անդադար փորձում ենք ներգրավել պրոֆեսիոնալների: Բայց առավել արժեքավոր ենք համարում այն թեկնածուներին, ովքեր կորպորատիվ մշակույթի տարածողն են դառնում ընկերության ներսում և ինչու չէ՝ կենցաղում: Քանի որ անհատին կարող ենք կրթել, սովորեցնել, կատարելագործել, բայց եթե տարբեր արժեքամակարդի կողմ է, ապա դա գրեթե անհնար է կամ շատ բարդ խնդիր:

Պիտի լշել նաև, որ ԶԳ ավագ սերնդի՝ ինժեներների, արտադրական անձնակազմի տարիների կուտակված փորձն անգնահատելի է: Նրանց շնորհիվ ի վիճակի ենք լինում ապահովել անձնակազմի համալրումը նոր, երիտասարդ կադրերով: Ինձ թվում է՝ մեր՝ հայերիս, գենետիկ կողի մեջ է լավագույնը մեր հաջորդողներին փոխանցելը: Սա շատ վառ երևում է մեր փորձառու, կայացած մասնագետների աշխատատեղում, ովքեր անում են ամեն ինչ, որ երիտասարդ կադրերն արագ ինտեգրվեն և մասնագիտական աճ ցուցաբերեն:

– Որքանով տեղյակ ենք՝ ընկերության արժեքամակարդի մեջ մտնում են որոշակի չափանիշներով պայմանավորված աշխատանք, աշխատանքային մշակույթ: Այսինքն՝ աշխատողին ներկայացվում են բարոյական ու գեղագիտական որոշակի պահանջներ: Այդ ամենի մասին կուզենայինք իմանալ:

– Յուրաբանչյուր ընկերության կազմակերպչական մշակույթը և արժեքները նրա ապագայի և գործունեության հենասյունն են: Մեր արժեքներն ընկած են ամենօրյա աշխատանքի հիմքում, դրանք են կողմնորոշում մեր վարքը և որոշումները թե՛ տանը, թե՛ աշխատավայրում: Եթե հակիրճ, ապա դրանք են՝ գործել թափանցիկ և ազնիվ, հոգալ աշխատակիցների առողջության, անվտանգության, բարեկեցության մասին, աշխատել

ինչպես բազմազգ մեկ թիմ, կատարելագործվել և շարունակ սովորել, հարգել այն մարդկանց հանձնառությունները, ովքեր վստահել են մեզ:

ԶԳ հաջողության հիմքում ընկած է նաև մեր սխալներից դաս բաղելու փիլիսոփայությունը. գործառնական գերազանցության հասնելու համար՝ թափանցիկ, միմյանց չմեղադրելու և հարգանքի դրսևորմամբ: Օգտագործում ենք «Հինգ ինչուի մեթոդը», որը ճապոնական Lean Management-ի գործիքներից է՝ ձախողումների վերլուծության սխեմա: Հիմնված է այն ակնհայտ ճշմարտության վրա, որ բոլոր ընկերություններն էլ ձախողում են, սակայն առաջադիմական ընկերությունները չեն թաքցնում իրենց անհաջողությունները, այլ՝ հակառակ՝ բարձրաձայնում են դրանք, վերլուծում անհաջողությունները՝ դրանց կրկնությունը կանխելու նպատակով:

– Նոր տեխնոլոգիաների տեղադրման-մոնտաժման բուն ընթացքը, ենթադրում ենք, գլխավորապես իրականացվում է տվյալ սարքավորումները թողարկող գործարանների մասնագետների ուժերով՝ նրանց այստեղ հրավիրելով: Մի բանի խոսք այդ մասին: Եվ արդյո՞ք հրավիրվածները կադրեր են պատրաստում այստեղ՝ տեղական աշխատուժից:

– ԶԳ ինժեներական թիմը հավասար աշխատում է մեր կապալառուների հետ՝ այսպիսով անգնահատելի փորձ ձեռք բերելով օտարերկրյա գործընկերներից: Վերջին երկու տարվա ընթացքում բազմաթիվ գործուղում-թրեյնինգներ են կազմակերպվել Ավստրիայում, Պորտուգալիայում, Գերմանիայում, որպեսզի մեր արտադրական թիմը հենց գործարաններում անցնի գործնական ուսուցում: Ավելի քան վստահ ենք, որ մեր շահագործման թիմը պատրաստ է գործարկել արդիականացված սարքավորումները:

– Ի սկզբանե որդեգրել եք նաև մեկ այլ՝ «Նպատակը՝ դժբախտ պատահարների գրոյական ցուցանիշ» սկզբունքը: Արդյո՞ք անցած տարիներին հաջողվել է լիարժեք կյանքի կոչել այդ նպատակը:

– ԶԳ համար աշխատանքի անվտանգությունն առաջնային է: Այո, ընկերությունը որդեգրել է գրո վնասի բարոյականություն՝ երաշխավորելու համար, որ մենք մեր աշխատակիցների, կապալառուների, այցելուների համար ստեղծում և պահպանում ենք անվտանգ աշխատավայր: Մենք յուրաբանչյուր գործողություն, հանդիպում, ամսական հաշվետվություն սկսում ենք տեխանվտանգության համար տարված աշխատանքների քննարկմամբ, մի խոսքով՝ անում ենք ամեն ինչ, որ յուրաբանչյուր անձ ամեն օր ապահով տուն վերադառնա: Վտանգը ժամանա-

կին գնահատելու համար շարունակ իրագործվում են բազմաթիվ միջոցառումներ՝ միջադեպերի մասին զեկուցում, միջազգային ընկերությունների կողմից կատարվող անկախ աուդիտներ, աշխատավայրի կանոնավոր ստուգումներ: Այս ամենը նաև նպաստում է մեր տեխանվտանգության մասին մշակույթի և գիտակցության ամրապնդմանը: Ցավոք, անցյալ տարի պատահար ունեցանք և չկարողացանք 100%-ով համապատասխան լինել մեր որդեգրած նպատակներին: Բայց հավատարիմ մնալով թափանցիկ գործելաճիև և ձախողումներից էլ ավելի ուժեղ դուրս գալու փիլիսոփայությանը, արել ենք ամենը, որպեսզի նմանատիպ դեպք այլևս չարձանագրվի և մեր աշխատակիցները ավելի պաշտպանված և ԱՊՏԱ գիտակից լինեն:

– Ընկերության աշխատակիցներին գնահատելու ի՞նչ սկզբունքներ գոյություն ունի. միայն ֆինանսական, թե՞ նաև բարոյական:

– Այս հարցի շրջանակում կուզենայի անդրադառնալ ԶԳ ամենամյա կատարողականի ընթացակարգին, որը նաև ներառում է պարզազավճարների և աշխատակիցների գնահատման գործընթացը, և ոչ միայն: Ինչո՞ւ է գրավիչ և միջազգային լավագույն փորձառությունների համապատասխան, կհարցնեք դուք. նրանով, որ գնահատելով աշխատակցի տարեկան կատարողականը՝ գնահատվում է թե՛ նրա ներգրավվածությունն ընկերության արժեքների և սկզբունքների տեսանկյունից և թե՛ տարվա սկզբում դրված 5 նպատակը: Այսինքն՝ մենք պարզազավճարների քաղաքականությունը մշակել ենք «կատարողականի դիմաց վճարելու» սկզբունքով, այսպիսով՝ ապահովելով հնարավորին օբյեկտիվ գնահատում:

Ի՞նչ է արվում այս ամբողջ գործընթացի շրջանակներում:

- Համապատասխանեցվում են ընկերության բիզնես և կադրային քաղաքականությունները:
- Ապահովվում է աշխատակից / ղեկավար ամենամյա գնահատում և հետադարձ կապ:
- Պարզազավճարների մասով կայացվում են որոշումներ:
- Սահմանվում են վերապատրաստման և զարգացման հեռանկարները:
- Սահմանվում են պաշտոնի բարձրացումներ:
- Սահմանվում են պարզազավճարների և բազային աշխատավարձի տրամադրման մասով ճշգրտումներ, եթե

CONTOURGLOBAL



ՏԱԹԵՎ ՀԵՎ TATEV HPP

ՆՊԱՏԱԿԸ՝ ԴԺՔԱՆՑ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ ԶՐՈՅԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ

ՍԵՂԵՆԱԳՈՒԹՅԱՆ ԳՐԱՅՆԱԳՆԵՐԻ ՊԱՐՏԱԳԻՐ ԿԱՏԱՐՈՒՄ

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԵՂԵՆԱԳՈՒԹՅԱՆ ՏԵՆԻՒԿԱՅԻՑ

ՇՆՆԵՆ ԱՐԳԵԼՎՈՒՄ Է ԱՐԳՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԾԱԿՈՒՄ 20

ԱՇԽԱՏՈՒՆԵՐ ԵՎ ԿԱՊԱՆԱՌՈՒՆԵՐ

ԱՅՑԵԼՈՒՆԵՐ

ՍԵՂԵՆԱԳՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԳՐՈՒՄ	ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԿՈՐԿՆԵՐ	ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ՍՈՐԿՎԱՐՍ	ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԿՈՐԿՆԵՐ	ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ՍՈՐԿՎԱՐՍ	ՄԱՆԱԲԱՅՆՈՒՄ ԿՈՐ
ՍԵՂԵՆԱԳՈՒՆԵՐԻ ԿՈՐԿՆԵՐ ԿԱՅՐԵՐՈՒՄ	ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԱՆՈՒՑՆԵՐԻ ԿՈՐԿՆԵՐ ԿԱՅՐԵՐՈՒՄ	ՏԵՂԵՆԱԳՈՒՆԵՐԻ ԿԱՅՐԵՐՈՒՄ	ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԱՆՈՒՑՆԵՐԻ ԿՈՐԿՆԵՐ ԿԱՅՐԵՐՈՒՄ		

2021	ՏԱՐԱԿԱՅԻՆ ՄՈՒՇԵՎ ԳՈՐԾ	ՆՊԱՏՈՐ ՑՈՒՑ
ԱՇԽԱՏԱՅԻՆ ՄԱՍԻՆ ԿՈՐԿՆԵՐԻ ԳՐԱՅՆԱԳՆԵՐԻ ԳՐԱՅՆԱԳՆԵՐԻ ԳՐԱՅՆԱԳՆԵՐԻ ԳՐԱՅՆԱԳՆԵՐԻ	0	1
ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ ԳՐԱՅՆԱԳՆԵՐԻ ԳՐԱՅՆԱԳՆԵՐԻ ԳՐԱՅՆԱԳՆԵՐԻ ԳՐԱՅՆԱԳՆԵՐԻ ԳՐԱՅՆԱԳՆԵՐԻ ԳՐԱՅՆԱԳՆԵՐԻ	0	1
ՕՐԵՐԻ ՔԱՆԱԿ ԱՇԽԱՏԱԿԻԿՆԵՐԻ ԿՈՐԿՆԵՐ ԿԱՅՐԵՐՈՒՄ ԳՐԱՅՆԱԳՆԵՐԻ ԳՐԱՅՆԱԳՆԵՐԻ ԳՐԱՅՆԱԳՆԵՐԻ ԳՐԱՅՆԱԳՆԵՐԻ ԳՐԱՅՆԱԳՆԵՐԻ	192	

...ԶԳ համար աշխատանքի անվտանգությունն առաջնային է: Այո, ընկերությունը որդեգրել է զրո վնասի քաղաքականություն՝ երաշխավորելու համար, որ մենք մեր աշխատակիցների, կապալառուների այցելուների համար ստեղծում և պահպանում ենք անվտանգ աշխատավայր:



կա դրանց կարիքը: Աշխատակիցների գնահատումը սկսվում է ինքնագնահատականից, ինչը հնարավորություն է տալիս տարվա մարտահրավերների և ձեռքբերումների մասին զրույց ծավալել: Դեկավարը կառուցողական հետադարձ կապ է տալիս, ինչպես նաև զաղափարներ՝ վերապատրաստման և զարգացման պլանի վերաբերյալ: Հաշվի են առնվում ոչ միայն աշխատակցի անհատական նպատակներին հասնելը, այլ նաև բիզնեսի կորպորատիվ նպատակները տվյալ տարվա համար, օրինակ ԱՊՏԱ կատարողականը, հաստատուն ծախսերը բյուջեի համեմատ և այլ ԿՊՑ-ներ (Key Performance indicators KPIs). մի խոսքով, երկար կարող

են խոսել մեր կատարողականի գործընթացի մասին, որը, ինչու չէ, լավ օրինակ կարող է ծառայել մյուս ընկերությունների համար ևս: Ամփոփելով կատեմ, որ փաստորեն աշխատակիցների տարեկան գնահատումն ընկերությունում իրականացվում է երեք տեսանկյունից՝ բիզնեսի հաջողակ, եկամտաբեր լինելը, ֆինանսական և բարոյական արժեքներ:

– Աշխատուժի հետ տարվող քաղաքականության մեկ այլ արդյունքի մասին կուզենայինք իմանալ: Մեր հանրապետությունում ընդունված է գործածել «միջին ամսական աշխատավարձ» հասկացությունը: Եթե գաղտնիք չէ, ընկերությունում որքան էր միջին ամսական աշխատավարձը հինգ տարի առաջ և հիմա:

– Բնականաբար, պայմանները շարունակ բարելավվում են, և դա ժամանակի հրամայականն է: Եթե ցանկանում ենք պրոֆեսիոնալ մասնագետներ հավաքագրել և պահել նրանց ընկերությունում (ինչն ավելի բարդ խնդիր է), պետք է լինենք մրցունակ, ապահովել այնպիսի վարձատրություն, որպեսզի աշխատակիցը հնարավորինս քիչ մտահոգ լինի կենցաղային խնդիրների մասին, մոտիվացնել թիմակիցներին, որպեսզի դա միայն ֆինանսական բնույթ չունենա, այլ բովանդակային բավարարվածություն նաև լինի կատարած աշխատանքից: Իհարկե, սխալ կլինի համեմատականներ անցկացնել անցյալի և ներկայի միջև: Կուզենայի, որ մեր հասարակությունն աշխատողի վարձատրության վերաբերյալ այլ մոտեցում ցուցաբերի և պայմանագրային դրոյթները, որոնք գաղտնի և կոնֆիդենցիալ տեղեկություն են, մասն միմիայն գործատու-աշխատակից հարաբերություններում:

ՀԱՐՑԱԶՈՒԹՅԱՆ ՏԻԳՐԱՆՈՒԻՒՄ ԲԱՂԱՆՅԱՆ

ԷՋԵՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԻՑ

Թե ինչպես լույս աշխարհ եկավ Տաթև ԻԷԿ-ը



ԺՈՐԱ ՄԱՆՈՒՅՅԱԼ

Օրվա հիամայական պահանջ էր դարձել Զանգեզուրը հիդրոէներգետիկայի շտեմարան դարձնելը: 33 առաջին դեմքերն այդպիսի մղումով էին որոշում կայացրել 60-ական թվականներին ու գործի անցել՝ գիտակցելով, որ Զանգեզուրը, Նաև ամբողջ Հայաստանը, դրա կարիքը շատ ունեն: Դարեր շարունակ ապարդյուն հոսող Որոտան գետի ջրերը կարելի էր սանձել, հունը փոխել, ջրի ուժն օգտագործել՝ էլեկտրաէներգիա արարելու, լեռնաշխարհի խավարը ցրելու նպատակով...

Հայաստանի տարածքով հոսող գետերի մեջ Որոտանն իր երկարությամբ գրավում է չորրորդ տեղը: Գետը տարեկան տառում է ավելի քան 700 մլն խորանարդ մետր ջուր: Հայաստանի տարածքում այն գլխապտույտ արագության 3045մ բարձրությունից իջնում է մինչև 700 մ՝ կատարելով 2345մ անկում, և այսքանը միայն 119կմ տարածության վրա: Հաշվարկը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր կմ վրա նրա հունի անկումը կազմում է 20մ: Այդ ամենի արդյունքում Որոտանն էլեկտրական էներգիայի անսպառ աղբյուր է հանրապետությունում:

Նախնական հաշվարկներով՝ գետի վրա կարելի էր կառուցել էլեկտրակայանների մի ամբողջ համալիր: Այն կունենար 405 հազար կվտ ընդհանուր կարողություն, տարեկան կարտադրվեր մեկ մլրդ 200 մլն կվտ-ժամ էժան էլեներգիա: Այն կփոխեր ողջ Զանգեզուրի դեմքը, նրա ներքին, արտաքին տեսքն ու կյանքը՝ երաշխիք լինելով նաև հազարավոր

հեկտար ծարավ հողատարածությունների ոռոգման, նորակերտ բնակավայրերի շենացման, կանաչ տարածքների ստեղծման, նորացվող տնտեսության մեքենայացման:

...1958թ., երբ գարնան շունչն իր դաղձախառն, ծաղկավետ, հրապուրիչ բուրմունքն էր սփռել Զանգեզուրի լեռնաշխարհում, 344 44 առաջին քարտուղար Սուրեն Թովմայանը, Հայաստանի Միևիստրների խորհրդի նախագահ Անտոն Քոչինյանը, Հայէներգոշինի վարչության պետ Սուրեն Վարդանյանը, Նախագծող բարձրակարգ ինժեներներ Երևանից ժամանեցին Զանգեզուր «Վիլիս» ավտոմեքենայով: Միևիստի տարածքում կանգ առան, ուսումնասիրեցին տեղանքը՝ մինչև Շահվերդյար (այժմ՝ Որոտան գյուղ) Որոտան գետի վրա հիդրոկայան կառուցելու նպատակով: 18 կիլոմետր ճանապարհն անցան նաև ոտքով: Նպատակն էր՝ որոշարկել ուղղությունը, որ գետնի տակով՝ 300 մետր խորությամբ, Միևիսնից մինչև Շահվերդյար ստորգետնյա ճանապարհով, թունելով Որոտանի ջրերը հոսն դեպի Նշված վայր:

Աշխատանքները նորմալ էին ընթանում: Հայաստանի Հանրապետության բարձրաստիճան ղեկավարները, նրանց հետ եկած մասնագետները կարողացան համաձայնության գալ ու որոշել հիմնահարցը՝ Շահվերդյարում, Որոտան գետի ձախ ափին, Գորիսից Կապան ձգվող ավտոխճուղու կամիջին չիսասած, բարձրադիր ժայռի ստորոտում կառուցել հիդրոէլեկտրակայան:

...Նախագծանախահաշվային փաստաթղթերը պատրաստ էին 1961 թվականին:

Խոշոր կառույցի աշխատանքները 1961թ. սկսվեցին ճանապարհաշինարարությունից:

...Գյուղի մի քանի երիտասարդներ, Հիևուհայրի մեքենատրակտորային (ՄՏԿ) կայանի շենքերի մոտ կանգնած, զրուցում էին սովորականի նման: Նրանց է մոտենում անծանոթ մի մարդ, ձեռքով բարևում բոլորին ու անմիջապես ներկայացնում իր ով լինելը:

– Եկել եմ «Հայիդրոէներգոշին» վարչությունից, Որոտան գետի վրա ՅԷԿ ենք կառուցելու, որ կոչվելու է Տաթև ԻԷԿ:

Ներկայանողը Մարտել Հարությունյանն էր, ով դարձավ Տաթև ԻԷԿ-ի Հի-

ևուհայրի կառույցի առաջին պետը (ղեկավարը): Նրա հայտնած ուրախ լուրը գրավեց երիտասարդ մարդկանց ուշադրությունը, ջերմացրեց նրանց սրտերը և հետաքրքրությունից վառված՝ ուշադրությամբ լսեցին Մ.Հարությունյանի խոսքի շարունակությունը: Վերջում հայտարարեց, որ Հիևուհայր գալու իմաստն այն է, որ հենց այսօրվանից հավաքագրեն ու ցուցակագրեն կառույցում աշխատել կամեցող մարդկանց:

Ամմիջապես կազմվեց շինարարական բրիգադ, որը համալրվեց երիտասարդներով. բրիգադավարի պաշտոնը ստանձնեց Յուրիկ Սարգսյանը: Բրիգադի մարդիկ գործի անցան եռանդով: Նրանց առջև խնդիրը դրվեց՝ կառուցել Հիևուհայրից Հայիձոր գյուղի տարածք, դեպի մայր թունել տանող ճանապարհ, որը կոչվեց տարածքի անունով՝ «Հայիձորի շտրեկ»: Հիևուհայրից «Հայիձորի շտրեկ» ճանապարհի հեռավորությունն ութ կմ է: ճանապարհի կառուցումը պետք է ավարտվեր երեք ամսում: ճանապարհի հողային աշխատանքները կատարելուց հետո քարապատվեց ու խճապատվեց, բանվորների թիվը հասել էր 50-ի, որոնք եկել էին Գորիսի քաղաքից ու շրջանի գյուղերից:

«Շտրեկ» տանող ճանապարհի կառուցման աշխատանքների ավարտից հետո բրիգադը բաժանվեց նախ երեք, ապա՝ չորս տեղամասի՝ Հիևուհայրի, Հայիձորի շտրեկի, Խոտի՝ «Խազալ կապ» տեղամասի և շինարարության՝ Հիևուհայրի տեղամասի: Չորս տեղամասից հետո բացվեցին այլ արտադրաշինարարական տեղամասեր ևս՝ Հիևուհայրի սղոցարանը, մեխանիկական արհեստանոցը, երկաթբետոնե կառուցվածքների գործարանը: Գործի դրվեց հզոր ավտոհավաքակայանը: Վերջինիս համար ծառայեցվեցին Հիևուհայրի ՄՏԿ-ի շինությունները:

«Շտրեկի» ճանապարհի կառուցումն ավարտելուց հետո սկսվեց Հիևուհայր-Խոտ-«Խազալ կապ»-Շահվերդյար (դեպի Որոտանի ափ իջնող) դժվարամատչելի, ոլորապտույտ ճանապարհի կառուցումը:

Տաթև ԻԷԿ-ին՝ այս խոշոր կառույցի բոլոր տեղամասերի շինարարական աշխատանքների կազմակերպումը 1961թ. մայիսից ղեկավարում էր Միսակ Սարգսյանը, ով և այդ կառույցի հիմնադիրն էր: Նրան փոխարինեց Խոտրով Դուրյանը, ով նույնպես մեկ տարուց փոքր-ինչ ավելի աշխատեց, և Նախորդի պես արժանավոր, բանիմաց ու հարգված մարդ էր:

1962թ. սկսվեց «Խազալ կապից» Որոտանի ափ ճանապարհի շինարարությունը: Ինչպես արդեն նշեցինք, տեղանքի ռելիեֆն ուներ շատ բարդ կառուցվածք՝ բարձրադիր ու ցածրադիր լեռներ, ձորեր ու ձորակներ, թեթ լանջեր, գաղիթափեր...

Մի քանի ամիս անց լեռնային բար-

ծուկ քննարկում և քննարկում անհրաժեշտ է օգտագործել հարկային օրենսդրության մեջ ներդրված փոփոխությունները... Եվ օրական հարյուրավոր մեքենաներ էին Ղազախստանից երթնելու և Գորիս, Շինուհայր, Երևան և հակառակ ուղղությամբ, իսկ բեռնատարները Որոտանի ձախ ափին կառուցվելիք հեկ-ի շենքի ծնունդն իրականացնող աշխատանքների համար կյոթեր, հունք և օժանդակ միջոցներ էին տեղափոխում...

Այսօր Գորիսում, որ ճանապարհի ժամկետից շուտ ավարտն ինքնին նախանշում է Տաթև հեկ-ի աշխատանքների արագացումը: Երիտասարդ բրիգադի բոլոր ութ տղաները կոմերիտականներ էին՝ Միխայել Բարսեղյան (ղարաբաղցի-Մարտակերտ), Ռուդոլֆ Սկրտչյան (Գորիսից), Ժորա Շիրիլյան, Ռազմիկ Համբարձումյան, Յուրիկ Սարգսյան, Յուրիկ Սարգսյան, Վլադիկ Հայրապետյան, Մարտուն Գալստյան (Շինուհայրից): Բրիգադը ղեկավարում էր Միխայել Բարսեղյանը: Երկու օր առաջ տեղի ունեցած բազմամարդ միտինգի մասնակիցներն ուրախ տրամադրությամբ, երգ-երաժշտության օգնությամբ հեղյուղների ներքո դիմավորեցին շինարարության պետ Սիսակ Սարգսյանին, ով, բացելով միտինգը, ժպիտը դնելով ողջունեց հավաքվածներին:

– Այժմ մենք պատվոգիր ենք հանձնում կոմերիտական բրիգադի անդամ մի թունելագործի, ով իր ջանքերը մեծ նվիրումով ներդրել է Բրատսկի հեկ-ի կառուցմանը, իսկ այժմ արժանացել է Էներգետիկայի միևնույնության բարձր պարգևին, – ասում է հանդիսավորությամբ սեղմում է Միխայել Բարսեղյանի ձեռքը:

Երիտասարդ բրիգադավար Միխայելի մասին ջերմ խոսքեր ասացին նաև Դերենիկ Սարգսյանն ու բրիգադի մարդիկ: Նրանք սկսել էին «Խազալ կապից» ներքև խոշոր ջրամբարտակ՝ թունելի ելքով դուրս ժայթքող Որոտանի ջուրը ժամանակավոր կանգնեցնելու, հանգստացնելու կարգավորիչ հանգույց կառուցելու, ապա ջրամբարտակից հսկայական խողովակաշարը լայնաշրջան երախով, կատաղի հոսքով դեպի Շահվերդյար՝ ՋԷԿ-ի կողմը մղելու աշխատանքը, որը շարժման մեջ էր դնելու հսկա գեներատորները:

Հորատանցման աշխատանքների մասին

Սիսիանի տարածքում սկսվել էին հորատանցման աշխատանքները: Ստորգետնյա ճանապարհի ուղղությունը տալու էր դեպի Յախնուհայր շտրեկ, որտեղից հորատողների բրիգադը պետք է հետագայում հորատանցում կատարեր դեպի Սիսիան, իսկ մյուս բրիգադի մարդիկ ճանապարհ բացեին դեպի Շինուհայրի տեղամաս և այստեղից մյուս բրիգադը՝ դեպի «Խազալ կապի» տեղամաս: Այսպես էին կոչվում այդ տեղամասերը՝ Սիսիանի

N1, Յախնուհայրի N2, Շինուհայրի N3, «Խազալ կապի» N4:

Սկսվել էր աշխատանքային եռուզեռն ինչպես վերերկրյա, այնպես էլ ստորգետնյա պայմաններում: Տաթև հեկ-ի շինարարների կոլեկտիվում, որտեղ աշխատում էին 20-ից ավելի ազգերի ներկայացուցիչներ, շարունակվում էր գոտեմարտը Որոտանի հետ՝ նրա քմահաճ հոսքին նոր ուղղություն տալու, ապարդյուն ընթացքի արդյունավետ դարձնելու նպատակով:

Շինուհայրի, Սիսիանի ու Յախնուհայրի տեղամասերից մինչև «Խազալ կապի» տեղամասը վերածվել էր ընդարձակ հրապարակի: Շինուհայրի, Գորիսի շրջանի այլ գյուղերի՝ Խոտի, Զարահունջի, Յարժիսի, Յախնուհայրի, Տաթևի, Սվարանցի, Տանձատափի և հանրապետության ու Խորհրդային Միության տարբեր բնակավայրերի հարյուրավոր մասնագիտացված բանվորներ, ինժեներներ, տեխնիկներ և այլ մասնագիտությունների տեղ մարդիկ եկել էին մասնակցելու ինտերնացիոնալ մեծ կառուցչի շինարարությանը: Արագորեն վեր էին սլանում բնակելի շենքերը: Մինչ այդ աշխատողների համար բնակարան էին ծառայում 2-3 սենյականոց 24 հավաքովի ֆինանսական տնակները, որոնց կառուցման ու տեղադրման աշխատանքներն ավարտվեցին 10 օրվա ընթացքում: Գորիսի շրջանի բնակչությունը մի նոր կյանք ու նոր ժամանակաշրջան սկսեց ապրել. երգ-երաժշտություն, կինո, թատրոն, էժան ապրանքներ ու սնունդ, հոգևոր կյանքի զարթոնք, հազարամյակների պատմություն ունեցող շատ գյուղերի՝ անդնդախոր ձորերից դուրս գալ, բնակարանային շինարարություն...

Տաթև հեկ-ի կառուցման աշխատանքներին մասնակցում էին նաև շատ կալանավորներ:

«Կոմունիստական աշխատանքի հարվածային» կոչման համար

Տաթև հեկ-ի շինարարության հերոսները դարձան առանձնապես հմուտ, փորձ ունեցող մարդիկ, որոնց շարքերը համարվեցին նորերով ու այլազգի շինարարներով:

Պատահական չէ, որ ճշման տեղամասի շրջանում՝ «Խազալ կապում», Որոտանի ափին, վեր է խոյանում մի շքեղ ավան: Հրճվանքով էր լցվում սիրտը, երբ կանգնում էիր քարափին ու դիտում աշդեկ Բալթեկ Բեշիշյանի շինարարական տեղամասի աշխատանքը, որը փռված է «Շինարարության բլրի» հարավ-արևելյան ստորոտում, որտեղ կառուցվում էր Շինուհայր բանավանը:

Ներկայացնենք մի երիտասարդի, ով ակտիվ մասնակցություն է ունեցել Աթարբեկյան հեկ-ի կառուցմանը, իր ընկերների հետ պայքարել ու արժանացել կոմունիստական

տական աշխատանքի հարվածային կոչմանը: Իսկ Մնացական Հովհաննիսյանն արժանացել է Լենինի շքանշանի:

...Ահա և հորատողներ Դուկիկ Սկրտչյանը, Գուրգեն Գասպարյանը, Կոյա Հովսեփյանը: Հմուտ թունելագործներ են, արդեն հորատանք են 50 մետր տարածություն ու լուսավորել լեռան ընդերքը, իսկ դրանց շարքերում, փոքր-ինչ տարիքով փորձառու վարպետ Միշա Խեչոյանն է, ով նույնպես Աթարբեկյան հեկ-ից է եկել:

Ինչպես արդեն ասել ենք, Տաթև հեկ-ի շինարարության հաջորդ պետը Խոսրով Դուրյանն էր, ով կառավարեց ընդամենը մեկ տարի: Կառույցի ղեկավարման մեծ բաժինը պատկանում է Գեղամ Սարգսյանին, ում կառավարման օրերին Շինուհայր գյուղն ամբողջովին տեղափոխվեց նոր վայր:

Շինուհայր բանավանը

Շինուհայրեցու տարիների ցանկությունն ու երազանքը մի օր իրականություն դարձան: Չկար արդեն նախկին զարմանքը Տաթևից շինարարության հանդեպ, արդեն համոզվում էր գերիշխում օբյեկտիվ իրականության հանդեպ: Ոչ թե զարմանք, այլ ուրախություն էր ծնվում հոգուդ մեջ, երբ աչքովդ տեսնում էիր ամեն օր վեր բարձրացող շինությունները: Այր, տեսնում էինք և ուրախություն ասպում: Շինուհայր բանավանում իրար հետևից վեր էին բարձրանում բնակելի հյուսկապ շենքերը: Կառուցվեցին 24 բնակարանից բաղկացած եռահարկ 8 բնակելի շենք, բաղնիք, կաթսայատուն, հացի փուռ, խանութներ, մանկապարտեզ, գրասենյակներ, ճաշարան, հիվանդանոց, դպրոց ու նաև ստորգետնյա պահեստ մթերքների պահպանության համար: Շինուհայր բանավանը դարձավ գողտրիկ մի բնակավայր՝ ընկրմված պտղատու ծառերի, կանաչների ու վարդերի մեջ: Աշխատանքից հետո Տաթև հեկ-ի աշխատողներն այստեղ էին անցկացնում իրենց ազատ ժամանակը: Բանավանի տեղամասի պետն էր Հենրիկը: Ամենօրյա կինոցուցադրումները, թատերական ներկայացումները, համերգները, մարզական խաղերն ու բազմազան այլ միջոցառումները մեծ բավականություն էին պատճառում բնակիչներին:

Երկաթբետոնե կառուցվածքների գործարանը

Գործարանը կառուցվել է Շինուհայրի ՄՍԿ-ի շինություններին կից ազատ տարածության վրա: Այդտեղ աշխատում էր 150-ից ավելի մարդ: Չնայած կային տարբեր մասնագիտության տեղ մարդիկ, բայց գործարանը կարիք ուներ ավտոկոնկրետավարների: Սմբատ Պապյանը, Ժորա Աթայանը, Մելիսի Հարությունյանը գործուղվեցին Նովոսիբիրսկ բաղաբ՝ վե-

րամբարձ կռուկավարի դասընթացներում սովորելու: Ավարտելուց հետո, երբ անցել էր ութ ամիս, երիտասարդ մասնագետները ներկայացան ու աշխատեցին ավտոկռուկավար: Ս.Պապայանը, մինչև 1967թ. աշխատելուց հետո, Նույն մասնագիտությամբ աշխատեց Գորիս քաղաքում՝ Տաթևահեղեղի կողմից կառուցվող բնակելի շենքերի շինարարությունում:

Գործարանն իր թողարկած արտադրանքով սպասարկում էր Հինուհայրի, Որոտանի, Սիսիանի, Գորիսի, Հալիձորի տեղամասերին, ապա նաև Հինուհայրի ռետինե կոշիկների կառուցվող գործարանին: Հետագայում Հինուհայր գյուղի հյուսիսարևմտյան մասում կառուցվեց երկաթբետոնե կառուցվածքների երկրորդ գործարանը:

Ավտոմեքենաներ

Ավտոմեքենաների այս հավաքակայանը «Հայէներգո» տրեստի տեղամասի կենտրոնն էր: Ուներ տարբեր մակնիշի 130 բեռնատար և մարդատար մեքենա: Ժողովրդատնտեսական բեռների տեղափոխումը կատարվում էր Կապանից, Երասխավանից, Երևանից, Լուսավանից և հանրապետության այլ քաղաքներից ու շրջաններից: Ավտոպարի աշխատողների թիվը կազմում էր 180 մարդ: Ձեռնարկության առաջին վարիչը Գուրգեն Դյուխանյանն էր, ով աշխատեց 1961 թվականից մինչև 1962 թվականի աշունը: Լավագույն մարդուն և կազմակերպչին, ով գյուղի բնակիչների հետ սերտ կապերի մեջ էր, փոխարինեց Արամ Սարգսյանը: Այս 1965թ. հավաքակայանի վարիչ նշանակվեց Վաղիմիր Պողոսյանը: Ավտոմարդուները Գորիսից, մերձակա գյուղերից էին: Միայն Հինուհայրից հավաքակայանում աշխատում էր 40 ավտոմարդու:

Ճաշարանների միավորումը

Այս նշանավոր կազմակերպությունը Տաթևահեղեղի աշխատողներին մնորամթերքով ու արդյունաբերական ապրանքներով մատակարարող-ապահովող ձեռնարկությունն էր, որը բոլոր շինարարական տեղամասերում ուներ իր օբյեկտները՝ Հինուհայրում, Որոտանում, «Խազալ կապում», Շորեկում, Սիսիանում: Սպասարկումը կանոնավոր էր, սանիտարահիգիենիկ առումով՝ կատարյալ: Տաթևահեղեղի բանվորների սպասարկման վարչության պետը եղել է Յուլյանը, ով աշխատել է երեք տարի: Նրան փոխարինել է Սամսոն Հակոբյանը (Գորիսից)՝ մի բարեկիրթ, խելացի, բարեխիղճ մարդ: Վարչության պետ է աշխատել նաև Օգսեն Սեմիրջյանը: Նրա մասին քիչ տեղեկություններ գիտենք, բայց հայտնի էր որպես բանիմաց աշխատող: Պետի պաշտոնն ավելի երկար զբաղեցրեց Ազատ Սարգսյանը, ով Նույնպես անբասիր աշխատող

էր: «Օրսի» վարչության գրասենյակը Տաթև հեղեղի կառուցվածքի հետո տեղափոխվեց Սիսիան:

Ակնի ջուրը բարձրացավ բանավան

Ակն աղբյուրը գտնվում է Հինուհայր գյուղից դեպի արևմուտք՝ «Ակնի բլուր» ստորոտում: Մի հսկա գետ էր դուրս գալիս: Այս ջրի մասին գիտեին հանրապետությունում ու նրանից դուրս: Եվ իզուր չի եղել վարչության համապատասխան ղեկավարների կողմից կազմած ծրագիրը՝ ջուրը պոմպակայանի միջոցով Տաթևահեղեղի կառուցող բնակիչներին հասցնելու վերաբերյալ:

Այդ աշխատանքում ընդգրկվեցին հմուտ ու արհեստավարժ գործողներ՝ Անուշավան Դավթյան, Պավլիկ Բախչյան և Յուրիկ Բեգարյան: Ակնի ջուրն անդնդախոր ձորից պոմպակայանի միջոցով մոտ 1կմ երկարությամբ խողովակաշարով (տեղ-տեղ 50-60 աստիճանի թեթևությամբ), բարձրացավ ու լցվեց գյուղի «Հինարարության բլուր» գազաթին կառուցված բետոնապատ կարգավորիչ ջրամբարը: Այնտեղից ջուրը խողովակաշարով հասավ Շահվերդյար ու Շորեկ:

Գյուղացի Սիսայել Սարգսյանը, ով առաջ քեֆերում, հարսանիքներում երգում էր՝ «Ակնի ջուրը կլիսանտվեր (վերևից ներքև) քյունում»՝ հայտնի երգը, դրանից հետո շուտ էր տվել՝ «Ակնի ջուրը տական տիյի քյունում, տեն, ծաղիկը ծաղկին նհետ խոսում ա»:

Մեխանիկական արհեստանոցը

Հինուհայրի ՄՏԿ-ի շինություններն օգտագործվեցին հզոր կառուցիկ համար: Նշված արհեստանոցի շենքում տեղադրվեցին ժամանակակից սարքավորումներ: Արհեստանոցում աշխատում էր մեկ տասնյակից ավելի մարդ՝ խառատներ, գործողներ, դարբիններ և այլն: Այստեղ առաջնակարգ մասնագետներ էին խառատներ Լադիկ Առաքելյանը, Պավլիկ Վարդանյանը, Սարուխան Բարսեղյանը, ուրիշներ: Արհեստանոցը սպասարկում

Տաթև հեղեղի շինարարության հետ համաքայլ թափ առավ պետական և մասնավոր շինարարությունը: Տարածաշրջանում կառուցվեցին Նոր գյուղեր, երկհարկանի հարմարավետ բնակարաններ:

Եր Տաթևահեղեղի բոլոր տեղամասերին: Ամենօրյա պատվերները կատարվում էին ակթերի ու որակով: Արհեստանոցի վարիչն Արարատ Դավթյանն էր: Դրա կողքին էր գտնվում տրակտորների հավաքակայանը, այն զինված էր հզոր տրակտորներով և այլ տեխնիկայով, կոլեկտիվը ղեկավարում էր Լիպատովը, նրա օգնականն էր հալիձորցի Պետրոս: Տրակտորների և այլ մեխանիզմների հավաքակայանի հարևանությամբ էր գործում մոնտաժի տեղամասը, երկաթյա ձողերի միացման տեղամասը, որտեղ աչքի ընկնող ամրանագործներ էին Հմայակ Ներսիսյանը և Սպարտակ Հակոբյանը:

Տեղամասի բոլոր աշխատողները հմուտ մասնագետներ էին: Այս տեղամասը ղեկավարում էր Նույն՝ երկաթբետոնյա կառուցվածքների գործարանի տնօրեն Արշակ Գրիգորյանը: Հմուտ շինարար էր, եկել էր իր մասնակցությունն ունենալու Չանգեգուրի մեծ կառույցին:

Տաթևահեղեղի մյուս կարևոր օբյեկտները դարձան սոցցարանը և ավագահանքը:

Սոցցարանն աշխատում էր երկու հերթով: Վազոններով շինափայտն իր ձևն էր ստանում սոցցարանում: Տաթևահեղեղի բոլոր տեղամասերը շինափայտով ապահովվում էին սոցցարանից: Սոցցարանը բաց էր թողնում գերաններ, տախտակե շիթեր, դռան և լուսամուտի շրջանակներ, դռներ, հատակի տախտակներ, շենքի տանիքի ձողեր և փայտյա այլ շինվածքներ: Ավագահանքը գտնվում էր Հինուհայրի բանավանի հյուսիսային մասում՝ թիկնած մի հսկայական բլրի, որը նախկինում կոչվում էր Մատաղաբլուր, իսկ հետագայում՝ 1931թ. երկրաշարժից հետո, շինարարության բլուր: Այդ ժամանակ Հինուհայր էր եկել ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Ադասի Խանջյանը՝ կառավարության ղեկավարների ուղեկցությամբ՝ երկրաշարժից տուժածներին օգնություն ցույց տալու նպատակով: Որոշվեց Հինուհայր գյուղը ձորից տեղափոխել հարթություն: Նույն տարում հարթության վրա սկսվեցին բնակարանների կառուցման աշխատանքները և օգտագործեցին մոտակա բլրի ավազը. այդ օրվանից այն կոչվեց Հինարարության բլուր:

Ավագահանքն ուներ ավագի տեսակավորման մի քանի մեխանիզմներ, բարձիջներ, հզոր բուլդոզերներ: Ավագահանքն ավագ է մատակարարել Գորիսին ու նրա գյուղերին:

Թունելագործները

Հինուհայր ու հարևան գյուղերից եկած հարյուրավոր երիտասարդներ աշխատում էին թունելի տարբեր տեղամասերում: Մեծամասամբ առաջնեկ թունելագործ վարպետներից նրանք սովորել և դարձել էին վարպետներ, տիրապետել



ստորգետնյա բարդ ու դժվարին աշխատանքներին: Միայն Շինուհայր գյուղից 20-ից ավելի երիտասարդ աշխատում էր թունելի տարբեր տեղամասերում: Հայի-ծորի տեղամասի N2 կոչվող շտրեկի մի բրիգադ գնում էր ստորգետնյա ճանապարհի բացելու Սիսիանի ուղղությամբ, իսկ Սիսիանի N1 շտրեկի թունելագործները գալիս էին դեպի Շինուհայրի N3 տեղամասի կողմը: Հայիծորի N2 շտրեկից դեպի Շինուհայրի N3 տեղամաս եկող բրիգադի թունելագործներն ութ տարի շարունակ աշխատեցին միասին: Շինուհայրի N3 շտրեկի տեղամասի պետն էր Ալեքսանդր Բուշնևը: Նա եկել էր Ռուսաստանից, մասնակցել էր Բրատսկի հեկ-ի կառուցմանը, հմուտ և փորձառու թունելագործ էր: Լսել էր Հայաստանի հեռավոր շրջաններից մեկում՝ Չանգեզուրում, կառուցվող հսկա կառույցի մասին և եկել: Տեղամասի ղեկավարումը ստանձնելուց հետո մեծ պատասխանատվության հետ մեկտեղ գործի է դնում գիտելիքները ու հարուստ աշխատանքային փորձը: Ա. Բուշնևի կինը՝ Վալյան, ուսուցչուհի է աշխատել Շինուհայրի միջնակարգ դպրոցում, իսկ երբ դպրոցահասակ երեխաների թիվը մեծացավ, բացվեցին ռուսական դասարաններ: Միևնույն կոլեկտիվում աշխատող Վալյա Բուշնևան, Մարիա Օնիշենկոն, Գալինա Գորբաչովան (Ֆյոդորովա) դարձան Շինուհայրի մանկավարժական կոլեկտիվի լիիրավ անդամներ:

Խոտի «Խազալ կապի» տեղամասի թունելագործները շարժվում էին դեպի Շինուհայրի թունելախորշ տանող ուղղությամբ: Հայիծորի N2 տեղամասի թունելագործների մյուս բրիգադը շարժվում էր Սիսիանի ուղղությամբ: Այս բրիգադի ղեկավարն էր հալիծորցի Սամսոն Խաչյանը: Բրիգադը համարված էր համապատասխան մասնագետներով: Այստեղ բնակվում էին ընտանիքավորներ: Հասիհան դարձած երեխաների համար բացված եռակուսյա դասարանում ուսուցչի պահանջ կար, անհրաժեշտ էր ուսուցիչ գործուղել: Գորիսի շրջողկրթբաժնի վարիչ Ա.Առաքելյանը 1968-69 ուստարին նոր սկսած, կանչեց ու ասաց.

– Մանուցյան, պատիվ չի բերում թունելագործների երեխաներին թողնել դպրոցից դուրս, արի համաձայնվիր, գնա՛ Շտրեկ ու աշխատիր այնտեղ:

Մեծ ուրախությամբ հրամանը ձեռքիս ներկայացա աշխատանքի:

Թունելագործները որոշեցին մեկնել օգնության Խոտից եկող հորատանցողներին: Իրար դեմ էին գալիս արդեն Շինուհայրից ու Խոտից եկող թունելախորշերը: 1.5 տարի անցնելուց հետո թունելագործները հանդիպեցին Խոտի տեղամասում: Թունելագործներն արժանացան Հայաստանի կառավարության բարձր պարգևներին:

Շինուհայրի թունելագործներից շատերը գնացին մասնակցելու Սիսիանում կառուցվող Որոտանի կասկադի երկրորդ հերթի՝ 171 հազար կիլովատ հզորությամբ Շամբի հիդրոէլեկտրակայանի թունելախորշի աշխատանքներին: Սիսիանի շինարարության պետն էր Ջրբաշյանը:

Տաթև հեկ-ի շինարարության պետ Գեղամ Սարգսյանին փոխարինելու եկավ Միքայել Ալոյանը: Նրա գլխավորությամբ կառուցվեցին անավարտ մնացած շինությունները՝ Խոտի «Խազալ կապ» ջրամբարի կառուցումը, Շինուհայրի բանավանի մաքրման կայանը և այլ շինություններ:

Լուրջ և դժվարին աշխատանքներ էին տարվում «Խազալ կապի» ջրամբարի մերձակայքում: Ամենադժվարին աշխատանքներից մեկը դարձավ ջրամբարից դեպի հեկ-ի շենքը տանող հսկա խողովակների գողումն ու խողովակների տեղադրումը: Դրան զուգահեռ անց էր կացվում ստորգետնյա թունել՝ ջրամբարից դեպի հեկ-ի շենքը: Թունելի աշխույժն էր փորձառու Ջերոս Ավետյանը:

Տաթևհեկչի շինարարության պետ Մ.Ալոյանին փոխարինեց Ալբերտ Բաբայանը, ով Տաթևհեկչին վերջին պետն էր. միևնույն ժամանակ գլխավոր ինժեներն էր: Նա կարողացավ ի մի բերել եզրափակիչ աշխատանքների կտորիկ-նացումը և այն հասցնել ավարտին ու վերջնական հաղթանակի:

Հեկ-ի աշխատանքները վերջնազծին հասան շենքի կառուցումով և բարդ ու հզոր սարքավորումների տեղադրումով:

Տաթև հեկը լույս աշխարհ եկավ և լույս ճառագեց Չանգեզուրում:

Մյուս կառույցների մասին

Հզոր կառույցի շինարարության տարիներին զուգահեռաբար կառուցվեցին կարևոր նշանակություն ունեցող օբյեկտներ: Գորիսում և Երևանում Տաթևհեկչի աշխատողների համար կառուցվեցին բնակելի շենքեր, բոլոր դիմողներն ապահովվեցին հարմարավետ բնակարաններով: Կառուցվեց Տաթևի առողջարանի շենքը: Շինուհայրում կառուցվեցին երկհարկանի ռետինե կոշկեղենի գործարանի տուֆակերտ չորս հարկանի վարչական շենքը, արհեստանոցը, հզոր կաթսայատունը, իրջեջ ծառայության շենքը և հզոր մաքրման կայանը:

Գործարանի կաթսայատան հզորությունն այնքան մեծ էր, որ ջեռուցում մատակարարեց բանավանին, Շինուհայրի դպրոցին, կուլտուրայի տանը, կապի բաժանմունքին, գյուղական խորհրդի շենքին, կենցաղի տանը:

Աշխատողների կենցաղային պայմանների մասին

Բոլոր աշխատողները ստանում էին բարձր աշխատավարձ: Բարձր էր սպա-

սարկման կուլտուրան: Մեծամասնություն էին կազմում մարդիկ, ովքեր աշխատավարձից տնտեսած փողը պահում էին դրամարկղերում: Երիտասարդության համար գործում էին ֆուտբոլի, բասկետբոլի, վոլեյբոլի, բռնցքամարտի և այլ խմբակներ: Գործում էր գրադարանը, որն ուներ մինչև 10000 կտոր գրականություն: Գրադարանն ուներ ընթերցասրահ: Կուլտուրայի օջախներում մշտապես գործում էին երգի, պարի, թատերական, երաժշտական ինքնագործ խմբեր, որոնք հաճախակի հանդես էին գալիս հոծ բազմության առջև: Կինոն մեծ մասսայականություն էր վայելում: Վերջին տարիներին մուտք գործեց հեռուստացույցը: Կենցաղում գործում էր հեռախոսակապը: Տաթևհեկն ուներ իր սեփական հեռախոսային կայանը:

Կարևոր գործունեից մեկը համարվեց տրանսպորտը. մարդատար ավտոբուսներն օրվա մեջ մի քանի անգամ մեկնում էին Գորիս :

Վերջաբանի փոխարեն

Առաջնեկը տվեց իր արտադրանքը՝ տարեկան 500 մլն կվտ-ժամ էլեկտրաէներգիա: Այն մտավ Շինուհայրի ենթակայան, սկսեց Էներգիա մատակարարել Գորիսին, Չանգեզուրի մյուս շրջաններին, Հայաստանի ժողովուրդին:

1970թ. Տաթև հեկ-ի գործարկումից հետո արտադրած էլեկտրաէներգիան մտնում էր Շինուհայրի ենթակայան: 1961թ. սկսվեց ենթակայանի կառուցումը, որն ավարտվեց 1966թ.: Այն մեծացրեց ու զարգացրեց Հայաստանի Էներգետիկայի բազան, Չանգեզուրը դարձավ Էներգիայի հզոր աղբյուր: Շինուհայրի ենթակայանից էլեկտրաէներգիա էր մատակարարվում Չանգեզուրի քաղաքներին ու գյուղերին, արդյունաբերական ձեռնարկություններին, հանքարդյունաբերությանը, շինարարությանը, կոլտնտեսություններին: Չանգեզուրի Էներգացանցը միացվեց Հայաստանի Էներգահամակարգին:


Տաթև հեկ-ի շինարարության հետ համաբայլ թափ առավ պետական և մասնավոր շինարարությունը: Տարածաշրջանում կառուցվեցին նոր գյուղեր, երկհարկանի հարմարավետ բնակարաններ: Գյուղերը նմանվեցին քաղաքներին: Վերանում էին գյուղի և քաղաքի միջև եղած տարբերությունները: Սյունիքի բոլոր քաղաքներում շաբաթ մտան արտադրական խոշոր օբյեկտներ, լայն թափ առավ պետության կողմից կառուցվող բնակարանային շինարարությունը: Գնալով շահութաբեր դարձավ էկոնոմիկան:

Հ.Գ. Հողվածն առաջին անգամ հրատարակվել է 2011 թ. մայիսի 28-ին՝ «Այոնյաց երկիր» թերթում՝ «Տաթևհեկ. Դարի կառույցը Չանգեզուրում» վերտառույթամբ:

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ծաղկած քարեր

ՌԱՏՎԱԾ ՄՈՒՇԵՂ ԳԱԼՇՈՅԱՆԻ ՀԱՄԱՆՈՒՆ ԺՈՂՈՎԱԾՈՒԻՅ



Տարեկան լուսավորչության քարտուղար Գագիկ Հայրուժանյանը ՍՍՀՄ-ի քարտեզը փակցրել է աշխատասենյակում, քարտեզի վերևը գրել. «Մեր անծայրածիր հայրենիքի որ մասից ասես, որ մարդիկ չեն աշխատում մեր կառուցումը»: Յետո Գագիկը որոնել՝ քարտեզի վրա ճարել է այն կետը, որը պետք է կառուցի տեղը լինի (ո՛չ բաղաբ, ո՛չ ավան, ո՛չ գյուղ, այլ ընդերք՝ թունել) և այդ կետի վրա կարել կարմիր մի կոճակ, իսկ կոճակը ծածկել է Գորիսը, Հանգեզուրը, Հայաստանը: Եվ կոճակից կարմիր-թեղ

ճառագայթները տարել՝ Լենինգրադ, Տալլին, Գորկի, Տագի, Տաշքենդ, Դուշամբե, Նովոսիբիրսկ, Իրկուտսկ... Թեղ ճառագայթներից մեկն էլ կտրել-անցել է Օխոտյան ծովը, հասել Խաղաղ օվկիանոսի ափերը:

Էս ինչ չշեղծելու աշխարհ է. ես աշխարհի աչքադեմից ոչ մի ձոր թաքուն, իր համար մի կողմ ընկած պահել չես կարող, ոչ մի տրաբոց ականջի կողքով չի անցնի, միայն թե ինքը՝ աշխարհը կամոք աչք ու ականջ չփակի: Ուրեմս, Խաղաղ օվկիանոսի ափից Իվան Սոկոլնիկովը տեսավ, որ, Է, աշխարհի են ծերին մի «կարմիր կոճակ» կա, կոճակի տակ մի կետ, եր կետը Գագիկը ծակեց, – դ՛հմ-դ՛հմ, – Խաղաղ օվկիանոսի ջրերը խառնվեցին իրար, – Օհ՛հ, թունելի ձայն է, – և Սոկոլնիկովը վեր կացավ, եկավ: Մինչև տեղ հասնելը նա գիտեր նաև գետի Որոտան անունը, գիտեր, Որոտանի վրա Սատանի կամուրջ կա: Եվ դեպի Որոտան գետը ուղղություն վերցրած այլագգի Իվան Սոկոլնիկովը սուր ու թուր ջուներ և ճանապարհին իր թուրը չէր սրում, երկար ու մանրակրկիտ չէր սրում՝ որ գար, կանգնեք Սատանի կամուրջին և մի հարվածով թոցներ Որոտանի գլուխը: Ճանապարհը երկար էր, և Իվանը մի երկու շիջ օդի առած իր համար կամաց-կամաց խմելով գալիս էր: Եկավ, տեղ հասավ, ճանապարհի հոգնածությունը մի հորանջոցով դեն գցեց և հարցրեց, – Ի՞նչ է պատահել, բրատոկ:

Ուրեմս, Է, էսքան ժամանակ Որոտան գետը իր 200 կիլոմետր ճանապարհին հազար տեղ սխալվել՝ խոտոր ճամփով է գնացել, ու սյունիքները չե՛ն իմացել, – ահա թե ինչ: – Իսկ թե Ավանես ապորը հարցնես, կասի.

– Չէ, այ բալամ, մեր գետը սխալ չունի, – Որոտանի պատիվը կպաշտպանի ինչպես իր բեղերինը, որը ոչ երկար է, ոչ կարճ, ոչ ցանցառ, ոչ խիտ, այնպես, ինչպես պետք է լինի:

– Որոտանը հազար չար ու փորձանքից է մեզ

փրկել:

Ավանես ապերը որ ասում է Որոտան, պետք է հասկանալ Որոտան գետ և Որոտան ձոր:

Հմ, Որոտանը Սյունիք աշխարհը ոտք կոխած թշնամու թիկունքին մտրակ է եղել, ամպերից իջած կայծակ-լախտ՝ ծայրը Արաբսի մեջ, դաստակը վեր-վեր-վեր, երկու հազար յոթ հարյուր ութսուն մետր բարձր: Եվ հարվածի թափից շառագուն, եւ դարձեցրան: Սյունիք աշխարհը ոտք կոխած թշնամիներն այդ մտրակի տակից դուրս գալու համար որոնել են ու գտել Սատանի կամուրջը: Իսկ Սատանի կամուրջը գողտուկ կապվել է Որոտանի վրա, զգույշ ու դավադիր: Որոտանի ձորի ափից մի քիչ ջուր է մի օր ելել, սողալով իջել, ընկել է գետի ոտքը, սողետող գնացել՝ ընկել ոտքը, սողացել՝ ընկել ոտքը և ճանապարհին օձի պես թողել իր շափկը, ամեն օր՝ օձի պես մի շափկ՝ գունարվել են, բազմապատկվել, Է, բազմապատկվել են ու կարծրացել, մի օր էլ գետը տեսել է, որ եղ բարակ-մարակ, սողետող իր ոտքը եկող ջուրը նեղում է՝ և գայրացել է ու գալարել մեջքը, բայց եղ լղարիկը բաշվել է վեր, թափվել, թափվել, շափկը թողած՝ կարկտի պես ծեծել է Որոտանի գլուխը... Եվ մի գիշեր էլ Որոտանի մեջքին է գարկել իր բոլոր շափկներից հյուսած երկաթե թամբը, –Սատանի կամուրջը, – Եվ մի տեղ Սյունիք ոտք կոխած թշնամիների թիկունքին իջած մտրակը քարի տակ ընկել, – Սատանի կամուրջը, – և Սյունիք կոխած թշնամիները որոնել ու գտել են այդ քարը, –Սատանի կամուրջը:

– Յիմա որ վեր ենք կացել, ի՞նչ խելք եք ուզում սովորեցնել ես գետին, – Ավանես ապերը խորամանկ ժպտում է բեղերի տակ: Եվ այդ բոլորի մեջ մի ազնիվ բան կա: Որ Որոտանի ձորում, գետափին, հազար տեղ պայթյուն ու որոտ է, որ մարդիկ գետին մտ լինելու համար, ձորն իջնելու փոխարեն, գետն են բաշում իրենց մոտ՝ սարերը, որ... որ... Որոտանի մասին ամեն ինչ գիտի ծերունիկ և եղածի համար հոգու խորքում ուրախ է, բայց ծափ չի տալիս. չի ուզում դավաճանել իր իմացած, իր հին, մանկության ընկեր Որոտանին... Նա մի երեխա էր, ուրախ, ուրախությունը շղարշած և ընկերոջ համար լեզվակռիվ տվող:

– Գետին ինչ խելք պետք է սովորեցնել, Ավանես ապեր, – հարցը չհասկանալու եմ տալիս:

– Եսպես, էի, ի՞նչ եք ուզում սարքել եղ գետից:

Սիսիանում Որոտան կասկադի աշխղեկ Ոստանիկ Հայրապետյանը երկար բացատրում էր, թե ինչ են ուզում «սարքել» եղ գետից: Կիրճում Որոտան գետի ափին կանգնած բացատրում էր. ծեռքը մեկնում էր աջ՝ ցույց տված ուղղությունը, հայացքիս հետ, դեմ էր առնում ժայռերին ու մնում կիրճում, բացատրում ցույց էր տալիս ձախ-ուղղություն, նույնը. կիրճից երկինքն էր երևում միայն և մինչև ձորի ծունկը՝ Որոտան գետը: Ոստանիկը բացատրում, մեջ-մեջ հարցնում էր, – հասկանալի՞ է, – լռում էի: Յետո նայեց աչքերիս, տեսավ, որ չեմ հասկացել, ժպտաց, գրպակից հանեց ծոցատետրն ու մատիտը և սկսեց նորից.

– Ուրեմս սա Բազարչայ գյուղն է:

Իսկ Բազարչայի պատմական անունը Ակունք է, և Ոստանիկը պատմական Ակունքի ու հորինված Բազարչայի գլխին խաչ բաշեց՝ ոչ ինձ, ոչ թեզ և առավ շրջագծի մեջ:

– Այստեղ Սպանդարյան ջրամբարն է լինելու:

Ջրամբարի մոտից սկսեց՝ կետ-գիծ, ...--.--.--

Սա թունել է:

Մի տանսիկն իմ կիլոմետր կետ-գիծ արեց և Շա-

դատ գյուղի մոտ ջուրը դուրս բերեց թունելից ու թափով բաց թողեց հիդրոկայանի գլխին:

– Սպանդարյան ՅԷԿ-ն է:

Այդտեղից Ոստանիկը թույլ տվեց, որ Ռոտան գետը մի քիչ տեղ իր հունով գնա և ծոցատետրում մի կարճ գսպանակ գծեց, ու ծայրը փակեց շրջանագծով:

– Ջրամբար է, Անգեղակոթի մոտ:

Անգեղակոթի մոտ Ռոտանն արդեն խտոր իսկույնով էր գնում և ջրամբարի միտքը գետին նոր ուղղություն տալն էր և մեկ էլ կցել կտրված թունելը. և Ոստանիկը կետ-գծով. հասավ մինչև Աշոտավան գյուղը, գյուղի գլխին խաչ քաշեց:

– Էստեղ Աշոտավան-Տոլորս ջրամբարն է:

Եվ գծեց ոչ թե շրջան, ինչպես Անգեղակոթի և Ակունքի ջրամբարներին էր, այլ նկարեց տաբատ:

– Ջրամբարը չալվարի ձև ունի, Էս փողքի մոտ Տոլորսն է, Էս մեկի մոտ՝ նոր Աշոտավանն է կառուցվել: Ջրամբարից ջուրը կմտնի... – Ոստանիկը ոտքի կանգնեց և ձեռքը մեկնեց թունելի մուտք դուռը, որը մեզանից մի քանի քայլ այն կողմ էր, – մեր թունելը:

Յերթափոխի թունելագործ տղերքը եկել-նստել են քարերին, հաց ու պանիր են ուտում, կատակում են, ձեռք առնում իրար, հիմա պիտի վեր կենան, մտնեն թունելը, ճակատները դեմ անեն ապառ ու որձաբարի:

– Սա կոչվում է ճշումային թունել-Ոստանիկը ոտքի վրա արդեն յոթ կիլոմետր կետ-գիծ արեց՝ Ռոտանը դուրս բերեց ճշումային թունելից՝ ուղղեց կիրճում սպասող հիդրոէլեկտրակայանի գլխին:

– Շամբի հԷԿ-ն է, – աշխատեցրեց և ջուրն ազատ արձակեց Շամբի ջրամբարը: Շամբի ջրամբարից ու Սիսիանի շրջանից Ոստանիկը ջուրը պիտի կետ-գծով տաներ՝ հասցներ Գորիսի շրջան, աշխատեցներ Տաթևի հիդրոէլեկտրակայանը, բայց ծոցատետրի թերթում տեղ չկար արդեն, և նա լրիվ շրջանի փոխարեն Շամբի ջրամբարի համար կիսաշրջան գծեց, իսկ Գորիս գնացող 18 կիլոմետրանոց թունելի կետ-գծերը շարունակեց, Գորիսի ուղղությամբ՝ կետ-գիծ, .—.

Յիմա նստել են Ավանես ապրո կողքին, Ոստանիկի բացատրածը կրկնում են, հասել են Շամբից Գորիս գնացող 18 կիլոմետրանոց թունելին, ասում ու թղթի վրա նշում են, կետ-գիծ, .—.—.—.—.—. և ձեռքս չի պոկվում թղթից ու զգում են, որ ատամներս սեղմվում են. հորատող թունելագործի մկանների էլեկտրակա-նությունը փոխանցվել է ինձ:

– Յա՛, ձգում է Ավանես ապերը,-դժվար է, դժվար է... Եղբանի փոխարեն մի թազա գետ կհանեի՛նք, էլի:

– Որտեղի՞ց հանենք:

– Էն սարի տակից:

Իսկ Էն սարի տակը Տաթևի հիդրոէլեկտրակայանի կառույցն էր, սպասող՝ նույն Ռոտան գետը:

Յա՛, գետը իր Ռոտան անունը պիտի թողնի ձորում և Գորիսի լեռները բարձրանա մի խոնարի անունով «Ռոտանի ոռոգման սիստեմ»: Պիտի ելնի՞ գլուխսկախ, առանց շառաչ ու որոտի, առանց փեղրը ծեծելու պիտի գնա...

– Էսպես, – տեխնիկ Ռաֆիկ Դինկյանը ձեռքը մեկնում է դեպի ջրանցքը:

Ապա խազավկապ սարի պորտից ո՛չ գահավիժելու է ձորը, ո՛չ նոր հուն է քանդելու.

– Կմտնի, Էս խողովակաշարը:

Կմտնի, կբարձրանա ու ձորափին, որը սար է ու սարի գագաթ, չի ժայթքի, այլ կպառնի ու հանգիստ կգնա...

– Էս ջրանցքով:

Եվ ջրանցքը երկար չէ, մի երկու հարյուր քայլ



գնում է ու կախվում կիրճի գլխին: Ռոտանն է, հիմա ջրվեժ կդառնա...

– Կմտնի Էս խողովակաշարը... Էս թունելով կանցնի... Կգնա Էս ջրանցքով... Էս ջրիան կայանից կմղվի... Էս թունելով կանցնի... Կգնա Էս ջրանցքով... Էս խողովակաշարով կմտնի-կբարձրանա... Կգնա այ Էս ջրանցքով... Էս խողովակաշարով կիջնի... Կմտնի Էս թունելը... Կմտնի Էս խողովակաշարը: (Էս խողովակաշարը օդում պտտվող է, Ռոտանի երկնքում կպտտվի կպտտվի և...) Էս խողովակաշարով կմտնի Էս կիրճը... Էս ջրիան կայանից կմղվի... Էս ջրանցքով կգնա...

– Խեղճի հոգին դուրս կգա, – տնքում է Ավանես ապերը, և հասկանում են, որ կատակն ու լուրջն իրար խառնող ծերունու մտքում մի մարդ կա, դադրած ու տաք շնչով մեկը, որ Ակունքից ռետինե մի խողովակ շալակած, սուրացող ջրի թափից գալարվող ռետինե մի խողովակ ունև առած, քայլում է Չանգեզուրի աշխարհի սար ու ձորերով, քարշ տալիս խողովակը, հայացքով կառչում է լեռնագագաթներից, մագնցում, կիրճում ճակատով է բացում ճամփան, քաշում, քաշքշում է ռետինե անհանգիստ խողովակը:

– Էս ջրանցքից էլ ծայր կառնեն գյուղեր գնացող ոռոգիչները:


Դրանք արդեն բազում են և բազում ուղղություններով՝ կաղնու արմատների պես, և Ռաֆիկ Դինկյանը լեռան բարձունքին կանգնած նայում է շուրջբոլորը՝ վարը երևացող գյուղերին ու դաշտերին:

– Յա՛, գետը իր Ռոտան անունը պիտի թողնի ձորում, Գորիսի լեռները պիտի բարձրանա մի խոնարի անունով, գլուխը կախ գա, հասնի Էս բարձունքը և... Էս լեռան կատարին Ռոտան գետը պիտի դառնա ծառ՝ աստղերը պիտի վառվեն սաղարթի մեջ, իսկ արմատները պիտի քշեն-տարածվեն Չանգեզուր աշխարհում:

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Որոտանի կիրճում

■ ՀԱՏՎԱԾ ԱԿՆԱՐԿԻՑ



ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ

Ղարադամի թանձր խավարի մեջ՝ մեռնող տատրակի սրտի նման թրթռում էր ճրագի բոցը, և այդ աղոտ բոցի տակ այնքա պապս հեքիաթներ էր պատմում լուսավոր աշխարհի և լույսի թագավորության մասին:

Պատմում էր, թե ինչպես մի անգամ, անհիշելի ժամանակներում, երբ դեռ աշխարհում չկային Որոտանա բերդն ու Տաթևի վանքը, Ղամշա սարը հրաշքով շարժվել է տեղից, չոքել Որոտանի կիրճում, փակել գետի ճանապարհը:

Պատմում էր, թե ինչպես մոլեգնած գետը գլուխը զարկել էր քար ու քարափներին, պղտոր ալիքները փշրել ապառաժների վրա, մռնչացել անձավների մեջ, ուռել, փրփրել զայրույթից, հետո իր հատակից հուր ու բոց ծայթթել մինչև երկինք և լուսավորել ամբողջ Չանգեզուրը՝ Իշխանիկի լանջերից մինչև Արամազդի գագաթները և Սավարդի փեշերից մինչև Գյազբելի արծվաբնակ քերձերը...

– Եղել է, թե չի եղել, այդ հեքիաթ հնարողը գիտե, – շարունակում էր պապս, – բայց եթե չի եղել, պետք է լինի: Պետք է լինի, որովհետև աշխարհը բռնել է լույսի ճանապարհը:

Վերջանում էր պատրույզը, սպառվում էր նավթի վերջին կաթիլը ճրագում, մարում էր բոցը: Պապս քնում էր բուրսու կարպետի ծայրը քաշելով վրան, իսկ մենք երկար-բարակ մտքով թափառում էինք լուսավոր աշխարհներում և լույսերի թագավորության մեջ...

Լույսի երագանքը զանգեզուրցուն ուղեկցել է վաղնջական անցյալներից, անցել է սերնդե-սերունդ, որդուց-որդի:

Նա, հին զանգեզուրցին, մթին քարանձավի և մրոտ դարադամի բնակիչը, լույսի հասկացողության հետ է կապել իր բոլոր սրտագին օրհնանքներն ու անողոք անեծքները: Լույսի հետ է համեմատել իրեն համար ամենից նվիրականն ու գեղեցիկը և ինչ-որ իրեն խորթ է եղել ու ատելի, համեմատել է խավարի հետ: – Ուր որ գնաս, ճանապարհիդ վրա լույս կաթի, լույս դառնան ծնողներդ, – ասել են մեկին օրհնելիս, իսկ անիծելիս ասել են՝ աչքիդ լույսը խավարի, երկինքը մթնի գլխիդ վրա, լույսի շողը մոտ չգա երդիկիդ:

– Աչքդ լույս լինի, – ասել են որևէ առիթով մեկին շնորհավորելիս: Աչքդ լույսով լիքը լինի, լույսերի մեջ կենաս, – եղել է պատասխանը:

– Աղջիկ չի է, լույս ա լույս, մութի մեջ էլ շափաղ կտա: Գեղեցիկ աղջիկներն այսպիսի բնորոշումով են ներկայացվել հարսնացու փնտրողներին: Իսկ երբ խոսք է բացվել մի չար մարդու մասին, ասել են՝ թող կորչի, անուճը մի տվեք, խավար մարդ է...

Վերջանում էր պատրույզը, սպառվում էր լիքը լցրած նավթի վերջին կաթիլը ճրագում, մարում էր բո-

ցը... բայց այդպես լինում էր տարին մի անգամ: Միայն մի անգամ՝ այն օրերին, երբ գյուղը նավթ էր գալիս:

– Այ նավուք այլան, այ նավուք այլան... Տարածվում էին նավթավաճառ ուղտապանների կանչն ու բոժոժների զրնգոցը ձյունապատ բլուրների վրա. արծազանք տալիս քերձերի խոռոչներում, զարկվում քար ու քարափներին, փշրվում խոր ձորերի մեջ, երդիկներից ծորում խավար խրճիթները:

Այդ ձայների վրա մեծ ու մանուկ, հարս ու աղջիկ բարձրանում էին կտուրները, նայում դեպի Դարբասի լանջը: Լանջն ի վար, ոլորուն պարանի պես մի կանաչ-նուրբ իջնում էր ուղտերի քարավանը, որը կարծես թե խոշոր հատիկներով թագբեռ լիներ Ցից քարից կախված Դարբասի վրա...

Գյուղ էին մտնում Մուղանի անծայրածիր տափաստանն ու Չանգեզուրի լեռներն անցած հոգնատանջ ուղտերը: Այ նավուք այլան, այ նավուք այլան... սկսվում էր նավթի առևտուրը: Այդպիսի ուրախություն գյուղում ոչ բարեկենդակին էր լինում, ոչ գատկին, ոչ էլ վարդավառին: Եվ միայն այդպիսի օրերին էր, որ մեր լույսը վառվում էր մինչև վերջանում էր նավթի վերջին կաթիլը ճրագում...

Գյուղացիներն առնում էին սև նավթը, լցնում տիկերի, հին կճուճների, ունկը կոտրած կճերի և դորակների մեջ: Դա նրանց լույսի մի ամբողջ տարվա պաշարն էր:

Լույսի պաշարը... Ինչպիսի խնայողությամբ էին բանեցնում նավթը: Ամռան երեկոներին ընթրիքի սուփրան բացում էին կամ լուսնի լույսի տակ, կամ, եթե լուսին չկար, վառվող օջախի առաջ: Իսկ ձմեռն ընթրիքն առնում էին մինչև մթնելը: ճրագը վառում էին միայն անկողինները բացելիս մի քանի րոպեով և մեկ էլ գոմում, «տավարին ակը տալիս»: Նավթը պահպանում էին ինչպես «տեղապետի» պահած միրգը, ինչպես հազվագյուտ դեղը: Ինչքան մթին գիշերներ եմ հիշում մանկության օրերից: Չարիուրելի են լինում ամպամած գիշերները Որոտանի կիրճում: Գետ ու գետին, քար ու քարափ, ծառ ու ծերպեր, հող ու երկինք, ամեն ամեն ինչ խառնվում են իրար, դառնում մի վիթխարի սև զանգված, որը ճեղքել կարող է միայն կայծակը:

– Պապի, – դարադամի թանձր խավարի մեջ ընդհատելով պապի հեքիաթը լուսավոր աշխարհների մասին, հարցնում էինք մենք, – որ բարձրանալք եղյակի գլուխը, լուսավոր աշխարհը կերևա՞...

Լուսավոր աշխարհը մեր երևակայության մեջ Գորիս բաղաբլուր էր, որտեղ վաճառականները դեռևս անցյալ դարի վերջերին էլեկտրակայան էին կառուցել 30 ձիու ուժանոց և լուսավորել իրենց «մաղազիներն» ու «ամարաթները»:

– Չէ, չի երևա, – ասում էր պապը:

Դարերով լույս է տեսնացել զանգեզուրցին, դարերով լույս է խնդրել երկնքից, լույս է սպասել հեռավոր աշխարհներից և չի իմացել, թե հայրենի Որոտանն իր ալիքների մեջ որքան լույսեր է տանում ծովի մթնի ջրերում կորցնելու:

* * *

Շամբի հովտում, «հասան բաղի» թթենիների սովերի տակ, չոր խոտի խորումների վրա նստել զրույց են անում Դարբասի կոլտնտեսության և գյուղատվտի նախագահները:

– Ինչի՞ էք բան ուշացան, – կարծես թե ինքն իրեն հարցնելով ասում է կոլտնտեսության նախագահ Գրիգոր Բաբայանը, – փորձանք պատահած չլինի՞...

– Ի՞նչ փորձանք պիտի պատահի, որտեղ որ է հիվի կգան, – Ղամշա սարի կողմը նայելով ասում է գյուղսովետի նախագահը:

– Տնաշեն, Լազարյանի պես ածախա մարդը քարածի կածաններով է գնում: Մեկ էլ տեսար ոտի տակի քարը դուրս պրծավ, ինքն էլ կրա հետևից դեպի անդունդը:

– Քարածի կածան ես ասում, Լազարյանը մազե կամուրջով էլ անց կկենա, ու բան չի պատահի, դու բաղերի մասին մտածի, որ ծովի հատակին են մնալու:

– Բաղերի մասին արդեն մտածել ենք, քոչեցնելու ենք Միջնադաշտ, պոմպերը դնենք ու ծովի ջրերով լողացնենք, պետությունը դրա համար մեր կոլխոզին 30 միլիոն ռուբլի է տալիս:

– 30 միլիոն, – զարմանում է գյուղսովետի նախագահը, – էդ հո 30 Շամբ ա:

– 30 կլիմի, թե քանիսը, չեմ իմանում, համա բաղերը 30 անգամ կջահեղանա: Քո տունը գիտե՞ս, որ նավահանգիստ է դառնալու:

– Որ իմ տունը նավահանգիստ դառնա, քո կոլխոզն էլ կդառնա Սոչի, էլ ի՞նչ դարդ ունեն:

– Դե դու հանաքի ես տալիս, համա ես լուրջ բան եմ ասում: Մելիքիչն ասաց, որ Լծենի ձորն էլ է ծով դառնալու, ջրերը հասնելու են մինչև Դարբասի տակը: Հիմա տունդ կամ պետք է տանես, կամ էլ պետք է թողնես, որ նավահանգիստ դառնա, դու էլ կդառնաս կապիտան: Չուր չեն ասում, որ պապիդ պապը Կորֆուն առնելիս ադմիրալ Ուշակովի օգնականն է եղել:

– Քո պապի մասին էլ ասում են Նախիմովի ֆլագմանական նավի վրա բոցման ա եղել: Համա լուսահոգին ձիու ոտնատեղի ջրից վախում էր, թե մեջը կարող ա ջրաշուն լինի...

Նախագահների կատակները գուցե շատ երկարեին, եթե չէրևար հետախուզությունից վերադարձող երկրաբանների խումբը, որ Ղամշա սարի կողմից, բոստանների տակով, գալիս էր դեպի «հասան բաղը»:

– Յը, խեր լինի, – բարևելուց հետո նախագահներին է դիմում հետախուզական խմբի պետ Նիկիտա Հախումյանը:

– Խեր ա, – ասում է կոլտնտեսության նախագահը, – եկել ենք տեսնենք ծովից ինչ խաբար կա:

– Մինչև ծովը դեռ գործեր շատ կան, փորիդ ցավն ասա, – կատակին կատակով պատասխանում է Հախումյանը:

– Փորացավ չունեմ, – ասում են հնում մեր գյուղում մի քանի աղքատներ են եղել, գնացել են գետի տակը, եթե կարելի է գաթ, հանեք արևերես, ջրի պակաս ենք զգում:

– Տնաշեն, Է՞դ է խնդիրք: Բա ձեր կոլտնտեսության վարչությունը մեզ մի ամբողջ այգի է տրամադրել, սրբած թրի պես տղերք է ուղարկել, որ մեզ մոտ աշխատեն, մենք էդքան էլ չենք անի՞:

Աղքյուր չէ, գետնի տակից ձեզ համար գետ էլ կհանենք:

– Ծովն էլ հետը, – ավելացնում է Տաթևի հիդրոէլեկտրակայանի գլխավոր ինժեներ Գուրգեն Մելիքիչը և դառնալով ավագ հիդրոտեխնիկ Ներսես Լազարյանին, հարցնում է. դուք ի՞նչ կարծիքի եք:

Ավագ հիդրոտեխնիկը համաձայնության նշան է անում, ապա զլուխը տեղագրական քարտեզներից բարձրացնելով նկատում է իր դիմաց կանգնած պատանուն:

– Ի՞նչ կա:

– Եկել եմ ձեզ մոտ աշխատեմ, – պատասխանում

է պատանին:

– Կոլխոզի աշխատանքից խուսափո՞ւմ ես:

– Ոչ, նախագահը թույլ է տալիս:

– Ի՞նչ կրթություն ունես:

– Տասն եմ ավարտել:

– Դե մի հարց եմ տալու, որ պատասխանեցիր, կընդունեմ:

– Խնդրե՞մ:

– Կարող ես քարտեզի վրա Շամբի ծովը ցույց տալ:

– Շամբի ծովն այնտեղ է, որտեղ «Սպիտակին է տալիս առագաստը մենավոր», – ասում է պատանին, ձեռքով ցույց տալով Լազարյանի վրան-թիկնոցը:

– Սուր տղա ես երևում, եզուց կգաս, կսկսես աշխատել:

– Դու ի՞նչ ես ուզում, – պատանուն ճանապարհելուց հետո, առանց հետս ծանոթանալու, հին ծանոթի մտերմությամբ հարցնում է Լազարյանը:

– Ընկեր Լազարյան, խմբագրությունից է, – իմ փոխարեն ավագ հիդրոտեխնիկին պատասխանում է Դարբասի գյուղսովետի նախագահ Աշոտը:

– Խմբագրությունից՞, դե ասա զգույշ լինենք, թե չէ կգնա, մեր խոսքերը կգրի:

– Չէ, ընկեր Լազարյան, – միջամտում եմ ես, – պարզապես ուզում եմ ծանոթանալ ձեր աշխատանքների հետ:

– Խնդրեմ, խնդրեմ, ճաշից հետո գնալու ենք Ղամշա սարը, եկ, տես՝ ինչ ենք անում:

Ճաշից հետո մենք ուղևորվում ենք դեպի Ղամշա սար: Ճանապարհին գլխավոր ինժեները բացատրում է ամբարտակի կառուցման, ջրամբարի և գետնուղիների մասին: Ծանոթանում է տեղագրական քարտեզների վրա: Պատմում է այն մասին, թե ինչպես Որոտանը Ղամշա սարի լանջին մտնելով գետնուղու մեջ, դուրս է գալու Շահվերդիլարի գլխից և ութ հարյուր մետր բարձրությունից թռչելու է էլեկտրակայանի տուրբինների վրա:

– Վերջին նախագծի համաձայն, – ասում է Գուրգեն Մելիքիչը, – Տաթևի հիդրոէլեկտրակայանը ոչ թե հարյուր հազար, այլ հարյուր վաթսուս հազար կիլովատ-ժամ կարողություն է ունենալու: Այդ հնարավորությունն ստեղծվում է Շահվերդիլարի վեց հարյուր մետր բարձրությունը:

– Հետաքրքիր աշխատանք է ձեր աշխատանքը, – ասում եմ հետախուզական խմբի պետին, – ափսոս որ տնից, տեղից շատ ենք հեռու:

– Անհետաքրքիր աշխատանք առհասարակ չկա, եթե սիրում ես գործը, – ասում է նա, – ինչ վերաբերում է տանը, որտեղ գնում ենք, մեր տունն է, կա՞ ավելի մեծ երջանկություն, քան երբ զգում ես, որ քո ոտնահետքերով լույսն է գալիս...

«Քո ոտնահետքերով լույսն է գալիս», այս գիտակցությունն է, որ սխրանքի է մղում մեր էներգետիկներին, հետախույզներին, տեղագիրներին:

Տաթևի հիդրոէլեկտրակայանը, որը մտնելու է ընդհանուր էներգետիկ սիստեմի մեջ, վերափոխելու է ամբողջ Չանգեզուրի վայրի բնությունը: Որոտանից ստացված էլեկտրաէներգիան աշխատեցնելու է Դափանի, Քաջարանի, Ագարակի, Գորիսի արդյունաբերական ձեռնարկությունները, լուսավորելու է գյուղերը, Գյազբելի, Իշխանիկի, Արամազդի, Ջնջաբելի, Սալվարդի կոլտնտեսային յայլաղները:

**«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ»,
14 ՕԳՈՍՏՈՍԻ 1956 Թ.**

ԳՅՈՒՐԱԿԱՆ ՀՈՂԵՐԻ ԶՐԱՐԲԻԱՑՄԱՆ՝
ՆԱԽԱԴԵՊԸ ՀՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱԿԱՐԳ

Որոտանի ոռոգման համակարգը՝ մարդու հրաշք ստեղծագործություն



ԷՐՈՒՐ
ՀՈՐԻԱՅԱՆ

«Հայքը շինարարների» Գործի N 8 շինվարչության պետ Գուրգեն Բաղդասյանը հենց այն է պատրաստվում էր մեկնել շինտեղամասեր, երբ հյուրերը հայտնվեցին նրա աշխատասենյակի շեմին: Վարչության պետը ընդառաջ գնաց, ուրախությամբ սեղմեց նրանց ձեռքերը, գանգեզուցու սովորությամբ ասաց. «Բարով եք եկել մեր լեռնաշխարհը: Բայց ինչո՞ւ չեք հայտնել՝ դիմավորե՞նք»:

«Վիլիսը» թեթևեթ ասֆալտապատ ուղուց, թարտաց դաշտամիջյան ճանապարհի խորդուբորդներում: Ապագա ջրանցքի հունի ուղղությամբ նրանք մի ահագին ճանապարհ էլ կտրեցին ոտքով՝ Տաթևի հիդրոէլեկտրակայանի օրական կարգավորման ջրամբարից մինչև «Հագարանվորի»:

Հյուրերը կանգնեցին ձորի եզրին և զարմանքից քարացան: Ներքևը անհատակ ձոր էր, լանջերին ուս-ուսի, մեջք-մեջքի տված ժայռե նախիրներ: Ուր աչքը բռնում էր, ամենուր ժայռ էր, ու հանձնաժողովի անդամներից մեկը շրջվելով տարակուսած դիմեց Բաղդասյանին:

- Եվ այստեղով՝ պիտի զգվի խողովակաշարը:
- Ոչ միայն այստեղով: Նման տասնյակ ձորեր ենք կտրելու ջրանցքի շինարարության ընթացքում:

Բայց մինչև հսկայական տրամաչափի զույգ խողովակաշարի տեղադրելը, հարկավոր էր հարթել տեղանքը, բետոնե ամրակալ հենակներ դնել: Բայց, ինչպե՞ս... Այս հարցն ամենից շատ հուզում էր շինտեղամասի պետ Հայկազ Սարգսյանին: Երբ հյուրերը ժամանեցին, նա քարին նստած, հայացքը ձորին հառած՝ խորհում էր, հետո, ոչ մի ելք չգտնելով, կրկին դարձավ ներկաներին:

- Դժվար է:

Շինտեղամասի պետը փորձված շինարար էր, եղել էր շատ կառուցներում, բայց շանգեզուր գալուց հետո շատ նորանոր դժվարությունների հանդիպեց: Եվ հիմա, ինչպես ասում են, գլուխը դժժում էր՝ ինչպե՞ս է հիսուն աստիճան թեթևությամբ գառիթափում հարթելու հազար հինգ հարյուր մետր տարածությունը:

Նրան օգնության հասան բուլղուզերավար եղբայրները՝ Վաղարշակ և Վոլոդյա Թունյանները: Նրանք երկար նայեցին ձորալանջին ցցված ժայռերին, ապա որոշեցին.

- Փորձենք:

Եղբայրների մանկությունն ու պատանեկությունն անցել են Խնձորեսկում, այստեղ են նրանք սովորել տրակտոր վարել, մեջքի են շուռ տվել հայ-

րենի գյուղի դաշտերը, հողին պահ տվել սերմը: Իսկ երբ Վաղարշակն ու Վոլոդյան շինարարություն գալու միտք հայտնեցին, կոլտնտեսության նախագահը տխրեց, ուզեց համոզել, որ մնան, բայց Վաղարշակն ասաց.

- Նախագահ ջան, մեր դաշտերը մի բուռ են, գնանք, ջրի ճամփան բացենք, ջուրը գա, հողերը ոռոգվի, վարելահողերը շատանան: Հետո գանք, շատ հող վարենք, շատ հաց ցանենք:

Նախագահը չնայած սպառնաց. «Վոլոդյա ժողովը ձեզ կարգելի գնալ», բայց հետո տեղի տվեց եղբայրների անկոտրում կամքի առաջ:

Եվ ահա եղբայրները ջրանցքի շինարարության մի հատվածում են, մտածում են ըստ նախագծի լեռների միջով հարթել ջրի ճանապարհը:

Երկար խորհելուց հետո Վաղարշակի բոլորզերը կանգնում է լեռան կատարին, իսկ Վոլոդյայի երկաթե նժույգը գալիս ծառս է լինում ձորի ուղիղ պնակին: Առաջինի կնճիթից կապեցին պողպատե ճոպանը, միացրին երկրորդի պոչին: Վաղարշակի մեքենան, որ լեռան կատարին էր, ճոպանով պահեց Վոլոդյայի բուլղուզերին, որը մերթ կամաց, մերթ պինդ դռնաց, վեր ցցված մետաղե քթից օղակ-օղակ ծուխ արձակեց, կախվեց քթի վրա, ապա անդունդի եզրով, շատ դանդաղ, վեհերոտ ընթացքով իջավ գառիթափն ի վար: Ահա արմատահան եղավ և ցած գլորվեց մի ժայռ: Նրան հաջորդեց երկրորդը, երրորդը, նրանց անդունդ գահավիժելու ձայնը դրնգրնգաց, արձագանքեց, ծալք-ծալք տարածվեց շրջապատում: Երկի հրճվանքից էր, Վաղարշակը վերևից բղավեց.

- Պինդ կամ, Վալոդ:

Բուլղուզերի գոռոցի, քարերի դրոյոցի մեջ Վոլոդյան լսեց, թե՞ չլսեց երբոր ձայնը: Բայց ձեռքը դուրս բերեց խցիկից, թափահարեց, և Վաղարշակը հասկացավ. «Ամեն ինչ կարգին է»:

- Չդորովո, - բացականչեց ռուս հյուրերից մեկը, - մարդիկ այստեղ հրաշք են գործում:

Մի ամիս թե ամսից ավելի հարթեցրին գառիթափը, իջան ձորը՝ Վարարակնի ավիդ: Նույնքան տարածություն էլ հարթեցին դիմացի լանջից՝ Քարահունջ գյուղի տակ:

* * *

Գործում նրան Գուրգեն չեն կոչում: Եթե հենց այնպես ասեն՝ Գուրգեն, ոչ ոք չի ճանաչի: Դրա համար էլ նրան կոչում են Բաղդիին Գուրգեն:

Գուրգենը մանկությունից քիչ բան է հիշում, ամենից շատ հիշում է հին Կյորեսի շրջակայքում ընկած չոր ու ցամաք հողերը, որոնց ինքը շատ է խղճացել, նեղսրտվել, որ հողի վրա ակոս ու կանաչ չկա: Ի՞նչ կարող էր անել: Եվ այն ժամանակ Գուրգենն ինչ իմանար, որ տարիներ հետո հենց ինքը պիտի ղեկավարի հայրենի հողերին ջուր հասցնելու համար իրագործվող այդ խոշոր կառույցը:

Պատերազմը սկսվելու նախօրյակն էր՝ ավարտեց միջնակարգ դպրոցը: Իսկ կռիվը պայթելու օրը գնաց գինվորական կոմիսարիատ և ասաց. «Ընկերներս բանակ գնացին, ինձ էլ տարեք»: Բժշկական քննություն անցկացնելուց հետո բժիշկը շարժեց գլուխը. «Բանակի ենթակա չեք»:

Աշխատանքի անցավ Գործի շրջանվեցի գործկոմի ջրային բաժնում, հետո սովորեց դասընթացներում, տիրապետեց գործին: Իսկ Երևանի գյուղատնտեսական ինստիտուտի հիդրոֆակն ավարտելուց հետո ղեկավարեց Էջմիածնի ջրային, Հրազդանի

ոռոգման սխտեմի վարչությունները: «Հայքըչինտրեցտի» Գորիսի N8 շինվարչության պետն է այն օրվանից, երբ վառվեց առաջին պայթյունի պատրուցը: Որբան դժվարություններ են եղել հենց առաջին օրվանից: Սիրտը պարուրել է թախիծը, երբ բնական չարիքի պատճառով խանգարվել է կառուցյի այս կամ այն հատվածի գործը, ԵՍՎԵ է բերկրանքով, երբ շինարարը դժվարին հաղթանակ է շահել ժայռերի հետ գոտեմարտում: Եվ ամեն հաղթանակ ասես նրա մեջ ավելացրել է ավելի երկար ապրելու ու կառուցելու ձգտումը, եռանդը:

Երբ առիթ է լինում նրան հանդիպել աշխատասենյակում, և հարցնել կառուցյի մասին, նա սիրալիկ ասում է. «Խնդրեմ, ամեն ինչ կպատմեմ: Բայց գրելու համար հարկավոր է տեսնել կառուցյը»:

Եվ այնպես կանի, որ հենց իր հետ կտանի շինարարություն, ցույց կտա տարբեր տեղերում ցրված տեղամասերը, կբացատրի, կծանոթացնի մեր օրերի հերոսներին, որից հետո գոհ, անպայման գոհ, հարուստ տպավորություններով կվերադառնա:

Երբ Խնձորենկ գյուղի տակ, Կուրաթ գետի ձորում շահագործման հանձնվեց մայր ջրանցքի երկրորդ ջրհան կայանը, ես նրա հետ մեկնեցի բացման հանդիսավոր արարողությանը: Ամբողջ ճանապարհին Գուրգենը լուռ էր, բայց ժպտում էր, և ես հասկանում էի այդ ժպիտի իմաստը: Իսկ ո՞վ չի ժպտում հաղթանակ տանելիս, որտեղ էլ այն լինի:

– Էլի՞ պիտի ջրհան կայան կառուցեք, խախտում են լռությունը:

– Շինուհայրիկը, Քարաշենիկը, Խնածախիկը, Քարահունջիկը, – թվում է և հետո բացատրում, – մայր ջրանցքի վրա կառուցվելու է արհեստական 94 տարբեր օժանդակ շինություն: Իսկ այս մեկը՝ Կուրաթի ձորի կայանը, ամենամեծն է լինելու կառուցվող հինգ կայաններից և վայրկյանում դեպի դաշտերն է մղելու 50 խորանարդ մետր ջուր:

Եթե Գուրգենի հետ խոսես թվերի լեզվով, նա կարող է ժամերով բացատրել, բայց թվերը հետո...

Այո, հիմա, մեր օրերում հյուրերն են զարմանում, թե հայոց երկրի հրաշք քարերի ու ժայռերի մեջ ինչպիսի հրաշք կառուցեք և ղեկավարում Գուրգենը: Իսկ թե հայրը հրաշքով հարություն առնե ու տեսնե, թե ինչպես է որդին ժայռեղեն այս աշխարհում քանդակում իր դիմանկարը, որ դարեր հետո սերունդները զան տեսնեն ու ասեն՝ սա շինարար Գուրգեն Գալուստի Բաղիրյանն է, կամ Բաղիրին Գուրգենը:

Գուցե չհավատար հայրը... այս հրաշքին, ինչպես չէր հավատում Այգեձորցի Թուլյան Ասատուրը, որին համագյուղացիք՝ մեծ թե փոքր, Ծատուր դայի էին կոչվում:

Շինտեղամասերի պետերից մեկը՝ երիտասարդ մի ինժեներ, բայցում էր ձորի գյուղերի մոտերքում: Նա նոր էր ավարտել պոլիտեխնիկական ինստիտուտը, եկել շինարարություն և ջրանցքի ապագա հունի տեղանքն էր ստուգում, որտեղ պիտի աշխատեին իր տեղամասի շինարարները: Նա տեսավ, որ գյուղի գլխին, արևից կեծացած մի քարի վրա նստած է ավեհեր, դեմքն արդեն ճմռված, ծալբաշատ, ուսերից քիչ կորացած մի ծերունի:

– Բարի օր, – հին ծանոթի նման ողջունեց ինժեները:

– Աստծու բարին, – շրջվում է ծերունին, ուղեք գլուխ զննում ինժեներին ու հարցնում, – մեր կողմերում ի՞նչ են անում, այ որդի:

– Ձրի տեղն են նայում:



ԲԱՂԻՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

Պետական, տնտեսական աշխատող, ՀԽՍՀ վաստակավոր մեյիորատոր

Ծնվել է 1924թ. մարտի 8-ին Գորիս քաղաքում, ազնվական ծագում ունեցող Բաղիրյանց ընտանիքում: Միջնակարգն ավարտելուց հետո ուսումը շարունակել է Հայկական գյուղատնտեսական ինստիտուտի հիդրոմեխանիկական ֆակուլտետում և մինչև 1959 թ. աշխատել է Էջմիածնում որպես ոռոգման և ջրարբիացման հա-

մակարգերի գլխավոր ինժեներ: 1959-66 թթ. աշխատել է Միսիանի (Սպանդարյան ջրանցքի) ոռոգման և ջրարբիացման համակարգերի վարչության պետ, հսկայական աշխատանք կատարել ջրատնտեսական կառույցների գործարկման ու համակարգի ամրապնդման բնագավառում: 1966-ին նշանակվել է Որոտանի ոռոգման և ջրարբիացման համակարգի շինարարության պետ, իրականացրել հանրապետությունում եզակի Որոտանի ջրանցքի ու Քարահունջի բարդ ջրահանգույցի շինարարությունը: Այնուհետև աշխատել է Գորիսի ոռոգման և ջրարբիացման համակարգերի վարչության պետ, ստեղծել դարին վայել կառույցներ, շահագործման հանձնել բազմաթիվ ջրատնտեսական օբյեկտներ, բնակելի, հասարակական շենքեր, դրանց պատկը կազմող Սրղըղի գյուղի ու Որոտանի հանգստավայրերը:

1991 թ. անցել է կենսաթոշակի: Նա բարձրակարգ մասնագետ էր, մեծ հմայքի տեր անձնավորություն, կյանքն իր ժողովրդին անմասնորոշ նվիրած զավակ: Մահացել է 1992 թ. սեպտեմբերի 11-ին, Գորիսում:

- Եղ ո՞ր ջրի:
- Ես, էլի, որ պիտի Որոտանից գա: Հիմիկվանից բոստանիդ հողը կարգի բեր, որ ջուրը գա, չքի:
- Ծա՞ղր ես անում, – ծերունին նեղանում է, և այնպես է նայում ինժեներին, կարծես ասում է, դու էդ կարճ բոյով ի՞նչ ջրանցք կառուցող ես, բայց հանգիստ իր կարծիքն է արտահայտում, – Եղ ջուրը մեզ հասնող չի, ես կողմերը չի գա:
- Կգա, – պնդում է ինժեները, – հետո հարցնում է, – անունդ ի՞նչ է, հայրիկ:
- Ինձ Ծատուր դայի են ասում: Բա քու անունը ի՞նչ է:
- Յուրիկ է, Յուրիկ Պետրոսյան:
- Ո՞ւմ տղան ես:
- Գորիսից եմ:
- Հա, բայց ո՞ւմ տղան ես:
- Հաշվապահ Գրիգորի:
- Ծատուր դային հայացքը կախում է, մտածում, իսկ Յուրիկը տալիս է իր հոր մականունը. «Չփուռ Գրիգորին գիտե՞ս»:
- Յուրիկի հորը այդպես են կոչում շրջանում, և Ծատուր դային նրան անմիջապես ճանաչում է. «Հա, իմացա: Բայց Չփուռի տղա, ես մեռած, դու՛ սաղ, էղ ջուրը էստեղ եկող չի»:
- Ծատուր դային թերահավատ լինելու հիմք ունի, և դրանում Յուրիկը նրան չի մեղադրում. ձորի գյուղերն ճիշտ, Որոտանն ճիշտ: Հազար ու մի սար ու ձոր է նրանց բաժանում:

Էմիլ Բուդալյանի «տնտեսությունը» N 6 շինտեղամասն է, որ գտնվում է «Վարդերի» ձորում, այստեղից էլ ձգվում դեպի Կուրաթի ձոր: Իր ղեկավարած շինտեղամասում հենց ինքն է առաջինը մեզ դիմավորում:

Այս տեղամասին բաժին է ընկել ջրանցքի ամենադժվարին հատվածի շինարարությունը: Այստեղ է, որ պիտի իրագործվի երեքուկես կիլոմետր երկարությամբ թունելի փորման ու բետոնապատման աշխատանքը: Տղաները գործը գլուխ են բերում, բայց դա նրանց հաջողվում է մեծ դժվարությամբ: Պատահում է, որ ապարն ամուր է լինում, պայթեցման համար հարմար, և լեռնանցումը կատարվում է համեմատաբար ավելի արագ, իսկ որոշ հատվածներում ջուր է անձրևում վերևից, փլվում է փոփար ապարը:

Թունելը նեղ է, երկու մետրից քիչ ավելի բարձրությամբ: Բետոնե երկու կողերից, ասես պայծառ աչքեր, կախված են դեղին ճրագների շղթաներ, որոնց լույսի տակ փայլվում է ջուրը:

Էլեկտրաբարձը իր պողպատե ճամփան կուլ է տալիս ջուրը չլմփացնելով: Տեղ-տեղ նեղիկ երկաթիծը չի երևում, և էլեկտրաբարձը վարող Էմիլը ստիպված է լինում ընթացքը դանդաղեցնել: Ու տեղ-տեղ էլ մեզ զգուշացնում է՝ գլուխները ավելի իջեցնել՝ թունելի առաստաղով անցնող օդամղիչ խողովակին չզարնվելու համար:

Էլեկտրաբարձը աղմուկով կանգ առավ: Դիմացը դեռևս չբռնկված ժայռն էր: Ռետինե սապոզներով կանգնում ենք ջրի մեջ: Վերևի ժայռե առաստաղի մի հատվածից, որը բետոնապատված չէ, և դեռ գերանակապ է, ջուրն անձրևում է, ու թվում է, թե մեկը անտեսանելի ինչ-որ գետի հունը գիտակցաբար կապել է դեպի հորատանցքը:

Հորատող մուրճի երգը խլացնում է: Տեղամասի պետը ինչ-որ բան է բղավում բրիգադավարի ականջին, և վերջինս մոտենում է մեզ:

– Գառնիկ Կլազանց, – ներկայանում է նա, մեկնում թաց ափը:

Գառնիկը ստորգետնյա աշխարհի հին բնակիչներից է: Դեռևս պատանի էր, երբ ԽՆձորեսկ գյուղից բռնեց Դափան տանող ճանապարհը, ցանկացավ արհեստ սովորել: Ծանր ու թեթև արեց, տևողեց, հետո հավանեց հորատողի ծանր աշխատանքը և ձեռքն առավ մուրճը: Մի տասնամյակի չափ տքնել է Դափանի հանքերում, հետո լսել, որ ջրանցք են կառուցում հենց իրենց գյուղի մոտ, եկել անդամագրվել է ջրաշինարարների ընտանիքին, խնձորեսկիցիների տեղամասին:

– Մեր կղերկոտիվում «չուժոյը» Վալոդն ու Սերոժն են, – կատակում է Գառնիկը, – մնացածս խնձորեսկիցի ենք:

Վիոլյա Փարսադանյանն ու Սերյոժա Տատինցյանը գորիսեցի են, ժամանակին աշխատել են Տաթևի հիդրոէլեկտրակայանի շինարարությունում, ապա եկել ջրանցքի կառույց: Նրանց ղեկավարած բրիգադները առաջավորների շարքերում են: Նրանցից ետ չի մտնում նաև Սաշիկ Սիրավյանի բրի-

գադը: Սաշիկը նույնպես խնձորեսկիցի է և ինքն է փորել թունելի առաջին մետրերը, սեղմել ուժանակը:

Գառնիկը պատմում է, որ թունելի աշխատանքների ավարտին քիչ է մնացել, բայց ջուրը շատ է խանգարում ...

– Մեկ է, այս հողապատնեշի հոգին կաննենք, բայց, դե, ժամանակ է կորչում, – շարունակում է նա:

Գառնիկն իր աշխատանքային առօրյայից հիշում է մի դեպք. երկրաշարժից անմիջապես հետո փլուզում էր եղել:

Չորս-հինգ հոգով՝ ինքը, Սաշիկը, Ռազմիկը, երկու հորատող և շինտեղամասի պետ Էմիլը մտան թունել: Վտանգներով իր եր ստորգետնյա աշխարհը: Նրանք չգիտեին՝ արդյոք նորից երկրաշարժ կլինի՝ թե ոչ: Բայց ջրի ու ցեխի մեջ առաջ շարժվեցին, դժվարին պայմաններում վերացրին փլուզման հետ կապված գործերն ու վերադարձան: Դրսում արևը ջերմորեն ակոսում էր երկնի կապույտը:

– Ժամը բանի՞սն է, մի՞թե այսքան շուտ վերադարձանք:

Չարմացան: Հետո պարզվեց, որ նրանք գետնի տակ անց էին կացրել մի ամբողջ գիշեր ու ցերեկ:

Նման դժվարին ու հուզամալից պահեր շատ են ապրել հորատողները:

Միայն երեքուկես կիլոմետրանոց թունելի հորատման աշխատանքներով չէ, որ զբաղված են տեղամասի ջրաշինարարները: Նրանք Կուրաթի ձորում կառուցել են կիսախողովակների արտադրության գործարան և այժմ կիսախողովակաշար են անցկացնում տարբեր դաշտերի ուղղություններով:

Նախկինում այդ կիսախողովակները բերվում էին Հայաստանի տարբեր շրջաններից, որի հետևանքով հաճախ խափանվում էր դրանց նորմալ մատակարարումը: Օբյեկտներում թույլ էին տրվում ընդհատումներ: Իսկ սեփական Նախաձեռնությամբ գործարան կառուցելու շնորհիվ օրական թողարկվում են 25-30 հատ, 40-80 սանտիմետր տրամագծով կիսախողովակներ: Դրանք լինում են տարբեր երկարության, անմիջապես փոխադրվում են տեղամասերն ու շարվում: Այժմ, երբ Նայում են դաշտերին, անմիջապես աչքի են զարնվում սպիտակ գոտու պես նրանց մեջքով ընկած կիսախողովակաշարերը, որոնք ձգվում են դեպի Գորիսի շրջանի Տեղ, Կորնիձոր, ԽՆձորեսկ, Քարաշեն, Շինուհայր և այլ գյուղերը:

Ձորը շատ է խոր, բամբակ երբեք չի մտնում այնտեղ, միայն արևի շողերն են առավուրդ կախվում նրա մեջ և դուրս գալիս արևամուտին: Եվ դրա համար շիկանում են ձորի ամեն մի ժայռը, քարը, համեղ է լինում ձորահողերի պտուղը: Բայց հող այդտեղ համարյա չկա, բացի ժայռալանջերին կպած մի բուստ տնամերձերից, որտեղ խոշոր թթենիներ կան և պտղատու մի քանի ծառեր:

Կյորուն, Մաղանջուղը և Ալիդուլին գյուղերի հին անուններն են, և նրանցից յուրաքանչյուրը իր պատմությունն ունի: Փոխվել են գյուղերի անունները, դարձել Ձորաշեն, Ազատաշեն, Այգեձոր: Գյուղերը փոքրիկ են, յուրաքանչյուրում մի քանի ծուխ, դպրոցի աշակերտների թիվը հասնում է քսան-երեսուկի: Այդ պատճառով, հաշվի առնելով հողերի ոռոգման նշանակությունը, ջրանցքի ճանապարհին՝ հարթավայրի վրա նոր գյուղ է կառուցել՝ տուֆակերտ դպրոցով, անհրաժեշտ շենքերով: Ձորի մարդկանցից ոմանք ելել են հարթավայրը, մյուսները դժվարությամբ են անջատվում հին գյուղերից...

Արչ-Գառնիկը նույնպես դժվարությամբ է համա-



Որոտանն այժմ իրավամբ բարիք է դարձել և լույս: Նրա հունը փոխելուց հետո շրջանի 10 գյուղ լքել է ձորերը, բարձրացել հարթավայրերն ու հիմնել նոր տներ, այգիներ...

կերպվում է նոր գյուղատեղի տեղափոխվելու հետ: Նա նստել է Չանգեգուր սովխոզի միջնակարգ դպրոցի դիրեկտոր Գրիշա Մանուչարյանի փոքրիկ այգու թթե-նիներից մեկի տակ, մեկ-մեկ նայում է առջևը դրված օդու շշին, հետո դառնում է Գրիշային:

– Դու կարդացած մարդ ես, Գրիշա, ես գյուղերի հալը ի՞նչ կլինի, որ բարձրանում են հանդը:

- Լավ կլինի:
- Բա ես այգիները, ես ծառերը ի՞նչ պիտի անենք:
- Նորը վերևում կտնկենք: Բա ջրանցքը ինչի՞ ենք կառուցում, որ դեռ սրանից լավ այգի էլ չենք հիմնելու, բացատրում է Գրիշան և հայտնում, որ հանդում ինքը արդեն հողամաս է վերցրել, զգել տան հիմքերը, հետո խորհուրդ է տալիս, - ինքը էլ հող վերցրու, կփոշմանես: Թունելում գիշեր-ցերեկ ժայռ ես փորում, որ ջուրը գա, մի՞թե չարչարանքդ չես գնահատում...

Գառնիկը համաձայնում է հանդում հող վերցնել, ասքել միացյալ նոր գյուղատեղում, որ այժմ կրում է Հարթաշեն անունը:

Քարահունջ գյուղի ութերի տակ ընկած ձորալանջից մետաղե զույգ խողովակաշարը գահավիժում է ցած, հետո բարձրանում դիմացի ժայռախեղդ լանջն ի վեր, միանում «Հազարանփրկիչ»-ից սկսվող բաց ջրանցքին:

«Հազարանփրկիչը» բլրի վրա մամռած, հին, հեռավոր ժամանակներից մնացած մատուռ է: Նրա մնացորդների կեսը հողի տակ է, կեսը՝ գետնի երեսին: Ծեր մարդիկ պատմում են, որ դարերի ընթացքում մոտակա գյուղերի բնակիչները եկել են, մատուռի մոտ ոչխար ու գառ մորթել, մոմ վառել, աղոթել Աստծուն, որ անձրև թափի, հողերը երաշտից չայրվեն: Բայց աստված չի լսել նրանց, չի խղճացել, և հողը մնացել է այդպես խանձված-ճաքված: Միայն մեկ անգամ է մատաղից հետո անձրև եկել, տարին առատ է եղել, և մատուռի անունը այդպես էլ դրել են՝ «Հազարանփրկիչ»:

– Ես էլ եմ շատ մատաղ արել, – ասում է Ծատուր դային, – բայց «Հազարանփրկիչը» մեզ երբեք չի փրկել:

Նա նստել է իրենց գյուղի՝ Այգեծորի հենց գլխով անցնող խողովակաշարի մոտ, ականջ է դնում նրա միջով հոսող ջրի խշշոցին և շարժում է շուրթերը, շշնջում. «Փրկիչը սա է, սա»:

– Բա ասում էիր ջուրը չի՞ գա, – նրան հիշեցնում է Յուրիկը, և Ծատուր դային գոհ ժպտում է:

– Բեր ճակատդ պաչեմ, Է, Զոփուռի տղա: Ախր ես ի՞նչ իմանայի, թե ջուրը ես սար ու ձորերը կտրելով կհասնի մեզ:

Տաթևի հիդրոկայանի օրական կարգավորման ջրամբարից, որի տարողությունը հարյուր հազար խորանարդ մետր է, սկսվում է ջրանցքը: Նրա առաջին հերթը արդեն գործարկվել է, և հնգամյակի անցած երեք տարում արդեն ոռոգման տակ է դրվել 4200 հեկտար հողատարածություն, որտեղ պտղատու այգիներ են հիմնվել, ցանվել են հացահատիկային, բանջարաբոստանային շատ կուլտուրաներ:

– Երբ ավարտվի ջրանցքի լրիվ կառուցումը, ոռոգման տակ է դրվելու շրջանի մոտ 10 հազար հեկտար հողատարածություն, - բացատրում է շինվարչության պետ Գուրգեն Բաղիրյանը, հետո շարունակում, որ Որոտանի ոռոգման համակարգի մայր ջրանցքի ընդհանուր երկարությունը լինելու է 29 կիլոմետր՝ 250 կիլոմետր ներքին ջրային ցանցով, որը ձգվելու է դեպի Կորնիծոր, Քարաշեն, Տեղ, Խնձորեն, Քարահունջ, Շինուհայր, Հարթաշեն և այլ գյուղերի



դաշտերը: Ջրանցքի վրա շարունակվում են կառուցվել մյուս ջրիան կայանները, որոնց շնորհիվ ջրվելու են ջրանցքից բարձր ընկած հողերը:

Ջրաշինարարների համար մեծ հաղթանակի տարի դարձավ 1973 թվականը: Նրանք նոյեմբերի 29-ին զեկուցեցին Կորնիծոր գյուղի մոտ կառուցի 27 հազար 700-րդ մետրը շահագործման հանձնելու մասին: Բացի այդ զգվեց նաև մոտ 75 կիլոմետր ջրային ցանց, որի ճյուղերը մայր ջրանցքից ձգվում են տարբեր ուղղություններով:

Որոտանն այժմ իրավամբ բարիք է դարձել և լույս: Նրա հունը փոխելուց հետո շրջանի 10 գյուղ լքել է ձորերը, բարձրացել հարթավայրերն ու հիմնել նոր տներ, այգիներ...

Մենք կանգնել ենք «Հազարանփրկիչ»-ի բարձունքում, որտեղից երևում են ջրանցքի տարբեր հատվածներ, մարդու իրաշք ստեղծագործությունը՝ անսնուն ու տձև ժայռերի համաստեղությունում:

**ԷՐՈՒԱՐԴ ԶՈՐՐԱԲՅԱՆ,
«ՈՐՈՏԱՆԻ ՈՐԴԻՆԵՐԸ»,
ԵՐԵՎԱՆ 1974, ԷԶ 37-53**

ՏԱԹԵՎ ՅԵԿ-Ի ԿԱՌՈՒՑՄԱՆ ՅԵՎՔԸ՝ ՄԱՍՈՒԼԻ ԷՋԵՐՈՒՄ

Լեզենդ Ռոտտանի ափին



ԱՆԱՅԻՏ ՍԵԿՈՅԱՆ

Տաղ տարի առաջ է եղել: Այր, իհարկե, տաղ տարի առաջ, ձյուն-ձմռան մի օր չորս ձիավոր են հայտնվել Շինուհայրում: Նրանք, ձիերի սանձերը ձգած, շավիղի հետք որոնելով, անցել են գյուղի միջով: Ինչ գյուղ, աստված գյուղ համարի, մեկի կտուրը, մեր լեռնաշխարհի չգրված օրենքով, մյուսին բակ է ծառայելիս եղել:

Ձիավորներն իջևում են կածանով, հասնում խոտ կոչվող գյուղը, որի տեսքը ավելի մխիթարական չի եղել: Համատարած ձյուն, իրար ուսի ելած լեռներ, սանձարձակ բթախառն քամի, ցածում Ռոտտանը, ինքն իրեն ոլորք տվող:

Ձիավորներից մեկը գլանակաձև փաթեթ է հանել: Մյուսները մոտեցել ու նայել են նախագծին:

– Ճիշտ ենք եկել: Ապագա Տաթևգեւի օրվա ջուրը կարգավորող ավազանն ահա այս բլրի տեղում պիտի լինի:

- Ինչպե՞ս թե:
- Այր, այս սարը գլխատվելու է:
- Իսկ ե՞րբ ենք սկսում աշխատանքը:
- Ձևալի հետ: Ճանապարհները բացելով ու կարգավորելով, պիտի գանք մինչև խաչմերուկ, այնտեղից մի թևով Սիսիան, այսինքն՝ Շամբ, մյուսով այստեղ՝ Շինուհայր:

Եվ այսպես շինուհայրցիները չիմացան անձանդների գալն ու գնալը: Նրանք էլ տանը փակված սպասում էին ձևալին:

Այո, տաղ տարի առաջ էր այս կատարվածը, երբ կառուցող դեռ նախագիծ էր, քարտեզ, պլան: Թերևս այդպես է սկսվել յուրաքանչյուր գեւի կառուցում մեզ մոտ:

Յենց նույն գարնանը ճանապարհներ ու կամուրջներ գծվեցին փոխադրվող

բուլդոզերների, լաֆետներին հենած 60 տոննանոց էքսկավատորների ու տրանսֆորմատորների համար: Մեր լեռնաշխարհին անձանդ մարդկանց անպատկերացելի կմա, որ ճանապարհ անցնողը պետք է նախ ճանապարհ ստեղծի իր համար: Այդպես է բոլոր խոշոր մեքենաների պահանջը:

Սակայն ամենից առաջ ձեռք էր հարկավոր, մարդկային ձեռք, այն էլ՝ մասնագետի: Եվ «Հայիդրոէներգաչին» վարչությունը կոչ ուղղեց Միության տարբեր կողմեր ու որտեղից չեկան թունելագործ, հորատող, գողող, վարորդ, էքսկավատորավար, ինժեներ, հերթափոխի պետ: Եկան և՛ ընտանիքով, և՛ ընտանիքից հեռացածներ, զորացրվածներ եկան, ոմանք եկան իրենց կենսագրության բաց էջերը լրացնելու, ոմանք՝ լոր ճանապարհ գտնելու, շատերը՝ կորցրածը ետ բերելու հույսով: Հայտնվեցին մարդիկ նույնպես, ճշմարիտ բախտավորներ, որ աշխատանքային կենսագրությունը սկսել էին Ձորագետում, անցել էին Հայաստանի համարյա բոլոր գետերով և ցանկանում էին ավարտել այստեղ՝ Տաթևգետում: Եկան բոլոր կողմերից, շատերը գնացին կրկին, մի մասը վերադարձավ այստեղ և մյուս էլ մինչև հիմա, որպեսզի շաբաթներ հետո մաքրվեն շինարարականները, լռեն գիշեր-ցերեկ անդադրում հռնոցները, որպեսզի ամեն ինչ տեսքի գա և սարերի բզկտվածությունն իմաստ առնի: Գնացին, ճիշտ է, թերևս ավելի անհրաժեշտ գործի հասնելու, բայց նրանք նույնիսկ, ովքեր ամենակարճ ժամանակ են այստեղ եղել, մտովի հետևում են շինարարության յուրաքանչյուր քայլին և գեւի ավարտին են սպասում սրտատրոփ: Եթե այսօր հավաքվեն բոլոր նրանք, ովքեր եղել են այստեղ, ոչ մի հրապարակում չեն տեղավորվի:

Ահա այդպես սկսվեց նախագծից իրականություն դառնալ հիդրոէլեկտրակայանը՝ մաս առ մաս: Եվ ինչ դժվարությամբ: Իհարկե, յուրաքանչյուր մեծ գործ մեծ էլ հոգս, տառապանք, լարվածություն է պահանջում, սակայն Տաթևգետն ուրիշ է: Այստեղ հարցը միայն բնական անսովոր պայմաններին չի վերաբերում, կեռամներով լի նեղլիկ ճանապարհներ, պապերի սարքած կամուրջներ, անդունդ, որ հենց այդ կամուրջների տակ է գտնվում, լեռներ, որ պիտի բարձրանային մեր վարորդները՝ Նորամուծ ահռելի մեքենաներ տանելով: Ո՛չ: Երկաթգիծ չկա: Եվ ոչ միայն սովորական բեռների և վերաբերում

(անունը, հագուստ, շինակյութ), այլ վիթխարի մեքենաներին, որոնց առաջին անգամ էր տեսնում մեր լեռնաշխարհը:

Եվ տարիների միջոցում հազարավոր պայթյուններ լավեցին սարերի տակ ու գետնի երեսին, լեռներ շրջվեցին, հատվեցին, կիսվեցին, սարեր շարժվեցին՝ Նոր դժվարության առաջ կանգնեցնելով շինարարներին, բլուրներ ևստեցին, ջրեր հոսեցին թունելախորշերում... Ինչքան չկատարվեցին այս տարիների ընթացքում, մինչև Շամբի ջուրն ընդունող, տասներեք միլիոն խորանարդ մետր ջրի տարողությամբ ջրամբարը կառուցվեց, մինչև այստեղից խոտ ձգվող տասնութ կիլոմետր երկարությամբ ստորգետնյա թունելը պատրաստվեց. Խոտում օրվա ջուրը կարգավորող երեք հարյուր հազար խորանարդ մետր ջուր տանող ավազանը ստեղծվեց, հետո 7-16 տոննանոց 380 խողովակ տեղադրվեց լեռան գագաթից մինչև ստորոտը՝ վահեցնող թեքությամբ, գարնան ջրառատ օրերի համար պարապ ջրաթափը երկարեց մինչև Ռոտտան: Ռոտտանի ափին գետը կանգնեց հզոր ու տիրական, որից պետք է ելնի այն հոսանքը, որին սպասում են Ագարակը, Մեղրին, Գորիսը, Սիսիանը, և ինչքան հեկտար ծարավ դաշտ ու դաշտավայր է սպասում Ռոտտանի ջրին:

Ջրամբարների ու ավազանների համար գյուղեր տեղահանվեցին, գյուղեր, որ, զարմանալի բան մեր շինարար երկրում՝ երկար տարիներ քար չդրեցին քարի վրա՝ միշտ սպասելով այս օրվա: Ոմանք ցավով թողեցին հայրենական տունը, շատերը բնական համարեցին և՛ գեւի գալը, և՛ նրա հետ բերած ամեն ինչը: Եվ միայն գեւին հասանելիք վայրերը չփոխվեցին: Թունելախորշում, մեքենաների մեջ, ճանապարհներին կրքեր բորբոքվեցին, բնավորության Նոր գծեր ծնունդ առան, հարյուրավոր բարեկամներ գտան միմյանց, զրույցի, երազանքի որակն ու մատուցող փոխվեց, ներդաշնակվեցին մարդիկ ու դարձան Տաթևգեւի գավակներ:

Իսկ հիմա, ճիշտ այնտեղ, որտեղ տաղ տարի առաջ, նախագիծը ձեռքների կանգնած են եղել չորս ձիավորները՝ մոտավորապես մատնացույց անելով ապագա ավազանի տեղը, այժմ այդ սարից ոչինչ չի մնացել, բացվել է մի լայն հրապարակ՝ բետոնե բարձր պատերով: Առայժմ չի փակվել շրջագիծը, և հավատալով չի գալիս, թե իրոք շաբաթների գործ է մնացել:

Կանգնած ավազանի այն հատվածում, որը դեռ չի փակվել մեքենաների ելումուտի համար, նայում եմ ցած. վերից վար խիստ թեքությամբ նետվում է անսովոր մեծությամբ մի խողովակաշար: Նայում եմ և անհարմար եմ զգում հարցնել այն, ինչ հարցնում է բարեկամս.

– Ես չեմ հասկանում, ջուրն այս խո-

ՄԵԿԸ՝ «ՔՈՆԹՐՈԼԻՆԳՐԱՄԻ» ԵՐԱՆՏԱԿՈՐՆԵՐԻՑ

Չորս տասնամյակ Էներգետիկների ընտանիքում

«ՔոնթրոլԳրուբալ Ռիզոր Կասկադ»-ի «հնաբնակներից» մեկը Վլադիկ Թոխասնցն է՝ ԱԳՅ վաստակավոր էներգետիկ-ճարտարագետ (կոչմանն արժանացել է 2010 թ.): Նրա աշխատասենյակի դռանը կից ցուցանակ է փակցված՝ «Ինժեներական-տեխնիկական գծով ղեկավար»: Դրան հասնելու համար երկար ճանապարհ է անցել: Բայց երբ ներկայացնում են որևէ մեկին, տարրական պատշաճությունը պահանջում է սկսել ակունքներից, գոնե ծնողներից:



Մեր ակնարկի հերոսը ծնվել է Խնձորեսկում (1953 թ.) ծառայողի ընտանիքում: Իր ձևակերպմամբ՝ հայրը կոլտնտեսությունում զբաղեցրել է բոլոր պաշտոնները՝ բացի գլխավոր հաշվապահից. մայրը դպրոցում է աշխատել: Ծննդավայրում միջնակարգ կրթություն ստանալուց հետո դիմել է Երևանի Կարլ Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտ. որոշեց փաստաթղթերը հանձնել էներգետիկական ֆակուլտետի «Արդյունաբերական ձեռնարկությունների, քաղաքների և գյուղերի էներգամատակարարում» բաժինը: Բուհն ավարտելուց հետո գործուղել են Երևանի կաբելի գործարան՝ փայտաթման արտադրամասում վարպետ էր, հետո փոխադրվել է Գորիսի «Միկրոշարժիչ» գործարան: Որոշ ժամանակ անց արդեն Որոտանի հիդրոէլեկտրակայանների համակարգում էր: Դա 1981-ի փետրվարին էր:

Ո՞րն է համարում իր ուսուցիչը կամ ուսուցիչները: Խորհրդային ժամանակներում մի այսպիսի հասկացություն կար՝ վարպետ-դաստիարակ, երբ սկսնակ մասնագետը փորձառու գործընկերոջից վարպետության դասեր էր առնում, հմտություններ ձեռք բերում:

«Փորձառու էներգետիկներ կային, նրանցից եմ շատ բան սովորել, իսկ ընդհանրապես չիմացածիս վերաբերյալ չեմ քաշվել հարցնել փականագործից, էլեկտրիկից», – հիշում է Թոխասնցը՝ նաև հավելում էր որ անդամագրվեց էներգետիկների ընտանիքին, արտադրամասի

պետը Գագիկ Մկրտչյանն էր (այժմ ընկերության տեխնիկական վերագինման բաժնի ղեկավարն է): Հիմա արդեն ինքն է իրեն փոխարինող պատրաստում: «Յուսով եմ, որ արագ դերի մեջ կմտնի, թեպետ էներգետիկայում նրբությունները շատ-շատ են», – իր երիտասարդ գործընկերոջ մասին ասում է և վստահություն հայտնում, մանավանդ որ նրան դասավանդել է Գորիսի պետական համալսարանում և բնորոշում է որպես ուշիմ և բանիմաց երիտասարդի:

Իր մուտքը էներգետիկայի բնագավառ «Նշանավորվեց» նրանով, որ վթար եղավ Շամբ հեկ-ում, կայանի գեներատորային հարկաբաժինը կիսով չափ հայտնվեց ջրի մեջ: «Այդ պատահարով էլ եմ պրակտիկա ձեռք բերել, – կես-ուրջ, կես-կատակ ասում է Թոխասնցը, – ջուրը հեռացրել ենք, տուրբինային հարկում ինչքան սառքավորումներ կային, հանել-չորացրել, Նորից տեղադրել ենք»: Մի պատահար էլ եղավ 1989թ., երբ ընթացքի մեջ էին Սպանդարյան հեկ-ի թողարկման աշխատանքները, կիսով չափ լցվեց «Սպանդարյան» ջրամբարը, պայթեց ջրամբարի կառուցման շինարարական թունելի խցանը, և ջուրը թափվելով Որոտան գետը, դրա մակարդակը բարձրացնելով՝ ողողեց Սիսիան քաղաքի ավիամերձ տները: «Մեր թիմն օպերատիվ աշխատեց, թեպետ խուճապային իրավիճակ էր ստեղծվել, կարողացանք կանխել ավելի մեծ հետևանքները»: Հիշում է՝ այդ

օրերին Սիսիանի բանկի թղթադրամները տեղափոխել են Գորիս:

1986 թ. արդեն հսկիչ-չափիչ սարքավորումների արտադրամասի պետն էր: Աշխատանքային զբոսկում կարողում ենք՝ կարգաբերման և պրոֆիլակտիկ վերանորոգման արտադրամասի պետ, հետո՝ էլեկտրական հսկիչ-չափիչ սարքավորումների արտադրամասի ղեկավար: Այդ ժամանակ երկու հիդրոկայան էին գործում՝ Տաթև հեկ-ը և Շամբ հեկ-ը: Սպանդարյան հեկ-ի գործարկումը ոչ միայն իր աչքի առաջ էր եղել, այլև մասնակցել էր կայանի սարքավորումների կարգաբերման-տեղադրմանը: Դա 1989 թվականին էր. այդ տարեթիվը մշտապես ամրակալվել է նրա մտապատկերում:

...Հանրաճանաչ ֆուտբոլիստի որդին ֆուտբոլիստ է դառնում, իրավաբանի որդին՝ իրավաբան, ուսուցիչը՝ ուսուցիչ: Սա որոշ դեպքում նկատված օրինաչափություն է: Վլադիկ Թոխասնցի որդիները Նախընտրե՞լ են էներգետիկ հոր մասնագիտությունը: Պարզվում է՝ ավագ որդին՝ Հայկը, «ՔոնթրոլԳրուբալում» է աշխատում, ավելի ստույգ՝ Տաթև հեկ-ում վարպետ: Կրտսեր որդին՝ Հակոբը, հեռակա կարգով ավարտել է Գորիսի ճարտարագիտականը՝ էներգետիկական ուղղվածությամբ, բայց մանկուց Նախասիրություն ուներ փայտամշակությամբ զբաղվել, այժմ կահույքագործ է: Պատմում է, երբ տեղափոխեցին էներգետիկայի բնագավառ, սոր էր ամուսնացել, հետո ծնվեցին որդիները, լարված-հագեցած առօրյայից հետո տունը ձգում էր...

Էներգետիկի աշխատանքը նորմավորված չէ. եթե վթար է, օրվա որ ժամին էլ լինի, պիտի պատահարի վայր շտապես. «Գիշեր ենք լուսացրել, երբ կայանը ջրով էր լցված, բայց ներքին բավարարվածություն են զգում, երբ անսարքություն են վերացնում, վերականգնում էներգիայի մատակարարումը: Նման դեպքեր շատ են եղել», – վերհիշում է մեր գրուցակիցը: Նաև հավելում, որ եթե Նորից սկսեր իր աշխատանքային ուղին, էլի կընտրեր էներգետիկի մասնագիտությունը: Թեպետ շատ դժվարին ժամանակներ շատ է տեսել, մանավանդ Արցախյան առաջին պատերազմի օրերին (1992-1994 թվականներ): Գորիսը հրետակոծվում էր «Գրադ» կայաններից: Իսկ հրետակոծություններից վնասվում էին ենթակայանները, տրանսֆորմատորները, էլեկտրագծերը: Մարդիկ նկուղներում և ապաստարաններում էին պատսպարվում, գոնե էլեկտրականությամբ պիտի ապահովված լինեին:

«Չնայած հրետակոծություններին, գնացել ենք կայաններ, ճիշտ է, մի փոքր վախը սրտներումս, տեղ ենք հասել, ավե-

ՄԵԿԸ՝ ՏԱԹԵՎ ԶԵԿ-Ի ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻՑ



Եվ... ձորը Լցվեց Լույսով

րածության հետքերը վերացրել, վերականգնել Էներգամատակարարումը, որ մարդկանց օջախներում գոնե լույս լինի»։ Զետո մեր գրուցակիցն անդրադառնում է մերօրյա պատերազմին. «Պատերազմները մահ ու ավեր են բերում։ Որոշ անմիտներ ասում են՝ մեր զինվորները զոհվեցին ինչի՞ համար։ Անժխտելի է, որ անդառնալի կորուստներ ունեցանք, բայց եթե այդ մարդիկ զենքը ձեռքը չվերցնեին, ավելի շատ տարածքներ կզիջեինք, ավելի սարսափելի վիճակում կլինեինք։ Նրանց ընտանիքներին տոկունություն եմ մաղթում, աղոթենք, որ երկիրը հնարավորինս արագ դուրս գա այս ճգնաժամից։ Զայ ժողովուրդը լավ օրի է արժանի»։

Զրաժեշտից առաջ ցանկացանք վաստակաշատ Էներգետիկի խոսքը լսել «ՔոնթրոլԳլոբալ Գիդրո Կասկադ» ընկերության 50-ամյա իրաւաւանի առթիւ։ Այն նշանավորվեց նրանով, որ ավարտվում են վերագինման ծրագրով նախատեսված աշխատանքները Տաթև, Շամբ և Սպանդարյան հէկ-երում, որոնցում հին, հիմնական և օժանդակ սարքավորումները փոխարինվել են նոր սարքավորումներով, հիմնովին փոխվել են ռելեական պաշտպանության, ավտոմատիկայի և հեռակառավարման սարքավորումները, որոնց շնորհիվ ավելի կբարձրանան էլեկտրաէներգիայի արտադրության արդյունավետությունը, հուսալիությունը և որակը։ «Կցանկանալի, որ երիտասարդները շարունակաբար զարգացնեն իրենց հմտությունները, հարստացնեն գիտելիքները, ընդլայնեն մտահորիզոնը։ Ես էլ անկախ այն բանից, այստեղ կաշխատեմ, թե ոչ, եթե օգնությանս կարիքը լինի, պատրաստ եմ օժանդակել, խորհուրդներով, փորձով, գիտելիքներով օգտակար լինել սկսական Էներգետիկներին։ Եթե թոշակի էլ անցնեմ, էլի գործընկերներիս, իմ կոլեկտիվի հետ եմ լինելու։ Խորհրդային տարիներին մեր ձեռնարկությունը Խորհրդային Միության Էներգետիկ բնագավառում ճանաչում ուներ, պարբերաբար փոխանցիկ դրոշների էր արժանանում, ինչը հպարտության զգացումով էր մեզ համակում։ Դա, իրոք, գնահատանք էր։ Մենք էլ ձգտում էինք արդարացնել վստահությունը։ Այսօր էլ Որոտանի հէկ-երի համակարգի կոլեկտիվը հպարտ է, որ իր նշանակալի ավանդն է բերում հայկական Էներգահամակարգի հուսալիության, կայունության ապահովման, համակարգին որակյալ և անխափան էլեկտրաէներգիայի մատակարարման գործում», – հրաժեշտից առաջ ասում է վաստակավոր Էներգետիկը։

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Որոտանի ձորում դրոշոց էր. ամենի ժայռերն ասես ուռուսի տված, գիրկընդխառը ցած են գլորվում՝ իրենց հետ պոկելով-տանելով հաստաբուն ծառեր, թփեր... Ձորում ասես «դժոխք» էր. ժայռերի պայթեցման ձայները հազարաձայն արձագանքվում էին երբեմնի լուռ ու խաղաղ ձորում՝ ստեղծելով նախադեպը չունեցող ահարկու մի պատկեր։ Եվ այդ «դժոխքում» մի նորի սկիզբ էր դրվում, սկիզբ, որ պիտի մարմին առներ հաստափոր թղթապանակներում տեղադրված գծապատկերներից ու դառնար ժամանակի վկայագրերից մեկը՝ դառնալով մարդու մտքի սլացքի ու արարող ձեռքերի իրական մի քանդակ։

-Կ առույցը Եվրոպայի եթե ոչ առաջին, ապա առաջին տեղերում գտնվող եզակի կառույցներից մեկն է, – ասում է Խասան Զարուբյունյանը։

Եվ թվարկում է այն փաստարկները, որոնք այդ տիտղոսին արժանանացած լինելու հավաստագրերն են՝ Շամբի ջրամբարի հողային պատվար, ջրընդունիչ, մարգարտածաղիկ, 18 կմ երկարությամբ թունել, 100 հազար խորանարդ մետր տարողությամբ օրվա կարգավորիչ ջրամբար, ճնշման խողովակաշարեր, հորիզոնական թեք թունելներ, հիդրոէլեկտրակայանի նման հսկա և ժամանակի մարտահրավերներին դիմակայող շենք։

– Աշխարհում գոյություն ունեցող նմանատիպ ոչ բոլոր կառույցներն ունեն այսպիսի տեխնիկական բնութագրեր։ Այստեղ մենք ոսկերչական աշխատանք ենք կատարել։ Եվ դա ոչ միայն նրա համար, որ Էներգետիկայի այս հսկան երկար կյանք ունենա, այլև լինի անվտանգ՝ ամեն առումներով։

Խոսքը Տաթև հէկ-ի մասին է։ Դրա նախագծանախահաշվային աշխատանքները կատարվել են ամենայն մանրակրկիտությամբ, հաշվի են առնվել լեռնային ռելիեֆը, բնակլիմայական պայմանները, դրա ռազմավարական նշանակությունը տարածաշրջանի ու երկրի համար։ Բավական է միայն ասել, որ այստեղ արտադրվող էլեներգիայի ինքնարժեքը բավականին ցածր է։

Չրուցակիցս՝ Խասան Զարուբյունյանը, Տաթև հէկ-ի առաջին շինարարներից մեկն է։ Նա աշխատել է Տաթև հէկ-ի կառուցման տեղամասի պետի տեղակալ։

– 1965 թվականն էր, – հիշում է Խ. Զարուբյունյանը, – մեզ մոտ եկավ 334 կենտրոնի 1-ին քարտուղար Յակով Չարուբյանը։ Ինձ տեղեկացրին, որ ցանկանում է խոսել ինձ հետ։ Ես կոստյում չհագա, փողկապ չկապեցի, հիդրոշինարարի հագուստով էլ ներկայացա նրան։ Պարզվեց, որ հիդրոշինարարի հագուստն ինձ ավելի «զարդարեց», այն մեծ տպավորություն թողեց, այն հազար անգամ ավելի տպավորիչ էր ու հետաքրքիր։ Ինձ տեսնելով նման հազ ու կապով՝ Յ. Չարուբյանը դիմեց 344 Գորիսի շրջկոմի առաջին քարտուղարին՝ երիտասարդը կուսակցական է։ Ոչ, եղավ

պատասխանը: Նրա խոժոռ հայացքը խոսում էր: Մի քանի օր անց ինձ կուսակցության շարքերն ընդունեցին, երևանում էլ բնակարան տվեցին:

Տաթև հեկ-ի շինարարությունն ասես ողջ Խորհրդային Միության ուշադրության կենտրոնում լինեք:

Այստեղ էին գալիս բարձրաստիճան պաշտոնյաներ, նախարարներ՝ Խորհրդային Միության մասշտաբով և այլք: Նրանք դիտում էին մեր կատարած աշխատանքը, համեմատում գծագրերի հետ և... Մնում էին ապշած. ամեն ինչ տեղը տեղին էր արվում, աննշան մի շեղում անգամ թույլ չէինք տալիս: Եվ դա այն դեպքում, երբ աշխատող 17 անձնակազմից ընդամենը 5 հոգի ունեին համապատասխան մասնագիտություն: Մնացածն աշխատանքի փորձ չուներ: Իսկ հինգ հոգին չէր կարող հսկայածավալ այդ աշատանքն իրականացնել: Աշխատանքի ժամանակ Լուսանկարի անհնարին էինք հնարավոր դարձնում: Դրա համար ցերեկներն աշխատում էինք, իսկ գիշերները գրադարանից վերցրած մասնագիտական գրքերը կարդում: Ես, որ ժայռերի պայթեցման աշխատանքներն էի դեկավարում, փորձ չուներ: Դրա համար հարկ եղավ հատուկ դասընթացներ անցնել: Լեռան ծերպին ենք աշխատել. մի աննշան անուշադրություն, ամեն ինչ գլխիվայր շուռ կգար, դե, մենք էլ ցած կգլորվեինք: Այս գործը կատարում էինք ամենայն պատասխանատվությամբ, ճիգերի գերլարումով: Առհասարակ, Տաթև հեկ-ի շինարարության ողջ ընթացքում մեր աշխատանքի հաջողության հիմնական գրավակալը դարձել էր ստեղծագործական մեր ներուժը, որն ամեն քայլափոխի օգնում էր մեզ: Յեկ-ի հիմքերը փորել ենք գետի հունից 15 մետր խորության վրա, իսկ հարթությունում 19 մետր: Յիմքերը բետոնով լցնելուց առաջ կատարում էինք ջրահեռացման աշխատանքներ՝ էլեկտրական պոմպերի միջոցով: Երբ շինհրապարակը հոսանքազրկվում էր, ջուրը լցվում էր կառույցի հիմքերը, ծածկում պոմպերը: Երբ հոսանքը միանում էր, պոմպերը պետք է ջրի մեջից հանեինք, մաքրեինք, չորացնեինք և հետո գործը շարունակեինք: Դա իսկական գլխացավանք էր մեզ համար: Ժամանակի անտեղի վատնում, ուժերի լարում էր դա մեզից պահանջում: Ի՞նչ անել: Եվ այստեղ դարձյալ մեզ օգնության հասավ մեր երևակայությունը. փայտե լաստ պատրաստեցինք, պոմպերը դրեցինք դրա վրա: Հոսանքի անջատվելու դեպքում, երբ հիմքերը լցվում էին ջրով, պոմպերը չէին սուզվում ջրի տակ, այլ լաստի վրա տարուբերվում էին՝ մնալով չոր: Եվ հոսանքը միանալուն պես կրկին անցնում էինք մեր գործին:

Խասան Հարությունյանին խնդրում եմ պատմել հիշարժան որևէ դեպքի մասին: Քիչ մտածելուց հետո ասում է.

– Իմ ծննդյան 26-րդ տարեդարձի օրն էր: Շամպայները բացեցինք, ուրախացանք, զվարճացանք: Երիտասարդ էինք, բազում երազանքներ ունեինք: Ու մեր երազանքները գրեցինք, հետո էլ՝ մեր անունազգանունները, դրեցինք շամպայի շշերի մեջ, շշերն էլ դրեցինք կառույցի հիմքում և բետոնե շաղախը լցրինք. այդպես մեկնարկեց կառույցի հիմքերի բետոնալցումը:

Ամեն ինչ սկիզբ ու վերջ ունի: Այդպես էլ Տաթև հեկ-ի շինարարությունը: Վերջապես բազում մարդկանց տքնաջան աշխատանքի շնորհիվ շունչ ու ոգի առավ Տաթև հեկ-ը: Եկավ շահագործման պահը: Հանդիսավոր պահ է: Հրավիրված էին բարձրաստիճան մարդիկ, այդ թվում ԽՍՀՄ Էներգետիկայի և էլեկտրա-



Լուսանկարում Սուրեն Վարդանյանն է, ում անունով կոչվում է Տաթև ՅԷԿ-ը: Նա ՀԽՍՀ Էներգետիկայի գլխավոր վարչության ղեկավարն էր Տաթև ՅԷԿ-ի կառուցման ժամանակ: Լուսանկարից ձախ փորագրված է՝ Հարությունյան Խասան: Ահա, թե ինչ է այդ առիթով պատմում ինքը՝ Խասան Հարությունյանը. «Անտոն Երվանդիչը հանձնարարեց կանչել Տաթև ՅԷԿ-ի շենքի ճարտարապետին՝ Սուրեն Պետրոսյանին և շենքի մուտքի պատին փորագրել իմ ազգանուն-անունը՝ Հարությունյան Խասան: Այդպես էլ արվեց...»:

Ֆիկացիայի փոխնախարար Վաղիմիր Վոլկովը: Բոլորն անհամբեր սպասում են: Վերջապես՝ 1, 2, 3... 9, 10: «Պուսկ!»: Այդ պահին կատարվեց անսպասելին. շենքում ահավոր դողոյուն լսվեց: Թվաց, թե 12 բալանոց երկրաշարժ է: Բոլորը խուճապահար փախան:

– Շենքում մնացի ես և կապանցի Օնիկ Դավթյանը, ով Տաթև հեկ-ի տնօրենն էր, – հիշում է Խասան Հարությունյանը: – Բոլորիս համար հանելուկ էր կատարվածը: Ինչն էր դողոցի պատճառը: Երկու օր շարունակ Որոտանի ձորում դողոց էր, բանավանի մարդիկ ապրում էին վախվորած կյանքով՝ ամեն րոպե սպասելով վատթարագույնի: Ինչպես ասում են, մենք մեզ թափ տվեցինք՝ որտե՞ր ենք թերացել: Ամբողջ անձնակազմը լաբորատորիայի հետ միասին սկսեցին քննել-զննել-ստուգել բոլոր դետալները, դողոցի հավանական յուրաքանչյուր պատճառ հազար անգամ ստուգեցինք: Եվ գտանք դողոցի պատճառը: Տեխնիկական խոտանը վերացվեց, հեկ-ը սկսեց նորմալ աշխատել և Էներգիա արտադրել: Երկու օր տևած ահավոր դողոցից հեկ-ի շենքը նստվածք չտվեց, ոչ մի պատի վրա աննշան մի ճաթ անգամ չկար: Դա արդեն շինարարի հաղթանակն էր...

Կես դար է անցել Տաթև հեկ-ի գործարկումից: Այն հիմա էլ աշխատում է մեծ հզորությամբ՝ Որոտանի ձորը դարձնելով լույսի աղբյուր: Եվ լույսն այդ սփռվում է՝ ամենուր ավետելով բարին:

– Սովորաբար նման կառույցները պետք է աշխատեն 50 տարի, – ասում է Խասան Հարությունյանը: – Սակայն այն մենք այնպես ենք կառուցել, որ 50 տարի էլ դեռ կշարունակի գրել իր կենսագրությունը:

Կենսագրություն, որ դարձավ հայ մարդու կամքի ու համառության խորհրդանիշը, նրա պատասխանատվության ամենաբարձր ցուցիչն ու վավերագիրը:

ԱՎԱՐԴ ՄԵՏՈՐԴՅԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Տաթև հեկ. 20-րդ դարի գլխավոր կառույցը Այունիքում, որը զգալիորեն փոխեց երկրամասի սոցիալ-տնտեսական նկարագիրը

Սկիզբը՝ էջ 3

11-ին:

Վերոնշյալ աշխատանքներն իրականացնելու համար տարածաշրջանում ստեղծվեցին մի քանի շինարարական կազմակերպություն, սպասարկման ոլորտի հիմնարկներ: Առանձնապես հիշատակում ենք «Հայհիդրոէներգոշինի» Տաթևի հիդրոկայանի շինարարական վարչությունը, որ ստեղծվեց 1962-ին Գորիսում:

Հիշատակման արժանի է նաև Որոտանի հիդրոէլեկտրակայանների շինարարության տնօրինությունը (հիմնադրվել է 1960-ին Գորիսում):

Տաթև հեկ-ի և ընդհանրապես Որոտանի հեկ-երի համալիրի կառուցման շնորհիվ Գորիսի և Սիսիանի տարածաշրջաններում ստեղծվեց գյուղատնտեսական հողատարածքների ջրարբիացման՝ նախադեպը չունեցող համակարգ, որ գործում է մինչև հիմա և գործելու է հար: Այդ նպատակով կառուցվեց Որոտանի ջրանցքը՝ 8,5 կմ երկարությամբ, որն անցնում է գուգափեռ խողովակաշարով՝ անդնդախոր ձորերի միջով, որից 3,5 կիլոմետրը՝ թունելով, մնացածը՝ բաց տարածքով:

Դրա շնորհիվ Որոտանի ջրերի մի մասը՝ տարեկան 80 մլն խորանարդ մետր, օգտագործվեց ոռոգման նպատակով. այդ ջրերով ոռոգվում է 19 400 հեկտար հողատարածք:

Տաթև հեկ-ի և Որոտանի հեկ-երի համալիրի կառուցմամբ առաջին անգամ երկրամասի և մասնավորապես Որոտան գետի էներգետիկ ռեսուրսներն այդպիսի ծավալով ծառայեցվեցին մարդուն, երկրի տնտեսությանը:

Անշուշտ, Այունիքի էներգետիկ համակարգն ավելի հին պատմություն ունի...

Այունիքի (Նաև Հայաստանի) էներգետիկայի սկզբնավորման պատմությունը կապված է Ողջի գետի վրա 1903-ին ֆրանսիացիների կողմից կառուցված հիդրոէլեկտրակայանի հետ (75 կՎտ հզորությամբ): Դա Ողջի 2-ն էր կամ Ջրախորի հեկ-ը: 1954 թվականին էլ շահագործվեց Ողջի 3-ը:

«Կապանի հանքարդյունաբերության պատմություն» գրքի հեղինակ Արշավիր Հայրապետյանը, մինչդեռ, նշում է դեռևս 1860-ականներին Կապանում կառուցված երկու հիդրոկայանի մասին: Դրանք կառուցել էին հանքարդյունաբերողներ Կոնդուրովը՝ Ողջի աջ ափին և Խոջամիրյանը՝ գետի ձախ ափին:

Ողջի գետի ձախ ափին մեկ այլ հիդրոէլեկտրակայան էլ կառուցել է հանքարդյունաբերող Մելիք-Ազարյանը 1897 թվականին:

1898-ին մեծահարուստ Գալուստ և Ալեքսանդր Միրումյան եղբայրներն էին Գորիսի Վարարակն գետի վրա՝ քաղաքի հարավային հատվածում հիդրոէլեկտրակայանի շինարարություն նախաձեռնել (գործարկվեց 1903-ին): Դրան անդրադարձել է նաև Ակսել Բակունցը:

1931-ին Գորիսից դեպի հյուսիս՝ Վարարակնի վրա կառուցվեց «Ակներ» առաջին հիդրոէլեկտրակայանը, 1950-ականներին՝ «Ակներ» երկրորդը:

Ավելի ուշ՝ 1931-ին, Հայաստանի ժողովրդների որոշմամբ հիմք դրվեց Մեղրու հիդրոէլեկտրակայանի կառուցմանը, որը գործարկվեց 1937 թ. փետրվարի 18-ին (1200 ձիաուժ կարողությամբ). կայանի կառուցումն ու ղեկավարումն իրականացրեցին փորձառու ճարտարագետներ Ա. Սարգսյանը, Կոնոպլև և Շիլիկովը:

1936-ին հիդրոէլեկտրակայան կառուցվեց Սիսիանում՝ Շաքեի ջրվեժի մերձակայքում, որն ավելի արդիականացված գործում է մինչև հիմա:

Այդ ամենից հետո՝ 1953 թվականին «Հայհիդրո-Նախագիծը» կազմեց Որոտան գետի էներգետիկ ռեսուրսների համալիր օգտագործման սխեման, որով նախատեսվում էր Որոտանի ջրային պաշարների լրիվ օգտագործում ինչպես Հայաստանի, այնպես էլ Ադրբեջանի տարածքում:

Նախատեսվում էր ութ դերիվացիոն հեկ-ի շինարարություն, որից հինգը պետք է լիներ Հայաստանի տարածքում, երեքը՝ Ադրբեջանի:

Հայաստանում, ի վերջո, հինգի փոխարեն կառուցվեց երեք հիդրոէլեկտրակայան՝ Տաթևի, Շամբի, Սպանդարյանի:

1961 թ. երեք հեկ-ից բաղկացած կասկադի շինարարությամբ սկսվեց Որոտան գետի էներգետիկ ներուժի յուրացումը:

Տաթև հեկ-ը շահագործման հանձնվեց 1970 թվականին, Շամբ հեկ-ը՝ 1977 թվականին, Սպանդարյան հեկ-ը՝ 1989 թվականին:

Արդյունքում ունեցանք Որոտանի հեկ-երի համալիր՝ կազմված չորս ջրամբարից, երեք հիդրոէլեկտրակայանից, մեկ օրական կարգավորման ջրավազանից: Տեղակայված հզորությունների ընդհանուր գումարը



Որոտանի հեկ-երի համալիրի կետադրյա զարգացման ընթացքում շրջադարձային հանգրվան էր 2015 թվականը: Այդ ժամանակ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ մասնավորեցվեց ընկերությունը, որի սեփականատեր դարձավ «Ընկերությունը Գ-Լուրալ Հիդրո Կասկադ» ՓԲ ընկերությունը:

404 Մ-Կտ է, տարեկան միջին նախագծային արտադրանքը՝ 1,16 մլրդ կ-Կտ ժամ:

Առաջին հայացքից վերոբերյալը սոսկ փաստերի, թվերի շարադրանքն է, բայց... Որոտանի հեկ-երի համալիրի կառուցմամբ, Որոտան գետի էներգետիկ պաշարների օգտագործմամբ Սյունիքում նոր և աննախադեպ հիմքեր ստեղծվեցին տնտեսության զարգացման, բնակչության կենցաղային պայմանների արմատական բարելավման համար:

Ինչ խոսք, 1960-70-ական թվականների շինարարական եռուզեռը պատմություն է այլևս, գեղեցիկ հուշ: Սակայն այդ ամենի շնորհիվ ստեղծված Որոտանի հեկ-երի համալիրը ոչ միայն չի մնացել անցյալում, այլև հանրապետության տնտեսության ներկա ընթացքի էներգետիկ հիմնասյուններից է՝ ապագային միտված հաստատուն քայլերով:

Որոտանի հեկ-երի համալիրի կենդանի զարգացման ընթացքում շրջադարձային հանգրվան էր 2015 թվականը: Այդ ժամանակ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ մասնավորեցվեց ընկերությունը, որի սեփականատեր դարձավ էներգետիկայի ոլորտում (և ոչ միայն) համաշխարհային համբավ ունեցող, աշխարհի տարբեր երկրներում գործող «ՔոնթրոլԳրուպ Զիդրո Կասկադ» ՓԲ ընկերությունը:

Հինգ տարվա ընթացքում հստակ ներդրումային քաղաքականությամբ ծավալուն աշխատանքներ կատարվեցին համալիրի հիդրոէլեկտրակայանների վերագինման ու արդիականացման ուղղությամբ:

Ներդրվեցին կառավարման նոր և արդյունավետ համակարգ, մարդկային ռեսուրսների օգտագործման նոր չափորոշիչներ, որոնց շարքում առանցքային նշանակություն տրվեց արհեստավորությանը:

Բնապահպանական և սոցիալական կշռադատված ու հետևողական քաղաքականությամբ ընկերությունն ավելի ակտիվորեն ու գործնականորեն ընդգրկվեց տարածաշրջանի ու մասնավորապես ազդակիր համայնքների խնդիրների լուծման, առկա ռիսկերի չեզոքացման աշխատանքներում:

Արդյունքում «ՔոնթրոլԳրուպ Զիդրո Կասկադ» ՓԲ ընկերությունը շարունակում է լուրջ ներդրում ունենալ Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման գործում՝ պահպանելով սեփական տեղն ու դեմքն էներգետիկ ընկերությունների համաշխարհային ու ժամանակակից ընտանիքում:

...Վերոնշյալ հարցերը փորձել ենք արծարծել թերթի սույն համարում: Բայց, մինչ այդ, մեր ժամանակակիցների անունից երախտագիտության խոսք ենք հղում 1960-70-ականների սերնդին, որոնց մտքի թռիչքի, բազկի ուժի և ջանքի շնորհիվ արարվեց Որոտանի հեկ-երի անզուգական համալիրը:



Տրահարսը՝ լուսիի խորհրդանշով քանդակ, հեղինակ՝ Միքայել Ղուկասյան, 1977 թ., գտնվում է Տաթև հեկ-ի բակում

Հատկապես ուզում ենք հիշել այն մարդկանց, ովքեր 1961-ից սկսած (հաջորդաբար) ղեկավարել են Որոտանի հեկ-երի համալիրի կառուցումը և շահագործումը՝ մինչև այսօր՝ Սիսակ Սարգսյան, Խոսրով Դուրյան, Գեղամ Սարգսյան, Միքայել Ալոյան, Ալբերտ Բաբայան, Օնիկ Դավթյան, Մելս Բարխուդարյան, Ալեքսանդր Հայրապետյան, Կառլեն (Լյովա) Առուշանյան, Հակոբ Դիվազյան, Սասուն Խաչատրյան, Արա Յովսեփյան:

Այդ շարքում ավելացնում ենք ՀԽՍՀ էներգետիկայի գլխավոր վարչության ղեկավարների անուն-ազգանունները, որոնց ներդրումը մեծ է եղել շինարարության ամբողջ ընթացքում՝ Սուրեն Վարդանյան, Միքայել Գրիգորյան, Միհրան Վարդանյան, Ֆելիքս Հակոբջանյան:

Չենք կարող երախտագիտությամբ չհիշել բացառիկ այդ կասկադի նախագծողներին և հատկապես գլխավոր ճարտարագետներին՝ Սպանդարյան հեկ-ի նախագծի գլխավոր ճարտարագետ Թ.Կ. Յաղչյան, Շամբ հեկ-ի նախագծի գլխավոր ճարտարագետ Բ.Ս. Չոլոյան, Տաթև հեկ-ի նախագծի գլխավոր ճարտարագետներ Ա.Մ. Սարգսյան, Գ.Ս. Ղազարյան և Գ.Ռ. Գասպարյան:

Տաթև հեկ-ի գործարկման 50-ամյակի և Որոտանի հեկ-երի համալիրի մասնավորեցման հիևեղորոշ տարեդարձի կապակցությամբ շնորհավորում ենք կասկադի բոլոր վետերաններին, ինչպես և «ՔոնթրոլԳրուպ Զիդրո Կասկադ» ՓԲ ընկերության վաստակաբեռ կոլեկտիվին՝ ընկերության ղեկավար Արա Յովսեփյանի գլխավորությամբ, ցանկանում՝ հետագա բարեհաջող գործունեություն և այն առաքելության արժանապատիվ իրականացում, որ դրվել է հեկ-երի համալիրի առջև ի սկզբանե: //

Ուլթեր են եղել Տաթև հեկ-ի, ինչպես և Որոտանի հեկերի համակարգի ղեկավարները

Նրա կառուցման սկզբից՝ 1961 թ. մայիսից, Տաթև հեկ-ի շինվարչության պետն էր Սիսակ Գեղամի Սարգսյանը, ով դրել է ոչ միայն ԶԷԿ-ի, այլև գրեթե բոլոր շինօբյեկտների՝ թիվ 2 Շտրեկի, դեպի Խոտ ու Որոտան ճանապարհների, Շինուհայրի բանավանի հիմքերը: Գործունյա մարդ էր, փորձված շինարար, սակայն շինարարությունը ղեկավարեց ընդամենը մեկ տարի: Նրան փոխարինեց Խոսրով Տիգրանի Դուրյանը, ով նույնպես մեկ տարի մնաց իր պաշտոնում: Զետո շինարարության ղեկը ստանձնեց Գեղամ Արսյուշայի Սարգսյանը: Վերջինս աշխատեց մոտ 5 տարի: Զրաշալի մարդ էր, ընդառաջող, նեղ օրի հասնող ոչ միայն շինարարին, այլև տուն կառուցող գյուղացուն: Նրա օրոք են իրականացվել շինօբյեկտների հիմնական կառուցումները, շահագործվել բանավանը, հիվանդանոցը, դպրոցը, 18,5 կմ թունելի բետոնապատումը:

Գեղամ Սարգսյանին փոխարինել է Միքայել Սարգսի Ալոյանը՝ զոր ու գիշեր շինարարների շրջապատում, թունելներում, ժպիտը միշտ դեմքին եռանդուն մի այր: Մ. Ալոյանի օրոք միացվեցին թունելները, շահագործվեցին թերի բոլոր կառույցները: Նրա աշխատած տարիներին գլխավոր ինժեներ էր Ալբերտ Զովհաննեսի Բաբայանը, ով էլ Մ. Ալոյանին փոխարինեց որպես շինվարչության պետ:

Այդ ժամանակահատվածում վարչության հիմնական խնդիրը եղել է Շինուհայր բանավանում ռետինե կոշկեղենի գործարանի, նրա մաքրման կայանների կառուցումը, Տաթև հեկ-ի սարքավորումների տեղադրման հարցերը:

Գլխավոր ինժեներն էր Ժորա Մելյանը: Շինարարության ընթացքին և հաջողավորումները մեծապես նպաստել են էքսկավատորային, ավտոտրանսպորտային և տեխնիկական այլ սարքավորումների պարկերի ղեկավարները: Կար Արամ անունով սիսիանցի ավտոպարկի վարիչ, հիանալի մի կազմակերպիչ, ում շնորհիվ ավտոձեռնարկությունը գործել է անխափան, առանց լուրջ պարապրոզների: Նա տառապալիք անձնավորություն էր, Տաթև հեկ էր եկել 10 տարի ստալինյան աքտորում գտնվելուց հետո, ուր նրան բռնի

ուղարկել էին Եղիշե Զարենցի ստեղծագործություններն արտասանելու համար:

Շինարարությունում ակտիվորեն են գործել կուսակցական, արհմիութենական, կոմերիտական կազմակերպությունները: Կուսակազմակերպության քարտուղարներն էին Ավետիք Աբգարյանը, Զայկազ Թադևոսյանը, կոմերիտական կազմակերպության քարտուղարներն էին Զենրիկ Գևորգյանը, Գագիկ Զայրումյանը, Մելսիկ Ծատրյանը: Արհմիութենական կոմիտեի նախագահն էր Զևարթ Գեղամյան խորհրդի պատգամավոր Զրաշալի Սուլկարյանը:

Շինարարության 10 տարիների ընթացքում մեծ է եղել Զևարթ Եներգետիկայի գլխավոր վարչության ղեկավարության ներդրումը: Վարչությունը գլխավորել են Սուրեն Ասատուրի Վարդանյանը, Միքայել Ավետիքի Գրիգորյանը, Միհրան Տիգրանի Վարդանյանը, Ֆելիքս Խաչատուրի Զակրեջանյանը:



Այժմ Սուրեն Վարդանյանի անունն է կրում Տաթև հեկը՝ ի նշան նրա անբասիր ու երկարամյա աշխատանքի:

Տաթև հեկ-ի և ընդհանրապես ամբողջ համակարգի շինարարության առաջընթացի համար լուրջ խթան հանդիսացավ կառուցվող հեկ-ի պատվիրատու կազմակերպության ստեղծումը 1960 թվականին: Նրա ղեկավարության ստանձնումը հենց սկզբից վստահվեց տեղացի կադրերին: Կազմակերպության առաջին պետը եղավ ծննդով կապանցի, բնավորությամբ գործարար և աշխույժ, գործի դանդաղկոտությունը չհանդուրժող ՕՆԻԿ Վաղարշակի Դավթյանը: Տասը տարի ղեկավարելով համակարգը՝ այդ ընթացքում նա զբաղվել է Տաթևի հիդրոէլեկտրակայանի սարքավորումների ներկրման, տեղադրման ու մոնտաժման, Շամբի ջրամբարի պարսպաբաշման ու գործարկման հարցերով, կառուցել Որոտանի բանավանը, բնակելի ու վարչական շենքեր Գորիսում, Սիսիանում:

1970-ից նրան փոխարինել է Մելս Բարխուդարյանը, լրջախոս ու շրջահայաց մի շինարար-ինժեներ, ով ավարտելով

Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը, անմիջապես եկել է շինարարություն, և, ինչպես ասում են, իր հիվազ մատի պես գիտեր նրա ամեն քարի տեղը: 11 տարի աշխատելով որպես տնօրեն, նաև նրա ջանքերի շնորհիվ է, որ հատկապես Սիսիանի շրջանում կյանքի ուղեգիր են ստացել երկու հեկ-երը, ջրամբարներ և կարևորագույն այլ կառույցներ:

1970 թ. ստեղծվեց Որոտանի հեկ-երի համակարգի վարչությունը, որը գլխավորեց Ալեքսանդր Զայրապետի Զայրապետյանը: Գորիսի Զայիձորի գյուղացի, ով համակարգը ղեկավարել է երեք տարի:

Առավել երկար՝ 1974-1994 թվականներին, համակարգի պետ է աշխատել Կառլեն (Լյուվա) Գրիգորի Առուշանյանը՝ Եներգետիկայի բնագավառի բազմափորձ ու կազմակերպված մասնագետներից մեկը: Իր աշխատանքային գործունեությունը սկսելով շաբաթյան էլեկտրիկից՝ նա այնուհետև ավարտել է էլեկտրոտեխնիկումը, ապա՝ Երևանի գյուղնատիտուտի էներգոմեխ ֆակուլտետը: 1971-ից ղեկավարել է շրջանային էլեկտրո, որից հետո նշանակվել է Որոտանի հեկ-երի համակարգի տնօրեն: Նրա անվան հետ են կապված շրջանում բազմաթիվ էլեկտրահաղորդման գծերի անցկացման, Եներգիայի անխափան մատակարարման, Շամբի, Սպանդարյանի հեկ-երի սարքավորումների անվթար փոխադրման, տեղադրման ու մոնտաժման, տեխնիկայի անվտանգության, ապահովման աշխատանքները: Նա Զայաստանի Զանրապետության վատակավոր ինժեներ է, կառավարական մի շարք պարգևների՝ «ժողովուրդների բարեկամության» շքանշանի և մեդալների ասպետ:

1994 թվականից նրան փոխարինել է Զակրե Լյուդվիգի Դինգյանը, ով համակարգը ղեկավարել է երեք տարի, նպաստել հեկ-երի անվթար գործունեությանն ու էլեկտրաէներգիայի արտադրողականության բարձրացմանը:

2000 թվականի ապրիլից համակարգը ղեկավարել է Սասուն Սաշայի Խաչատրյանը: Ավարտել է Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի «Մեքենաշինության տեխնոլոգիա» ֆակուլտետը:

**ԱՎԵՏԻԵ ԱԲԳԱՌՅԱՆ
ԷՂՈՒԱՐԴ ԶՈՐԱԲՅԱՆ
«ԵՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԼՈՒՅՆԵՐԻ
ՔՆՁԱՆԸ», ԷՁ 102-105**

ՉՈՐՍ ԳՅՈՒՂ ՏԵՂԱՓՈՒՏԿԵՑ ԱՅԼ ՎԱՅՐ և ԿԱՌՈՒՑԿԵՑ ՆՈՐՈՎԻ

ԱՇՈՏԱՎԱՆ

Գտնվում է Տոլորսի ջրամբարի ափին՝ Սիսիան-Արևիս խճուղու վրա: Հեռավորությունը Սիսիան քաղաքից 6 կմ է: Հին Կիրակոսիկն է, կոչվել է Նաև Աղբենդ (Սպիտակ գյուղ):

Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Բաղդամյանի առաջարկությամբ՝ գնդապետ Աշոտ Սարգսյանի հիշատակին վերանվանվել է Աշոտական: Հին գյուղը մնացել է Տոլորսի ջրամբարի տակ Որոտանի հեկերի կառուցման ժամանակ: Եվ կառուցվել է Ներկայիս գյուղը:



ՏՈՂՈՐՍ

Գտնվում է համանուն ջրամբարի ափին՝ Սիսիան քաղաքից 7 կմ հարավ-արևելք: Նախկին Տոլորսն ընկած էր Այրի գետի աջափնյա հովտում, բավականին գեղեցիկ էր և բարեկարգ, ինչը վկայում է Շչորս Դավթյանը: Հին գյուղատեղում հիմա ջրամբարն է: Ներկայիս գյուղը կառուցվել է Որոտանի հեկերի համալիրի կառուցմանը զուգահեռ 1960-70-ական թվականներին:



ԳՈՐԱՅԵ (ԲԱՇԱՐՉԱՅ)

Գտնվում է Սիսիան-Երևան մայրուղու աջակողմյան հատվածում, Անուշ սարի արևելյան լանջերին հարող մի սարահարթի, ծովի մակերևույթից 2150 մ բարձրության վրա՝ Սիսիանից 35 կմ հյուսիս-արևմուտք: Գյուղը կառուցվել է Որոտանի կասկադի շինարարության հետ կապված, որովհետև նախկին գյուղը՝ Բազարչայը, մնացել է Սպանդարյանի ջրամբարի տարածքում:

Բազարչայը տարածված էր Որոտանի վերին հոսանքի ձախսվելուց մասում շրջապատված կանաչավետ մարգագետիններով ու արոտավայրերով: Նախկինում կոչվել է Վասակակերտ, Ակունք:



ԾՂՈՒԿ (ԲՈՐԻՍՈՎԿԱ)

Գտնվում է Սպանդարյանի ջրամբարի հյուսիսային մասում: Այդտեղ են տեղափոխվել նախկին Բորիսովկա գյուղի բնակիչները՝ այդ բնակավայրի տարածքը ջրամբարի տակ մնալու պատճառով: Ըստ Հջորս Դավթյանի՝ Բորիսովկան հնագույն Հայկական գյուղաքաղաքն է, որի մասին եսկան տեղեկություններ չեն պահպանվել: Հեռավորությունը Սիսիան քաղաքից 28 կմ է:



Որոտանի բանավանը կամ Տաթև հեկ-ի ավանը

Գտնվում է Գորիսի տարածաշրջանում, Գորիս բաղաձայնից 15 կմ հարավ, Գորիս-Կապան ճանապարհին՝ Որոտան գետի աջ ափին, Թասի լեռնանցքի սկզբնամասում:

Կառուցել են Տաթև հեկ-ի շինարարները (1960-ական թվականներ) նախկին Շահվերդյար բնակատեղում:

Սերո Խանգաղյանի կարծիքով՝ Ստեփանու Օրբելյանի վկայակոչած Շաթիթաղ գյուղն է: Բանավանին կից Տաթև հեկ-ն է:



Շամբ ավան

Ավան Լորածորում, Սիսիանից 22 կմ հարավ-արևելք: Ըստ Ջենգել Առաքելյանի՝ հին բնակավայր է, սակայն իր ծաղկումն ապրել է 1960-70-ական թվականներին, այն ժամանակ, երբ կառուցվում էին Շամբ հեկ-ը, Շամբի ջրամբարը, բացվում էր Շամբ-Խոտ թունելախորշը:

Սկզբնապես այնտեղ կառուցվեց բարեկարգ ավան՝ հիդրոշինարարների համար: Այնտեղ բնակություն հաստատեցին հիմնականում Դարբաս և Լծեն գյուղերից շինարարությունում աշխատող բանվորները: Շամբի հիդրոկայանի գործարկումից և շինարարության ավարտից հետո Շամբը շարունակեց մնալ որպես ինքնուրույն բնակավայր: Շամբ տեղանունը եղեգնուտ իմաստն ունի:



Շինուհայրի բանավանը

Ըստ Ժորա Մանուցյանի՝ բանավանի կառուցումը մեկնարկել է 1960-ականներին: Կառուցվել են 24 բնակարանից բաղկացած 8 բնակելի շենք և այլ ենթակառուցվածքներ՝ բաղնիք, կաթսայատուն, հացի փուռ, խանութներ, մանկապարտեզ, գրասենյակներ, ճաշարան, հիվանդանոց, դպրոց և այլն:

Շինուհայրի բանավանը ժամանակին դարձավ գողտրիկ մի բնակավայր: Բանավանը գտնվում է Շինուհայր գյուղի հարավային հատվածում:



Շինուհայրն այդ սարավանդ է տեղափոխվել 1960-70-ական թվականներին՝ Տաթև հեկ-ի կառուցմանը զուգահեռ:

«Ընթերցարկութեալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ն Հայաստանի հիդրոէներգետիկայի ոլորտի ամենամեծ արտադրողն է եւ լուրջ տեղ է զբաղեցնում համաշխարհային չափանիշներին համապատասխանող հիդրոկառույցների շարքում»
 ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ «ԸՆԹԵՐԿՐԳԼՈՒԲԱԼ ՀԻԴՐՈ ԿԱՍԿԱԴ» ՓԲԸ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ ԱՐԱ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ՀԵՏ

2

ԽՈՍՔ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԻ. Այունիքի մարզպետ Մելիքսեթ Պողոսյան. ««Ընթերցարկութեալ Հիդրո Կասկադ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն Արա Հովսեփյանին»

4

ԽՈՍՔ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԻ. Մնացական Մնացականյան ««Ընթերցարկութեալ Հիդրո Կասկադ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն Արա Հովսեփյանին»

5

ԷԶԵՐ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ. «Ստորագրվել է «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» ընկերության գույքի առքուվաճառքի փոփոխված եւ լրամշակված պայմանագիրը»

5

ԴՐՎԱԳՆԵՐ ՏԱԹԵՒ ՀԵԿ-Ի ՆԱԽԱԳԾՄԱՆ ՊԱՏՆՈՒԹՅՈՒՆԻՑ. Զրոյց «Հայհիդրոէներգա-նախագիծ» ինստիտուտի տեխնիկական տնօրեն Հասմիկ Փալանջյանի հետ)

9

«Հանրապետության էներգետիկայում մեր ընկերությունը ծանրակշիռ դեր ունի»
 ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ «ԸՆԹԵՐԿՐԳԼՈՒԲԱԼ ՀԻԴՐՈ



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ. «Տաթև հեկ. 20-րդ դարի գլխավոր կառույցը Այունիքում, որը զգալիորեն փոխեց երկրամասի սոցիալ-տնտեսական նկարագիրը», Սամվել Ալեքսանյան

3

ԿԱՍԿԱԴ» ՓԲԸ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԴԵԿԱՎԱՐ ԱՐԱՄ ՅՈՒՆՅԱՆԻ ՀԵՏ

15

Համակարգի վերազինում եւ արդիականացում. ահա ընկերության գլխավոր առաջնահերթություններից մեկը
 ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ «ԸՆԹԵՐԿՐԳԼՈՒԲԱԼ ՀԻԴՐՈ ԿԱՍԿԱԴ» ՓԲԸ ՎԵՐԱԶԻՆՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՆՃԵՆԵՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԾՈՎ ԴԵԿԱՎԱՐ ԳԱԳԻԿ ՄԿՐՏՅԱՆԻ ՀԵՏ

17

Ընթերցարկութեալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ սոցիալական պատասխանատվության բաղաբականությունը
 ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ «ԸՆԹԵՐԿՐԳԼՈՒԲԱԼ ՀԻԴՐՈ ԿԱՍԿԱԴ» ՓԲԸ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱԺԻ ԴԵԿԱՎԱՐ ԶԱՐՈՒՀԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՀԵՏ

20

Ընթերցարկութեալ Հիդրո Կասկադ» ՓԲ ընկերությունում բնապահպանությունը՝ գործունեության կարևոր սկզբունք
 ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ «ԸՆԹԵՐԿՐԳԼՈՒԲԱԼ ՀԻԴՐՈ ԿԱՍԿԱԴ» ՓԲԸ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱԺԻ ԴԵԿԱՎԱՐ ԶԱՐՈՒՀԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՀԵՏ

23



«ԸՆԹԵՐԿՐԳԼՈՒԲԱԼԻ» ԱՌԱՋՆԵԿԸ՝ ՏԱԹԵՎ ՀԵԿ-Ը. Տաթև հեկ-ում նոր ժամանակներ են (ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ)

6

ԴՐՎԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ

Բովանդակություն

Մարդկային կապիտալը՝ ամենակարեւոր արժեք. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ «ՔՈՆԹՈՒՐԳԼՈՐԱԼ ՀԻՂՐՈ ԿԱՍԿԱԴ» ՓԲԸ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՒՍՈՒՐՍՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐԻՆԱ ՄԵՅՄԱՐՅԱՆԻ ՀԵՏ 27

Էջեր տարեգրությունից. Թե ինչպես լույս աշխարհ եկավ Տաթևի հեկ-ը 30

Հատված Մուշեղ Գալշոյանի «Ծաղկած քարեր» ժողովածուից 34

Հատված Համո Սահյանի «Որոտանի կիրճում» ակնարկից 36

Տաթևի հեկ-ի կառուցման հեւքը մամուլի էջերում (ԼԵԳԵՆԴ ՈՐՈՏԱՆԻ ԱՓԻՆ, ԱՆԱՀԻՏ ՄԵԿՈՅԱՆ) 42

Մեկը՝ «ՔոնթուրԳլոբալի» երախտավորներից. Չորս տասնամյակ էներգետիկների ընտանիքում (ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ) 44


Մեկը՝ Տաթևի հեկ-ի շինարարներից. Եվ... ձորը լցվեց լույսով (ԱԼՎԱՐԴ ՄԵՍՐՈՊՅԱՆ) 45

Ովքեր են եղել Տաթևի հեկ-ի, ինչպես եւ Որոտանի հեկերի համակարգի ղեկավարները 49

Չորս գյուղ տեղափոխվեց այլ վայր եւ կառուցվեց Նորովի 50

Որոտանի հեկերի համալիրի կառուցմանը զուգահեռ ծնվեց երեք բանավան 52

Շամբի հիդրոէլեկտրակայանը 55



Որոտանի ոռոգման համակարգը՝ մարդու հրաշք ստեղծագործություն (ԷՂՈՒՐԴ ԶՈՐՐԱԲՅԱՆ) **38**

Սպանդարյան հեկ-ը եւ Սպանդարյան ջրամբարը 56

Տաթևի հիդրոէլեկտրակայանում (ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ) 57

Տաթևի հեկ-ն արդիականացվում է (ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ) 58

Օրվա կարգավորման ջրավազանը, որ գտնվում է Խոտ գյուղի մերձակայքում 59

Տաթևի հիդրոէլեկտրակայանի հիմնական կառույցներից մեկը՝ գլխամասային կառույցը՝ Շամբի ջրամբարը՝ «Մարգարտաձաղիկ» ջրթափով 60

<h1>Այունյաց Երկիր</h1>	<p>📍 3301, Այունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:</p>	<p>☎ (+374 91) 45 90 47 (+374 77) 45 90 47</p>	<p>✉ syuniacyerkir@mail.ru www.syuniacyerkir.am</p>
	<p>ՀԻՆԱՊԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՔ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:</p> <p>Գլխավոր խմբագիր՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ</p>	<p>Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում:</p> <p>Հղումը «Այունյաց երկրին» պարտադիր է: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:</p>	<p>Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2: Ծավալը՝ 7.5 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 500:</p> <p>Ստորագրված է տպագրության 26.07.2021թ.:</p>

Շամբի հիդրոէլեկտրակայան



Լուսանկար՝ Արամ Արեփեցյանի



Լուսանկար՝ Արամ Արեփեցյանի

Որոտանի կասկադի երկրորդ, ամենահզոր կայանը: Գործարկվել է 1976-ին: Կասկադի առաջին հիդրոհանգույցից՝ Սպանդարյանի ՅԷԿ-ից դուրս եկող Որոտան գետի ջրերը ստեղծում են Անգեղակոթի՝ 3,4 մլն մ3 տարողության ջրամբարը, որտեղից 10,5 կմ երկարության անճշումային թունելով այդ ջրերն առքերվում են Սիսիան գետի հովիտը: Այստեղ 69 մ բարձրության հողե պատվարով դիմարվող

Որոտան և Սիսիան գետերի, Շաբիի աղբյուրների հոսքերից ստեղծվում է 96 մլն մ3 տարողության Թոլորսի ջրամբարը: Ջրամբարից խորքային ջրընդունիչով 6,9 կմ երկարության ճշումային թունելով ջուրն առքերվում է Շամբի ՅԷԿ-ի ուժային հանգույցը: Ճշումային կառույցները հիդրավլիկական հարվածներից պահպանելու համար դերիվացիոն թունելի վերջում նախատեսված է հավասարեցման ռեզերվուար:

Կայանի շենքում տեղադրված են 171 հազ. կվտ ընդհանուր հզորությամբ 2 հիդրոագրեգատ: Կայանի էլեկտրաէներգիայի միջին տարեկան արտադրանքը 330 մլն կվտ.ժ է: Կայանին կցակառուցված է 220/110 կվ բարձրացնող ենթակայանը: Շամբի հիդրոէլեկտրակայանի աշխատանքներն ավտոմատացված են:
Ռ. ՄԱԼԽԱՉԱՆ
ՀԱՅ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ, ՀԱՏՈՒ 8,
ԷՋ 440



Լուսանկար՝ Արամ Արեփեցյանի



Լուսանկարներ՝ Արամ Արեխցյանի



Սպանդարյանի հեկը

Հիդրոէլեկտրակայանն ունի երկու ագրեգատ: Հաշվարկային հզորությունը՝ 76 ՄՎտ, հաշվարկային ելքը՝ 30,0 մետր խորանարդ վրկ, հաշվարկային ճնշումը՝ 300 մ, էլեկտրաէներգիայի տարեկան արտադրանքը՝ 170 մլն կՎտ ժամ:



Լուսանկարներ՝ Արամ Արեխցյանի



Սպանդարյանի ջրամբարը



Լուսանկարը՝ Արամ Արեխցյանի

գտնվում է ՀՍՄՀ Սիսիանի շրջանում, Որոտան գետի վրա, շրջկենտրոնից մոտ 35 կմ հս-արմ.: Սպանդարյանի հեկի գլխամասային ջրամբարն է: Ունի 7 կմ երկարություն, 2,5-3 կմ լայնություն, 73 մ խորություն: Պատվարը հողալիցքային է՝ ավազակավային միջուկով, ունի 89

մ բարձրություն, 315 մ երկարություն, կատարային մասում՝ 10 մ լայնություն: Ջրամբարի հայելու մակերեսը 10,8 կմ² է, որից տարեկան 27 մլն մ³ ջուր տրվում է 3900 հա հողատարածություն ոռոգման և 16 հազ. հա հողատարածության ջրապահովվածության համար: Որոտան-Արփա

ջրատար թունելը շահագործման հանձնվելուց հետո ջրամբարից 165 մլն մ³ ջուր տեղափոխվելու է Կեչուտի ջրամբար, ապա՝ Սևանա լիճ:

Ս. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ
ՀԱՅ ՀԱՆՐԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՏՈՐ 11, Էջ 54



▲ Ռեգիստրացիոն սրահ

թիվ 3 տուրբինա ▼



▲ Փեներատորայի հարկ



▲ 110 կՎ բաց բաշխիչ սարքավորումներ



◀ Մեքենայական սրահ

ՏԱԹԱԻ
ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐՈՎ
ԿԱՅԱՆՈՒՄ



▶ Թիվ 3 հիդրոգեներատորի Նորոգում «ՔոնթրոլԳրափի» աշխատակիցների կողմից



▶ Թիվ 3 հիդրոտուրբինի Նորոգում և կարգաբերում «Վոյտ» ընկերության աշխատակիցների մասնակցությամբ



Անցած հինգ տարում Որոտակի հեկտրի համալիրում կատարվել է մոտ 70 սլն դուարի ներդրում, ինչի շնորհիվ բարելավվել, արդիականացվել է արտադրությունը:

ՏԱԹԵՎ ՉԵՎ-Ն ԱՐԴԻԱԿԱՆԱՑՎՈՒՄ Է



Լուսանկարը՝ Արամ Արեխցյանի

Օրվա կարգավորման ջրավազանը, որ գտնվում է Խոտի գյուղի մերձակայքում

Տաթևի ջրամբարից կամ Շամբի ջրամբարից ոչ ճնշումային թունելով՝ 18.4 կմ, ջուրը տեղափոխվում է Խոտի օրվա կարգավորման ջրավազան՝ տարողությունը՝ 85 հազար խորանարդ մետր:

Օրվա կարգավորման ջրավազանից 1888 մ ճնշումային խողովակաշարով ջուրն ուղղվում է դեպի Տաթև հեկ, որտեղ էլեկտրաէներգիա արտադրելով՝ ջուրն առանց որակական և քանակական լուրջ փոփոխություն կրելով՝ ուղղվում է Որոտան գետի հուն:



Լուսանկարը՝ Արամ Արեխցյանի



Sաթևի հիդրոէլեկտրակայանի հիմնական կառույցներից մեկը՝ գլխամասային կառույցը՝ Շամբի ջրամբարը՝ «Մարգարտաձաղիկ» ջրթափով

Լուսանկարները՝ Արամ Արեխյանի

